ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑՈՒ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ



9

ՎԱՐԴԱՆ ԵՊՍ. ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ, ՎԱՐԴԱՆ ՂԱՆԴԻԼՅԱՆ,
ԱՇՈՏ ՂՈՒԿԱՍՅԱՆ

ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑՈՒ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

9–ՐԴ ԴԱՍԱՐԱՆ

ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ Է ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ

ՎԵՐԱՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ

2018

ՀՏԴ 373.167.1:24 (075.3)
ԳՄ Դ86 g72
Հ 282

Դասագրքի խմբագրական և հեղինակային կազմը

Խմբագիր-հեղինակներ՝

Վարդան եպիսկոպոս Նավասարդյան
Վ. Ս. Ղանդիլյան. *պատմաբան*
Ա. Ա. Ղուկասյան. *պատմաբան*

Հայոց եկեղեցու պատմություն: Հանրակրթ. դպր. 9-րդ դաս. դասագիրք
Հ 282 / Վ. Ղանդիլյան և ուրիշներ. - Եր., «Տիգրան Մեծ», 2018: - 120 էջ:

ՀՏԴ 373.167.1:24 (075.3)
ԳՄԴ 86 g72

ISBN 978-99941-0-552-6

© Հեղինակային խումբ, 2018
© «Տիգրան Մեծ», 2018
© ԴՏՀՏՇՀ, 2018 թ.

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Պատանի՛ բարեկամներ,

Դուք արդեն ուսումնասիրել եք Հայոց եկեղեցու պատմության միջնադարյան շրջանը: Ծանոթանալով Հայոց եկեղեցու սկզբնավորման և կայացման ընթացքին, որն անխզելիորեն կապված է հայրենիքի և հարազատ ժողովրդի պատմության հետ, դուք, անկասկած, առավել ամբողջական գիտելիքներ ձեռք բերեցիք հայոց պատմության վերաբերյալ, գտաք ձեզ հուզող բազմաթիվ հարցերի պատասխանները:

Այժմ դուք հնարավորություն եք ստանում ուսումնասիրելու Հայոց եկեղեցու պատմության XIX դարի սկզբներից մինչև մեր օրերն ընկած ժամանակաշրջանը:

Այս շրջանում էլ ավելի է ամրապնդվում Մայր Աթոռ Ս. Էջմիածինը՝ որպես բովանդակ հայությանն իրար շաղկապող համազգային հոգևոր կենտրոն:

Պետականության բացակայության պայմաններում եկեղեցին շարունակում է մի կողմից ղեկավարել հայության ազգային-հոգևոր և կրթամշակութային կյանքը հայրենիքում ու գաղթավայրերում, մյուս կողմից՝ գործուն քայլեր ձեռնարկել հայկական պետականությունը վերականգնելու ուղղությամբ:

Հայոց եկեղեցու հայրապետները եռանդուն գործունեություն են ծավալում պաշտպանելու հայ ժողովրդի իրավունքները միջազգային ատյաններում, հանդես են գալիս ազատագրական պայքարի կոչով, ընդվզում Օսմանյան կայսրության հայաջինջ և հայերին ռուսացնելու ցարիզմի քաղաքականության դեմ:

XIX դարի վերջին սկսված ազատագրական կռիվներին ակտիվորեն մասնակցում է նաև հայ հոգևորականությունը: Բազմաթիվ

հոգևորական ֆիդայիներ զենքը ձեռքներին մարտնչում են թուրք և քուրդ հրոսակների դեմ: Եկեղեցին իր ժողովրդի հետ էր թուրքական իշխանությունների կողմից հայերի նկատմամբ գործադրված ցեղասպանության ծանր ու ողբերգական տարիներին: Թուրքական յաթաղանին զոհ գնացին նաև հազարավոր հոգևորականներ:

Հայոց եկեղեցին օրհնեց անկախ պետականության վերականգնումը 1918 թվականին: Սակայն Առաջին Հանրապետության անկումից հետո բոլշևիկյան իշխանության տարիներին եկեղեցին ենթարկվեց հալածանքների ու բռնությունների: Քանդվեցին և փակվեցին բազմաթիվ եկեղեցիներ, հալածվեցին հարյուրավոր հոգևորականներ, սպանվեց Հայոց կաթողիկոսը:

Այս փորձություններից Հայոց եկեղեցին դուրս եկավ պատվով: XX դարավերջին Արցախյան ազատամարտին և Հայոց անկախ պետության վերականգնմանն իր կարևոր մասնակցությամբ ազգային եկեղեցին շարունակում է իր առաքելությունը Մայր հայրենիքում և սփյուռքում:



ԳԼՈՒԽ 1 ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԻՆ XIX ԴԱՐԻ ՍԿԶԲԻՑ ՄԻՆՉԵՎ 1860-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԸ

1. ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԻՆ XIX ԴԱՐԻ ՍԿԶԲԻՆ

Ռուսաստանը և Հայոց եկեղեցին

XIX դարի սկզբին Անդրկովկասը դառնում է մեծ տերությունների հակասությունների կիզակետ (Ռուսաստան, Անգլիա, Ֆրանսիա, Պարսկաստան, Թուրքիա)։ Ռուսական կայսրությունը ձգտում էր գրավել Անդրկովկասը։

Ցարական կառավարությունն իր քաղաքական ծրագրերում առանձնահատուկ տեղ էր հատկացնում Հայոց եկեղեցուն։ Ռուսական պետական և քաղաքական գործիչները քաջ գիտակցում էին Հայոց եկեղեցու նշանակալից դերը հայ ժողովրդի կյանքում։ Հայոց եկեղեցին մեծ հեղինակություն էր վայելում ժողովրդի բոլոր խավերի մեջ և լուրջ ազդեցություն ուներ նրանց վրա։ Անկախ պետականության կորստից հետո եկեղեցին, որպես միակ համազգային հաստատություն, իրականացնում էր պետականության որոշ գործառույթներ։ Նա էր կարգավորում հարաբերությունները պարսկական և թուրքական իշխանությունների հետ, գլխավորում հայ ժողովրդի ազատագրական պայքարը, քաղաքական բանակցությունների մեջ մտնում հարևան և հեռավոր պետությունների հետ։ Եկեղեցին լուծում էր հայ ժողովրդի ներքին կյանքին, երկրի տնտեսությանը՝ արհեստներին ու առևտրին վերաբերող շատ հարցեր։

Հատկապես մեծ էր Մայր Աթոռ Ս. Էջմիածնի դերը հայ ժողովրդի համախմբման գործում։ Կաթողիկոսությունը տարբեր երկրներում գործող իր թեմերի միջոցով շաղկապում էր տարանջատված ու աշխարհի տարբեր ծայրերում ապաստան գտած հայությանը։

Հայաստանը և Ռուսաստանը քրիստոնյա երկրներ էին, կապված քրիստոնեական ընդհանուր հավատքով։ Հայոց եկեղեցին և հոգևորականության ճնշող մեծամասնությունն ուներ ռուսական կողմնորոշում։

Արդեն XIX դարի սկզբներին ռուսական կառավարությունը ջանք չէր խնայում, որպեսզի Էջմիածնի գահին բազմեն ռուսական կողմնորոշում ունեցող եկեղեցականներ։ Պարսկական և թուրքական իշխանություններն իրենք էին հատուկ հրամանագրերով հաստատում նորընտիր Հայոց կա-

թողիկոսներին և ցանկանում էին խափանել Ռուսաստանի միջամտությունները:

Դանիել Ա Սուրմառեցին և Սինոդի ստեղծումը

Հովսեփ Արղության-Երկայնաբազուկի մահից հետո կաթողիկոսական աթոռի համար պայքար է ծավալվում Դավիթ և Դանիել եպիսկոպոսների միջև: Դավիթ-Դանիել պայքարում Ռուսաստանը պաշտպանում է Դանիելին:

Ի վերջո, 1807 թ. կաթողիկոս է հաստատվում Դանիել Ա Սուրմառեցին: Այս տարիների ռուս-պարսկական միջամտությունների, հակամարտությունների պատճառով Էջմիածնի միաբանության մեջ առաջացել էին իրար դեմ պայքարող տարբեր խմբավորումներ: Հատկապես պարսիկ պաշտոնյաների միջամտությունները Մայր Աթոռի ներքին կյանքին և կաթողիկոսների գործունեությանն աղետալի չափերի էր հասել: Տիրող խառնակ վիճակը վերացնելու նպատակով Դանիել կաթողիկոսը հրավիրում է մի ժողով, որը ստանում է Սինոդ կամ «Կառավարիչ Ս. Ժողով» անունը: Փաստորեն Սինոդը դառնում է Հայոց եկեղեցու բարձրագույն խորհրդարանը, որը սահմանափակում է կաթողիկոսի իշխանությունը: Այն իր ժողովական որոշումներով, կաթողիկոսի հետ համատեղ, կառավարում էր Հայոց եկեղեցու գործերը՝ նվազագույնի հասցնելով պարսիկ իշխանավորների միջամտությունները:

Մայի Աթոռ Սուրբ Էջմիածին

Այսպիսով՝ XIX դարի սկզբներին Հայոց եկեղեցին, հայտնվելով ծանր քաղաքական ճնշումների մեջ, հոգևոր ու կազմակերպական իմաստով կարողանում է պահպանել իր առաքելությունը հայ ժողովրդի կյանքում: Շուտով վերսկսվում են ռուս-պարսկական պատերազմները, որոնք Մայր Աթոռի առջև նոր խնդիրներ են դնում:

Դանիել Ա Սուրմառեցի (1807-1808)

Հայոց եկեղեցին ռուսական նվաճումների ընթացքում

1828 թ. Արևելյան Հայաստանը գրավելուց հետո Հայոց եկեղեցու հետ կապված հարցերի տնօրինումը գրեթե ամբողջությամբ անցնում է ցարական կառավարությանը:

1810-1830-ական թթ. ռուսական կառավարությունը հաջորդաբար Հայոց կաթողիկոսներ է հաստատում Եփրեմ Ա Զորագեղցուն և Հովհաննես Ը Կարբեցուն: Եփրեմ Ա-ն ջերմ ընդունելության է արժանանում Ալեքսանդր Ի-ի կողմից և նրանից որպես նվեր ստանում վեղարի ադամանդակուռ խաչ:

Եփրեմ Ա Զորագեղցի (1809-1830)

Հաջորդ՝ Հովհաննես Ը Կարբեցի կաթողիկոսի օրոք (1831-1842) Հայաստան է ժամանում Ռուսաստանի կայսր Նիկոլայ Ի-ը: Նա լինում է Էջմիածնում, դիտում գանձատունը, սեղանատունը, դպրոցն ու տպարանը:

Հովհաննես Կարբեցին առաջին կաթողիկոսն էր, ով սկսում է կոչվել թվահամարով՝ Հովհաննես Ը: Այս սկզբունքը տարածվում է ինչպես իրեն նախորդած, այնպես էլ հաջորդ կաթողիկոսների վրա:

Նվիրապետական աթոռները XIX դարի սկզբին

Դժվար է պատկերացնել Հայոց եկեղեցու գործունեությունն առանց նվիրապետական աթոռների: Մեծ էր նրանց դերն ազգապահպանության, ազգային մշակույթի, լեզվի ու ավանդույթների պահպանման, ինչպես նաև ազգային ազատագրական պայքարը կազմակերպելու գործում:

XIX դ. սկզբներին մեծ նշանակություն է ստանում Մայր Աթոռի և Հայոց

եկեղեցու նվիրապետական աթոռների միջև հարաբերությունների վերանայումը և կարգավորումը:

Հատկապես կարևոր էին Մայր Աթոռի և Կ.Պոլսի պատրիարքության հարաբերությունները, որոնք XIX դարի սկզբներից դարձել էին անկանոն, իսկ 1820-ական թվականներին գրեթե խզվել էին: Այս վիճակի հիմնական պատճառն այն էր, որ օսմանյան կառավարությունն ուզում էր թուլացնել Էջմիածնի ազդեցությունը Կ.Պոլսի պատրիարքության վրա, որովհետև Արևելյան Հայաստանում գնալով ուժեղանում էին Ռուսաստանի դիրքերը: Բացի այդ, տվյալ պատմաշրջանում Կ.Պոլսի պատրիարքությունը մյուռոնը ստանում էր Սսից, և եպիսկոպոսներն էլ ձեռնադրվում էին Սսում:

Կ.Պոլսի և թեմերի եկեղեցիներում չէր հիշատակվում կաթողիկոսի անունը՝ որպես Ամենայն Հայոց գահակալի:

Մայր Աթոռի և Կ. Պոլսի պատրիարքության միջև հարաբերությունները կարգավորվում են միայն 1840-ական թվականների կեսերին:

Գյուլիստանի պայմանագրով Ղարաբաղն անցնում է Ռուսաստանին: Հայոց կաթողիկոս Եփրեմ Ա Ձորագեղցին դիմում է ռուսական կառավարությանը՝ կաթողիկոսական այդ աթոռը լուծարելու խնդրանքով: 1815 թ. Գանձասարի կաթողիկոսությունը վերացվում է, և նրա փոխարեն նույն թվականին ստեղծվում է մետրոպոլիտություն: Ղարաբաղի մետրոպոլիտությունը գործում է մինչև 1836 թ. եկեղեցական կանոնադրության ընդունումը:

Մեծ էր նվիրապետության դերն ազգապահպանության, ազգային մշակույթի, լեզվի ու ավանդույթների պահպանման, ինչպես նաև ազգային ազատագրական պայքարը կազմակերպելու գործում:

Գանձասարի վանքի մասին առաջին տեղեկությունը հայտնել է Անանիա Ա Մոկացի կաթողիկոսը (946–968): Վանքի Սբ. Հովհաննես Մկրտիչ եկեղեցին կառուցել է Ներքին Խաչենի տեր և Արցախի իշխանաց իշխան Հասան Ջալալ-Դոլան: Գանձասարը եղել է կաթողիկոսանիստ, ունեցել է հարուստ ձեռագրատուն, դպրանոց: Այնտեղ ստեղծվել են բարձրարժեք ձեռագրեր, կրթվել են հոգևոր գործիչներ, ովքեր նպաստել են տեղի և հարակից շրջանների մշակութային կյանքի զարգացմանը: Գանձասարում էր Խաչենի իշխանների տոհմական դամբարանը:

Աղթամարի կաթողիկոսությունը, որի կաթողիկոսին հաստատում էին այդ կողմերի մահմեդական տիրակալները, երկար վիճաբանություններից հետո՝ XVIII դարի վերջին, ընդունում է Էջմիածնի կաթողիկոսության գերագահությունը: Ժամանակի ընթացքում Աղթամարի կաթողիկոսությունը կորցնում է իր դերն ու նշանակությունը և 1895 թ. դադարում գոյություն ունենալուց: «Ժամանակը բերեց և ժամանակն էլ տարավ այն»,- գրում է Մ. Օրմանյանը:

Սսի կաթողիկոսությունն իր գոյության ընթացքում հաճախ է հակադրվել Հայոց կաթողիկոսությանը, իսկ XVIII դարի 30-ական թվականներից մինչև XIX դարի 60-ական թվականները չի ընդունել նրա գերագահությունը: Հաջորդաբար տիրելով կաթողիկոսական աթոռին՝ Աջապահյանները վերջ են տալիս աթոռակալական կռիվներին ու դժգոհություններին և վարելով հակակաթոլիկ քաղաքականություն՝ պահպանում հայոց ավանդությունները:

XIX դարի առաջին տասնամյակներին Երուսաղեմի հայոց պատրիար-

քության հիմնական հոգսը եղել է պայքարը համաքրիստոնեական սրբատեղիների նկատմամբ հույների և կաթոլիկների ոտնձգությունների դեմ: Երուսաղեմի պատրիարքությունը, ստանալով Կ. Պոլսի հայոց պատրիարքության և հայ ամիրաների, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի նյութական և քաղաքական օգնությունը, կարողանում է պաշտպանել հայոց իրավունքները:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ինչո՞ւ էր ցարական կառավարությունն իր քաղաքական ծրագրերում առանձնահատուկ տեղ հատկացնում Հայոց եկեղեցուն:
2. Ինչ գործառույթներ էր իրականացնում Հայոց եկեղեցին XIX դարի սկզբին:
3. Ո՞վ էր Դանիել Ա Սուրմառեցին, և ինչ գործունեություն է նա ծավալել:
4. Ինչպիսի՞ հարաբերություններ էին հաստատվել Մայր Աթոռի և Նվիրապետական աթոռների միջև XIX դարի սկզբին:

Քննարկենք

1. Ինչ նշանակություն ունեցավ Սինոդի ստեղծումը Հայոց եկեղեցու համար:
2. Ինչպիսի՞ նշանակություն են ունեցել Նվիրապետական աթոռները Հայոց եկեղեցու և հայ ժողովրդի համար:

Բառարան

Վեղար – հայ հոգևորականի զգեստի մաս, սրածայր, որը կրում են գլխին:

Մետրոպոլիտություն, մետրոպոլիտ – նախապես կոչվել է նաև գլխավոր եպիսկոպոս: Եկեղեցու Նվիրապետական դասակարգման երրորդ աստիճանը (պատրիարքից և արքեպիսկոպոսից հետո): Մետրոպոլիտը ավելի լայն իրավասություններից է օգտվել, քան սովորական եպիսկոպոսը: Հայ իրականությունում մետրոպոլիտական է եղել միայն Սյունյաց թեմը:

Firefox https://ebooks.bonee.net/fumf/zqdt/

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԽՈՒՅՐ (ԹԱԳ)

Հովհաննես Ը Կարբեցի (1891-1842)

Հովհաննես Ը Կարբեցի կաթողիկոսը բարեկամական հարաբերություններ է հաստատում Կովկասի կառավարչապետ բարոն Գ. Ռոզենի ընտանիքի հետ: Մի անգամ Ռոզենի կինը, ով ագահ ու արծաթասեր կին էր, համարձակվում է խնդրել կաթողիկոսին, որպեսզի տեսնելու նպատակով իրեն ուղարկի Էջմիածնի գանձերից թանկագին ու շքեղ ակներով զարդարված հայրապետական խույրը (թագը): Հովհաննես կաթողիկոսը չի մերժում նրան և 1834 թ. փետրվարին իր թարգման Մկրտիչ Քարտաշյանի միջոցով այդ գանձն ուղարկում է Թիֆլիս: Վեց ամիս թագը մնում է Ռոզենի կնոջ մոտ: Կաթողիկոսն անհանգստանում է: Երբ թագը վերադարձվում է Էջմիածին, պարզվում է, որ նրա վրայի անգին քարերը փոխարինվել են սովորական ապակիներով: Այդ կեղծիքը Ռոզենի կնոջ համար կատարել էր ակնագործ Կուսիկյանը, որի դիմաց առատ վարձատրություն էր ստացել: Կաթողիկոսը հասկանում է իր անխոհեմ քայլի հետևանքը, բայց հարկադրված լռում է: 1837 թ. հոկտեմբերին, երբ Նիկոլայ Ի-ն այցելում է Էջմիածին, ցանկություն է հայտնում տեսնել գանձարանը և այնտեղ պահվող մեծարժեք թագը: Նկատելով թագի վրա հասարակ ապակիներ՝ նա իր զարմանքն է հայտնում այդ կապակցությամբ: Հովհաննես կաթողիկոսն այլևս չի կարողանում թաքցնել եղելությունը և ամեն ինչ պատմում է ցարին: Նիկոլայ Ի-ը Պետերբուրգ վերադառնալուց հետո Ռոզենին ազատում է Կովկասի կառավարչապետի պաշտոնից:

12 von 122 16.02.2021, 11:19

2. ԱՐԵՎԵԼՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԻԱՑՈՒՄԸ ՌՈՒՍԱՍՏԱՆԻՆ: ՆԵՐՍԵՍ Ե ԱՇՏԱՐԱԿԵՑԻ

XIX դարի սկզբներին հայ հասարակական շրջաններում վերստին արծարծվում է հայկական պետականության վերականգնման գաղափարը: Հայոց եկեղեցին անում էր ամեն ինչ՝ օր առաջ ազատագրված տեսնելու հայրենիքը: Այդ ժամանակաշրջանի հայ ազատագրական շարժման ամենաականավոր գործիչը **Ներսես Աշտարակեցին** էր:

Ներսես Աշտարակեցի: Աշտարակեցու գործունեությունը 1826-1828 թթ.

Ներսես Ե Աշտարակեցի (1843-1857)

Ներսես Աշտարակեցին (Շահ-Ազիզյան) ծնվել է 1770 թ. Աշտարակ գյուղում, սովորել է Մայր Աթոռի Ժառանգավորաց դպրոցում և ստացել հոգևոր կոչում: Անդամակցում է Նորաստեղծ Սինոդին և ազդեցիկ դիրք գրավում Էջմիածնի հոգևորականության մեջ: Գործուն մասնակցություն է ունենում 1804-1813 թթ. ռուս-պարսկական և 1806-1812 թթ. ռուս-թուրքական պատերազմներին՝ նպաստելով Մայր Աթոռի հետ ցարական կառավարության քաղաքական կապերի ամրապնդմանը:

Նշանակվելով Վրաստանի հայության հոգևոր առաջնորդ, Ներսես արքեպիսկոպոսը տեղափոխվում է Թիֆլիս: Այստեղ նա ձեռնամուխ է լինում բարեկարգելու իր խնամքին հանձնված թեմը և Թիֆլիսը դարձնելու հայության մտավոր կենտրոն: Նրա ջանքերով 1824 թ. բացվում է հայկական դպրոց, որը հետագայում կոչվում է Ներսիսյան: Նորաբաց դպրոցում հիմնվում է նաև տպարան: Սկիզբ է առնում հրատարակչական գործը:

1826-1828 թթ. ռուս-պարսկական պատերազմի առաջին օրերից սկսած Ներսես Աշտարակեցին կազմակերպչական մեծ աշխատանք է կատարում հայության մեջ: Պատերազմի սկզբին նա մի հայրենասիրա-

Ռուս-պարսկական պատերազմ

կան կոչ է ուղղում բովանդակ հայ ժողովրդին, որով հորդորում է զենք վերցնել և ռուս զինվորների հետ ուս ուսի տված կռվել թշնամու դեմ: Թիֆլիսում կազմակերպելով հայկական կ՝ ել, կ՝ ջոկատներ՝ մասնակցում է ռուսական զորքերի Երևանյան երրորդ արշավանքին: Ռուսական զորքերի կողմից Երևանը գրավելուց մի քանի օր անց ստեղծվում է Երևանի ժամանակավոր վարչություն, որի կազմի մեջ ընդգրկվում է նաև Ներսես Աշտարակեցին: Նրա ջանքերով անմիջապես կազմվում է 1000 հոգուց բաղկացած զորամաս, որը ռուսական զորքերի հետ պետք է ապահովեր կարգ ու կանոնը երկրում:

Ներսես արքեպիսկոպոսին՝ ռուսական զորքերին ու իշխանություններին ցույց տված ծառայությունների համար, Կովկասում ռուսական բանակի գլխավոր հրամանատար Պասկևիչի միջնորդությամբ շնորհվում է Ս. Ալեքսանդր Նևսկու շքանշան:

Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միացվելուց հետո Աշտարակեցու գլխավոր հոգսը դառնում է պարսկահայերի ներգաղթի իրագործումը: Այդ նպատակով Ներսեսը հատուկ պատվիրակների միջոցով բացատրական լայն աշխատանք է ծավալում պարսկահայերի շրջանում՝ հորդորելով նրանց գաղթել Արևելյան Հայաստան:

Ռուս-պարսկական պատերազմից հետո գեներալ Ի. Պասկևիչը հալածանքներ է սկսում Հայաստանի ինքնավարության համար պայքարող հայ գործիչների դեմ, որոնցից ամենանշանավորը Ներսես Աշտարակեցին էր: Անտեսելով Աշտարակեցու մատուցած ծառայությունները՝ Պաս-

կևիչն ամեն ինչ անում է նրան ասպարեզից հեռացնելու համար, ինչի հետևանքով մայիսին Աշտարակեցին որպես թեմի առաջնորդ ուղարկվում է հեռավոր Բեսարաբիա: Այս քայլով ցարական իշխանությունները ցանկանում էին անվանի հոգևորականին հեռու պահել հայոց պետականության վերականգնման համար մղվող պայքարից:

Ներսես Աշտարակեցին Հայոց կաթողիկոս

Ներսես Ե-ի ընտրությունը հաստատող Նիկոլայ Ի-ի հրամանագիրը

Ցարիզմը մի շարք վարչատարածքային փոփոխություններից հետո ի վերջո 1849 թ. ստեղծում է Երևանի նահանգը: Այս քաղաքականության նպատակն էր Հայաստանում վերջնականապես հաստատել ռուսական վարչաձև և սահմանափակել Հայոց եկեղեցու իրավասությունները:

1842 թ. մահանում է Հովհաննես Ը Կարբեցի կաթողիկոսը: 1843 թ. ապրիլին Էջմիածնում Ամենայն Հայոց կաթողիկոս է ընտրվում Ներսես Ե Աշտարակեցին (1843-1857): Նույն թվականին Ներսեսի կաթողիկոսությունը հատուկ հրովարտակով հաստատում է Նիկոլայ I ցարը: Ցարի հրավերով 73-ամյա կաթողիկոսը մեկնում է Սանկտ Պետերբուրգ: Ռուսաց մայրաքաղաքում նա հյուրընկալվում է Լազարյանների մոտ: Այստեղ Ներսես կաթողիկոսը հանդիպում է Նիկոլայ I-ի հետ և արժանանում շքեղ ընդունելության: Նիկոլայ I-ը նորընտիր կաթողիկոսին պարգևատրում է ռուսական բարձրագույն շքանշանով:

Պետերբուրգում ռուս հոգևորականությունը փորձում է կաթողիկոսի հետ քննարկել հայ-ռուս եկեղեցիների հնարավոր միության հարցը: Ներսես Աշտարակեցին ռուսական Սինոդին գրավոր ներկայացնում է Հայոց եկեղեցու դավանանքը՝ մեկ անգամ ևս մերժելով Քաղկեդոնի ժողովն ու նրա որոշումները:

Ներսես Ե կաթողիկոսը և արևմտահայությունը: Ներսես Աշտարակեցու հոգևոր-մշակութային գործունեությունը

Ներսես Ե Աշտարակեցուն հաջողվում է կարգավորել հարաբերությունները Կ. Պոլսի պատրիարքության հետ: 1844 թ. Կոստանդնուպոլսի նորընտիր Մատթեոս պատրիարք Չուխաճյանը հրահանգում է արևմտահայ բոլոր եկեղեցիներում հիշատակել Ամենայն Հայոց հայրապետի

անունը: Ներսես Աշտարակեցին հայրապետական կոնդակով օրհնում է պատրիարքին և հայտնում իր գոհունակությունը:

Այսպիսով, վերականգնվում են կանոնավոր հարաբերությունները Մայր Աթոռի և Կ. Պոլսի պատրիարքության միջև:

Ներսես կաթողիկոսը զբաղվել է նաև հոգևոր-մշակութային բեղմնավոր գործունեությամբ: Նրա կատարած գործերից հատկանշական է եկեղեցական ծխական ուսումնարանների վերաբացումը, որոնք շուտով դառնում են աճող սերնդի ազգային դաստիարակության և հայեցի կրթության կարևոր կենտրոններ:

Ներսես Աշտարակեցին վախճանվում է Թիֆլիսում 1857 թ.: Հայրապետի դին հանդիսավոր պայմաններում բերվում է Մայր Աթոռ և ամփոփվում զանգակատան հարավային կողմում:

Ներսես Աշտարակեցի կաթողիկոսի տապանաքարի վրա փորագրվում է «Պաշտպան հայրենեաց» մակագրությունը:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ո՞վ էր Ներսես Աշտարակեցին:
2. Ե՞րբ և ո՞ւմ ջանքերով է բացվել Թիֆլիսի Ներսիսյան դպրոցը:
3. Ինչպիսի՞ մասնակցություն է ունեցել Ներսես Աշտարակեցին 1826-1828 թթ. ռուս-պարսկական պատերազմին:
4. Ե՞րբ է Ներսես Աշտարակեցին ընտրվել կաթողիկոս: Ներկայացրեք Ներսես կաթողիկոսի գործունեությունը:
5. Ե՞րբ և ո՞ր պատրիարքի օրոք կարգավորվեցին Մայր Աթոռի և Կ. Պոլսի պատրիարքության փոխհարաբերությունները:
6. Որտե՞ղ է ամփոփված Ներսես Աշտարակեցին և ի՞նչ է փորագրված նրա տապանաքարի վրա:

Քննարկենք

1. Ինչո՞ւ ռուս-պարսկական պատերազմից հետո Պասկևիչը հալածանքներ սկսեց Ներսես Աշտարակեցու դեմ:
2. Գնահատեք Ներսես Աշտարակեցու դերը Հայոց եկեղեցու և հայ ժողովրդի կյանքում:

Firefox https://ebooks.bonee.net/fumf/zqdt/

ՆԵՐՍԵՍ ԱՇՏԱՐԱԿԵՑՈՒ ԹՈՒՂԹԸ

Ներսես Աշտարակեցի
Նկարիչ՝ Հ. Հովնաթանյան

Պատմում են, որ Ներսեսը մինչև կյանքի վերջին րոպեն ձախ ծոցի գրպանում մի թուղթ էր պահում, որից չէր բաժանվում գիշեր-ցերեկ. թե ինչ բովանդակություն ուներ այդ թուղթը, ոչ ոք չգիտեր, որովհետև նա ոչ ոքի ցույց չէր տալիս: Բայց երբ Բեսարաբիայից վերադարձավ և մտերիմների հետ խոսք ու զրույց էր լինում Պասկևիչի ու անցած գնացած անցքերի մասին, ծերունի հայրապետը ձեռքը դնում էր ձախ ծոցի վրա և խորին հառաչանքով ասում. «Պասկևիչը ահա այստեղ է կաշկանդված»: Իրավ, արդյո՞ք Պասկևիչի գրությունն էր այդ, մեզ հայտնի չէ: Գիտենք միայն, որ այդ մասին տեղյակ էին երկրամասի փոխարքաները՝ Վորոնցովը, Մուրավյովը և իշխան Բարատինսկին: Շատերը հետամուտ էին ձեռք բերելու այդ գրությունը, բայց Ներսեսը հանկարծակի վախճանվեց:

Պատմում են նաև, որ նրա մահից հետո այդ թուղթն ընկնում է Սարգիս եպիսկոպոս Հասան-Ջալալյանի ձեռքը: Վերջինս այն վաճառում է ռուսներին:

Ինչևիցե, բայց եթե իրավ կար այդպիսի թուղթ և այն էլ Պասկևիչի ձեռքով գրված, դա հավանական է, թեև, պնդում ենք, ոչ հաստատ: Շատ հնարավոր է, որ պատերազմ սկսելուց առաջ փառքին հետամուտ Պասկևիչը ինքնագլուխ որևէ խոստում լինի արած Ներսեսին՝ Հայաստանի ինքնավարության մասին՝ նրան ավելի ոգևորելու համար: Եթե մի այդպիսի խոստում կար, և Ներսեսը պատերազմը վերջանալուց հետո պահանջում էր դրա կատարումը, ու Պասկևիչը չէր կարողանում կատարել, այն ժամանակ հասկանալի է, թե ինչու էր նա այնպես գրգռվում և ձգտում հեռացնել Ներսեսին Կովկասից:

Ն.Բ. Սարուխանյան. Արևելյան Հայաստանի՝ Ռուսաստանին միացման պրոբլեմը մինչհեղափոխական հայ պատմագրության մեջ:

17 von 122 16.02.2021, 11:19

3. ՑԱՐԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑՈՒ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ

Արևելյան Հայաստանի՝ Ռուսաստանի տիրապետության տակ անցնելուց հետո երկրամասի կառավարումն ամբողջությամբ կենտրոնանում է ցարական իշխանության տեղական մարմինների ձեռքում: Ռուսաստանի հովանու ներքո ինքնավարություն ստեղծելու հայ գործիչների հույսերը չեն իրականանում: Նիկոլայ I-ը մերժում է ինքնավար Հայաստան ստեղծելու վերաբերյալ հայ գործիչների կողմից պատրաստված նախագծերը: Դրա փոխարեն նրա հրամանով 1828 թ. ստեղծվում է Հայկական մարզը: Հայոց եկեղեցին, որպես համազգային կառույց, զրկվում է երկրի կառավարմանը մասնակցելու հնուց եկող իր իրավասություններից:

Կանոնադրության երկու նախագծերը

Շուտով առաջանում են հակասություններ ցարական կառավարության և Հայոց եկեղեցու միջև: Անհրաժեշտ էր մշակել Հայոց եկեղեցու և ռուսական կառավարության հարաբերությունները կարգավորող կանոնադրություն: Այդ նպատակով 1829 թ. դեկտեմբերին գեներալ Պասկևիչը Թիֆլիսում ստեղծում է հայազգի գործիչներից և ցարական աստիճանավորներից կազմված գաղտնի հանձնաժողով: Հանձնաժողովն աշխատում է ավելի քան երեք ամիս և մշակում կանոնադրության մի նախագիծ, որը հայտնի է «Թիֆլիսյան» անունով: Այն բաղկացած էր 2 գլխից և 119 հոդվածից, որոնք վերաբերում էին կաթողիկոսի և հոգևորականության իրավունքներին, թեմերին ու թեմական առաջնորդներին, մենաստաններին և այլն: Նախագիծը 1830 թ. մարտի վերջին ուղարկվում է Պետերբուրգ: Սակայն այն հավանության չի արժանանում: Նախագիծը չէր համապատասխանում ոչ ցարական բարձրագույն իշխանության ցանկությանը և ոչ էլ Հայոց եկեղեցու վարչական ոգուն: Հաշվի չէին առնվել նրա հնավանդ ծեսերն ու կանոնները:

Պետերբուրգում կանոնադրությունը ենթարկվում է մանրազնին քննության, և փաստորեն ստեղծվում է դրա նոր տարբերակը: Այստեղ իրենց լուծումն են ստանում ցարական իշխանության և Հայոց եկեղեցու շահերից բխող մի շարք կարևոր խնդիրներ: Կանոնադրության մեջ մտցվում է եկեղեցական արարողությունների ժամանակ ցարի անվան հիշատակությունը: Բացի այդ, ռուսական ցարիզմը Մայր Աթոռը ճանաչում է որպես աշխարհի բոլոր կողմերը ցրված հայության հոգևոր կենտրոն:

1835 թ. կանոնադրության նախագիծն ուղարկվում է Կովկասի կառա-

վարչապետ Գ. Ռոզենին: Վերջինս նախագծի մի քանի հոդվածների վերաբերյալ Հովհաննես Ը Կարբեցի կաթողիկոսի հետ խորհրդակցելուց և ուղղումներ ու ճշտումներ կատարելուց հետո հետ է ուղարկում Ս.Պետերբուրգ: 1836 թ. մարտի 11-ին Նիկոլայ Ի-ը հատուկ հրամանագրով հաստատում է Հայոց եկեղեցու կանոնադրությունը, որը հայտնի է «Պոլոժենիե» անունով:

Եկեղեցական կանոնադրության բովանդակությունը

Կանոնադրությունը բաղկացած էր 10 գլխից և 141 հոդվածից: Դրանք վերաբերում էին Հայոց եկեղեցու ընդհանուր իրավունքներին ու պարտականություններին, կաթողիկոսին ու Սինոդին, թեմերին ու թեմական առաջնորդներին, վանքերին ու հոգևոր դպրոցներին, եկեղեցական գույքին ու եկամուտներին և այլն:

Կանոնադրության համաձայն՝ Հայոց կաթողիկոսին ընտրում էր ազգային-եկեղեցական ժողովը, որը կազմված էր ամբողջ հայության ներկայացուցիչներից: Յուրաքանչյուր թեմ ընտրում էր մեկական հոգևորական և աշխարհական պատգամավոր: Մայր Աթոռի միաբանությունն ընտրությանը մասնակցում էր 7 ձայնով:

Սինոդի բոլոր 8 անդամները նույնպես համարվում էին պաշտոնական պատգամավորներ: Մայր Տաճարում գումարված ազգային-եկեղեցական ժողովն առաջարկում էր կաթողիկոսական երկու թեկնածու, որոնց անունները պաշտոնապես ներկայացվում էին ցարին, որը նրանցից մեկին հաստատելու էր կաթողիկոս:

Ս. Հռիփսիմեի տաճարը

Պահպանվում էր Հայոց կաթողիկոսի իրավունքներն ամբողջ հայության նկատմամբ, բայց ռուսական կառավարության հսկողության ներքո: Զուտ դավանաբանական հարցերում կաթողիկոսն ինքնուրույն էր: Տնտեսական, դատական և մյուս հարցերը ենթակա էին Սինոդին, որի նախագահը կաթողիկոսն էր: Եկեղեցական կանոնադրությամբ Ռուսաստանի տիրապետության ներքո գտնվող Արևելյան Հայաստանը և հայկական շրջանները բաժանվում էին 6 հոգևոր թեմերի՝ Երևանի, Ղարաբաղի, Վրաստանի-Իմերեթիայի, Շիրվանի, Բեսարաբիայի-Նոր Նախիջևանի և Աստրախանի:

Հայոց եկեղեցու տնօրինությանն էին թողնվում դպրոցները և կրթամշակութային այլ հաստատություններ, ծննդյան, ամուսնության և թաղման գործերը:

Եկեղեցական կանոնադրությունը միանշանակ չի ընդունվում հայ ժողովրդի կողմից: Ռուսահայերի մի մասն այն ընդունում է մեծ ոգևորությամբ, քանի որ այն վերջ էր տալու եկեղեցու ներսում եղած հակասություններին: Սակայն հայաշատ մի շարք կենտրոններից բողոքներ են հնչում այդ կանոնադրության որոշ հոդվածների դեմ, որոնք սահմանափակում էին Հայոց կաթողիկոսի և ժողովրդի իրավունքները: Որոշ հոդվածների դեմ էր նաև կաթողիկոս Հովհաննես Կարբեցին: Բողոքներ են լսվում նույնիսկ հեռավոր Հնդկաստանից:

Իր թերություններով հանդերձ՝ 1836 թ. եկեղեցական կանոնադրությունը կարգավորեց ցարական կառավարության և Հայոց եկեղեցու հարաբերությունները և գործեց մինչև 1917 թ.:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ինչպիսի՞ վիճակում էր Հայոց եկեղեցին 1830-ական թվականների սկզբին:
2. Ինչո՞ւ չհաստատվեց կանոնադրության «Թիֆլիսյան» տարբերակը:
3. Ե՞րբ ընդունվեց Հայոց եկեղեցու կանոնադրությունը, և ի՞նչ անունով է այն հայտնի:
4. Ի՞նչ բովանդակություն ուներ եկեղեցական կանոնադրությունը:
5. Հայ ժողովուրդն ինչպե՞ս ընդունեց կանոնադրությունը:

Քննարկենք

1. Ինչո՞ւ ցարական կառավարությունը մշակեց և ընդունեց եկեղեցական կանոնադրություն:
2. Ինչպիսի՞ նշանակություն ունեցավ այն Հայոց եկեղեցու համար:

Լրացուցիչ նյութ

ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ԸՍՏ «ՊՈԼՈԺԵՆԻԵ»-Ի

«Պոլոժենիե»-ի երկրորդ գլխի համաձայն՝ Հայոց կաթողիկոսը ճանաչվում էր Հայոց եկեղեցու գլխավոր կառավարիչ և տեսուչ, ով պահպանում և վայելում է իր հին տիտղոսները, դավանական ու պաշտամունքային խնդիրների վերաբերյալ վերջնական վճիռ արձակելու իրավունքը: Նա է օրհնում մյուռոնը և անվճար բաժանում այն, ձեռնադրում եպիսկոպոսներ, վարձատրում եկեղեցականներին, հրատարակում ընդհանրական թղթեր, ըստ իր հայեցողության տնօրինում վանական գործերը: Սինոդը պետք է միշտ գործակից լինի նրան: Կաթողիկոսին արգելվում է իշխանությունը, լիազորությունն ու իրավունքները փոխանցել ուրիշ ատյանի կամ անձի:

«Պոլոժենիե»-ն փաստորեն կրճատում էր Ամենայն Հայոց կաթողիկոսի իրավասությունները: Կաթողիկոսն արտասահմանի հայ համայնքների հետ կարող էր հաղորդակցվել միայն ռուսական արտաքին գործերի նախարարության միջոցով: Բոլոր որոշումներն ու կանոնները ենթակա էին պետական հաստատման: Եկեղեցու բոլոր տեղեկագրերը, հիշատակագրերը, վիճակագրերը, հաշվետվությունները պետք է հաղորդվեին ներքին գործերի նախարարությանը: Թեմական առաջնորդներին նշանակում և ազատում էր «թագավոր-կայսրը», ով սահմանափակում էր կաթողիկոսի իշխանությունը և չենթարկվելու հնարավորություն ստեղծում թեմական առաջնորդների համար:

4. ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԿՅԱՆՔԸ 1820-1860-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

Եվրոպական պետությունների նենգ և խարդախ քաղաքականության հետևանքով 1820-1830-ական թվականներին հայ հոգևոր-եկեղեցական կյանքում տեղի են ունենում իրադարձություններ, որոնք թուլացնում են Հայոց եկեղեցին, հարված հասցնում նրա հեղինակությանն ու ազդեցությանը:

Հայ կաթոլիկ եկեղեցու առանձնացումը և նկրտումները

1827 թ. Օսմանյան կայսրության հայ կաթոլիկները հատուկ գրությամբ դիմում են սուլթանին՝ Հայոց եկեղեցուց անջատվելու և առանձին պատրիարք ու եկեղեցի ունենալու խնդրանքով: Սակայն թուրքական կառավարությունը ոչ միայն մերժում է նրանց խնդրանքը, այլև բռնությունների է դիմում ու աքսորում նրանց: Երկու տարի անց եվրոպական պետությունների միջամտությամբ սուլթանը թույլ է տալիս կաթոլիկ հայերին վերադառնալ իրենց բնակավայրերը: 1829 թ. նրանք ստանում են Կ. Պոլսի հայոց պատրիարքարանից անջատ և ինքնուրույն վարչություն ունենալու իրավունքը: Հայ կաթոլիկներն ընտրում են հոգևոր առաջնորդ:

Արևելյան Հայաստանում ևս կային փոքրաթիվ կաթոլիկ համայնքներ, որոնց շարքերը համալրում են Արևմտյան Հայաստանից այստեղ գաղթած կաթոլիկ հայերը: Նրանք հաստատվում են Ջավախքում, Շիրակում, Տաշիրում, Լոռիում և այլ վայրերում: Նրանք հիմնում են իրենց եկեղեցիները, դպրոցները և հիվանդանոցները:



Հայ կաթոլիկների Սրբոց Նահատակաց Եկեղեցի, Գյումրի

XIX դարի առաջին կեսին փորձեր են արվում հայ կաթոլիկներին Մայր Եկեղեցու հետ միավորելու ուղղությամբ: Դրանցից նշանավոր են 1840-ական թթ. արևմտահայ կյանքում տեղի ունեցած դեպքերը:

Կաթոլիկ վարժարանների շրջանավարտների ջանքերով Կ. Պոլսում ստեղծվում է «Համազգայաց» ըն-

Զմմառի Հայ կաթողիկե եկեղեցին

կերությունը, որի նպատակն էր միավորել Հայոց եկեղեցու հետևորդներին և կաթոլիկ հայերին: Սակայն Կ.Պոլսի կաթոլիկ հայերի պատրիարք Անտոն Հասունյանը, դեմ լինելով այդ ընկերության գործունեությանը, կատաղի պայքար է մղում նրա դեմ: Նրա դրդմամբ Հռոմի պապը նույնիսկ բանադրանքի կոնդակ է գրում՝ ուղղված «Համազգայաց» ընկերության անդամներին ու կողմնակիցներին: Տեսնելով, որ դա էլ չի օգնում, նա դիմում է թուրքական կառավարությանը և խնդրում արգելել «Համազգայաց» ընկերությունը՝ որպես քաղաքական կազմակերպություն: Շուտով ընկերությունը կազմալուծվում է: Այս իրադարձությունը հայ կաթոլիկների մեջ դժգոհություն է առաջացնում Հասունյանի նկատմամբ:

1867 թ. մահանում է կաթոլիկ հայերի ընդհանրական պատրիարքը (նստավայրը գտնվում է Լիբանանի Զմմառի վանքում): Անտոն Հասունյանը առանց կաթոլիկ հայերի հավանությունը ստանալու գնում է Հռոմ, պապից պատրիարքության աստիճան ստանում և հռչակվում կաթոլիկ հայերի առաջնորդ: Նա Լիբանանից աթոռը տեղափոխում է Կ.Պոլիս՝ իրեն ենթարկելով նաև Ասորիքի, Միջագետքի, Փոքր Հայքի, Եգիպտոսի հայ կաթոլիկներին: Անտոն Հասունյանի այս քայլերն առաջ են բերում Կ.Պոլսի կաթոլիկ հայերի և հատկապես նրա լուսավորյալ մասի զայրույթը: Նրանք բողոքում են Հռոմի պապին: Վերջինս պաշտպանում է Հասունյանին և գրում իր հայտնի կոնդակը, որով կաթոլիկ հայերի բոլոր եկեղեցիները, հաստատությունները և ունեցվածքը դրվում է պապական աթոռի իրավասության ներքո, իսկ Հասունյանը հռչակվում է կաթոլիկ հայերի առաջնորդ:

Կաթոլիկ հայերի լուսավորյալ մասը մերժում է պապի կոնդակը: Նրանք կոչվում են հակահասունյաններ, իսկ մոլեռանդներն ընդունում են կոնդակը և կոչվում հասունյաններ: Հակահասունյանները մի դավանագիր են պատրաստում, որով մերժում են Պապի անիրավացի պահանջները: Նրանք կարողանում են իրենց կրոնական իրավունքները պաշտպանել և ստեղծել առանձին պատրիարքություն: Սակայն շուտով հակահասունյանների նկատմամբ թուրքական կառավարության վարած քաղաքականության պատճառով նրանց բոլոր եկեղեցիներն անցնում են Անտոն Հասունյանին: Հակահասունյանների մեծ մասը հուսահատվելով վերադառնում է ազգային եկեղեցու գիրկը, իսկ մնացած փոքր մասը հաշտվում է հասունյանների հետ:

Հայ բողոքական եկեղեցու առաջացումը

Հայ ժողովրդի միասնությանը լուրջ վտանգ էր ներկայացնում նաև բողոքականությունը, որն արևմտահայության և արևելահայութայն մեջ սկզբնավորվում է գրեթե միաժամանակ՝ 1820-ական թվականներին: Բողոքականությունը հայերի մեջ սկսում են քարոզել և տարածել ամերիկյան միսիոներները: Արդեն 1834 թ. հոկտեմբերին Կ. Պոլսի Բերա թաղամասում բացվում է առաջին հայկական բողոքական վարժարանը: Շարժումը գնալով ավելի մեծ ծավալ է ստանում:

Դրանից անհանգստացած՝ Կ. Պոլսի պատրիարքը վճռական միջոցների է դիմում: Նա նախ աքսորում է բողոքական հայ հոգևորականներին, ապա արգելում երեխաներին բողոքական դպրոցներ հաճախելը, ինչպես նաև բողոքականների հետ շփվելը: Սակայն անգլիական դեսպանության ճնշման տակ թուրքական կառավարությունը ստիպում է Հայոց պատրիարքին չխոչընդոտել բողոքականների գործունեությանը: Չնայած դրան՝ պայքարը շարունակվում է նաև հետագայում:

1846 թ. բողոքական հայերը հիմնում են իրենց առաջին (ավետարանական) եկեղեցին: 1850 թ. թուրքական կառավարությունը հատուկ հրամանագրով ճանաչում է բողոքական եկեղեցին՝ որպես հայոց եկեղեցուց անջատ կրոնական համայնք:



Բեյրութի Հայ ավետարանական եկեղեցին

Արևելյան Հայաստանում բողոքականության կենտրոնը Շուշին էր, որտեղ 1823 թ. քարոզչություն էին անում ամերիկյան միսիոներները: Նրանք կարողանում են իրենց կողմը գրավել զգալի թվով հայերի: Բողոքական քարոզիչները Շուշիում բացում են դպրոցներ, տպարաններ, հրատարակում գրքեր:

Մայր Աթոռի բողոքների հիման վրա ցարական կառավարությունը 1835 թ. արգելում է միսիոներների քարոզչությունը հայերի շրջանում: Բողոքականները տեղափոխվում են Շամախի, որը դառնում է նրանց հիմնական կենտրոնը:

Մատթեոս Ա. Կոստանդնուպոլսեցի

Ներսես Աշտարակեցու մահից հետո Էջմիածնում հրավիրված ազգային-եկեղեցական ժողովը Կ. Պոլսի պատրիարքության հետ կապերն ավելի ամրապնդելու նպատակով որոշում է կաթողիկոս ընտրել արևմտահայ եպիսկոպոսներից որևէ մեկին: Առաջադրված երկու թեկնածուներից

Ալեքսանդր Երկրորդ

Ալեքսանդր Երկրորդը Ռուսաստանի կայսրն էր (1855 - 1881): Նրա օրոք Ռուսաստանին միացվեց Կարսը, Արդահանը, Բաթումը և այլն: Կարսի և Արդահանի գրավման շնորհիվ թուրքական տիրապետությունից ազատագրվեց այդ շրջանների հայ բնակչությունը:

Մատթեոս Ա Կոստանդնուպոլսեցի (1858-1865)

Ալեքսանդր II-ը 1858 թ. Հայոց կաթողիկոս է հաստատում Մատթեոս արքեպիսկոպոսին, որը 1844-1848 թթ. եղել էր Կ.Պոլսի հայոց պատրիարքը:

Մատթեոս Ա կաթողիկոսն իր գործունեությունը սկսում է բավական մեծ ոգևորությամբ և զգալիորեն աշխուժացնում ազգային-եկեղեցական կյանքը: Կաթողիկոսը փորձում է բարեկարգել Մայր Աթոռը, կարգավորել վանական ներքին կյանքն ու կենցաղը:

Նա մեծ կարևորություն է տալիս դպրոցական գործին, վերաբացում է Կ.Պոլսի Սկյուտարի հայոց ճեմարանը, հիմնադրում նոր դպրոցներ: Հաստատում է Թիֆլիսի Ներսիսյան դպրոցի կանոնադրությունը, սահմանում ծխական ու թեմական դպրոցների ծրագրերն ու կանոնագրերը: Նրա հանձնարարությամբ կազմվում է Մայր Աթոռի Մատենադարան-ձեռագրատան ձեռագրերի ցուցակը, որը հրատարակվում է Թիֆլիսում:

Մատթեոս Ա-ն փորձում է ընդլայնել Հայոց կաթողիկոսի իրավասությունները: Այդ նպատակով նա կազմում է Հայոց եկեղեցու նոր կանոնադրություն և ուղարկում կառավարության հաստատմանը: Սակայն կանոնադրության հաստատման պատասխանն այդպես էլ չի ստանում:

Մատթեոս Ա Կոստանդնուպոլսեցի կաթողիկոսն իր ժամանակի նշանավոր աստվածաբաններից էր, բազմաթիվ գրքերի հեղինակ է: Առավել հայտնի է «Բարի մարդ և բարի քրիստոնյա» գրքով, որտեղ քննադատում է բողոքականներին և կաթոլիկներին:

Սկյուտարի ճեմարանը

Թիֆլիսի Ներսիսյան դպրոցը

Սկյուտարի ճեմարանը հիմնադրվել է 1838 թվականին Կ. Պոլսի Սկյուտար թաղամասում Երուսաղեմի հայոց միաբանության աջակցությամբ: Ընդմիջումներով գործել է մինչև 1859 թվականը: Ճեմարանում դասավանդվել են հայոց լեզու, գրականություն, պատմություն, աշխարհագրություն, գծագրություն, հողագիտություն, ֆիզիկա, քիմիա, մաթեմատիկա, օտար լեզուներ, քաղաքավարության կանոններ և այլ առարկաներ:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ե՞րբ է Կ. Պոլսի հայոց պատրիարքությունից առանձնացել հայ կաթոլիկ եկեղեցին: Ինչո՞ւ:
2. Ինչպե՞ս ավարտվեցին Հայ առաքելական և Հայ կաթոլիկ եկեղեցիների միավորման փորձերը:
3. Ե՞րբ և ինչպե՞ս է առաջացել հայ բողոքականությունը:
4. Ինչպիսի՞ տարածում գտավ բողոքականությունը հայ ժողովրդի շրջանում:
5. Ե՞րբ է ստեղծվել «Համազգայաց» ընկերությունը և ի՞նչ ծրագրեր ուներ:
6. Ո՞վ էր Անտոն Հասունյանը, և ինչպիսի՞ գործունեություն էր նա ծավալում:
7. Ի՞նչն էր հասունյան և հակահասունյան պայքարի առաջացման պատճառը և ինչպիսի՞ ավարտ ունեցավ այն:
8. Ինչո՞ւ Էջմիածնի համազգային ժողովը որոշեց կաթողիկոս ընտրել արևմտահայ հոգևորականներից:
9. Ի՞նչ գործունեություն ծավալեց Մատթեոս Ա Կոստանդնուպոլսեցի կաթողիկոսը:

Քննարկենք

1. Ինչո՞ւ էր սուլթանը դեմ հայ կաթոլիկների անջատմանը:
2. Ինչ վտանգ էր ներկայացնում բողոքականությունը Հայոց եկեղեցու և հայ ժողովրդի համար:
3. Ինչո՞ւ թուրքական կառավարությունը ճանաչեց հայ բողոքականների համայնքը:
4. Ինչպիսի՞ հետևանքներ ունեցավ կաթոլիկության և բողոքականության տարածումը հայերի մեջ:

Հոնուտի կիրճ

ԳԼՈՒԽ 2 ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑՈՒ ԿՐԹԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ: ՊԱՅՔԱՐ ՌՈՒՍԱՑՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԵՄ (XIX դարի վերջ – XX դարի սկիզբ)

5. ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑՈՒ ԿՐԹԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՁԵՌՆԱՐԿՆԵՐԸ

XIX դարի վերջին քառորդը և XX դարի սկիզբը բախտորոշ շրջան էր հայ ժողովրդի համար: Օսմանյան և ցարական իշխանությունների կողմից իրականացվում էր մի քաղաքականություն, որի նպատակն էր հայության տնտեսական, հասարակական և կրոնական միասնության քայքայումը, հայ ժողովրդի տարբեր հատվածների անջրպետումը: Հարված էր հասցվում նաև Հայոց եկեղեցուն, որովհետև այն դիտվում էր որպես հայեցի կրթության և դաստիարակության, հայ մշակույթի, ավանդույթների, կենցաղի և բարքերի պահպանման համազգային կառույց:

Այս պայմաններում ավելի էր կարևորվում Հայոց եկեղեցու դերը, որը հալածանքներին պատասխանում էր կրթամշակութային աշխույժ գործունեությամբ՝ դրանով իսկ նպաստելով ազգային զարթոնքին, ազգային գաղափարախոսության ձևավորմանը:

Հայոց եկեղեցին կրթության գործի կազմակերպիչ

Գևորգ Դ Կոստանդնուպոլսեցի (1866-1882) կաթողիկոսի նախաձեռնությամբ Էջմիածնում ստեղծված ուսումնական հանձնաժողովը միջոցներ ձեռնարկեց յուրաքանչյուր գյուղում դպրոց բացելու ուղղությամբ: Հրապարակվեցին հայկական ծխական դպրոցների առաջին ընդհանուր կանոնները: Տարրական դպրոցներում ուսման տևողությունը 2-3 տարի էր: Դասավանդվում էին հայոց և ռուսաց լեզուներ, կրոն, երգեցողություն, ինչպես նաև ընդհանուր գիտելիքներ պատմությունից, աշխարհագրությունից, թվաբանությունից և այլ առարկաներից:

1870-ական թվականներից գործում էր դպրոցների նոր տիպ՝ թեմական կամ վիճակային դպրոցը, որտեղ՝ ծխական դպրոցների ծրագրից բացի,

Տարբեր տարիներին Ճեմարանում դասախոսել են Մ. Աբեղյանը, Հ. Աճառյանը, Ե. Թադևոսյանը, Լեոն, Ս. Լիսիցյանը, Ք. Կարա-Մուրզան, Կոմիտասը, Կ. Կոստանյանցը, Ս. Հարությունյանը, Ա. Հովհաննիսյանը, Հ. Հովհաննիսյանը, Հ. Մանանդյանը, Մեսրոպ արք. Տեր-Մովսիսյանը (Մագիստրոս) և այլք: Դասախոսների մի մասը Ճեմարանի նախկին սաներն էին:
ՀՀ կրթության և գիտության նախարարությունը Գևորգյան Հոգևոր Ճեմարանին շնորհել է Աստվածաբանական համալսարանի կարգավիճակ:

դասավանդվում էր հայոց և ընդհանուր պատմություն, ֆիզիկա, հանրահաշիվ և բնագիտություն:

Հատկապես մեծ նշանակություն ունեցավ Գևորգյան ճեմարանի հիմնումը (1874 թ.), որի շնորհիվ կարճ ժամանակ անց Էջմիածինը դարձավ հայագիտության և հայ մշակույթի զարգացման կարևոր կենտրոններից մեկը:

1860-1870-ական թվականները շրջադարձային էին նաև արևմտահայ կրթական կյանքում: Մասնավորապես՝ Ազգային սահմանադրության հաստատումից հետո (1864 թ.) Կ. Պոլսի Ուսումնական խորհուրդը քննարկեց և ընդունեց Ստ. Փափազյանի մշակած ազգային վարժարանների բարեկարգության ընդհանուր կանոնադրությունը: Ազգային դպրոցները բաժանվեցին 2 կարգի՝ նախակրթական (տարրական) և երկրորդական (միջնակարգ)՝ ուսման համապատասխանաբար 4 և 5 տարի տևողությամբ:

1870-ական թվականներին Արևմտյան Հայաստանում և Թուրքիայի հայաբնակ շրջաններում գործում էր ավելի քան 450 հայկական դպրոց՝ 24 հազար աշակերտներով, իսկ XX դարի սկզբին՝ 813 դպրոց՝ 60 հազար արական և 22 հազար իգական սեռի աշակերտներով:

Արևմտահայության կրթական կյանքի գլուխ կանգնած էր Կ. Պոլսի հայոց պատրիարքարանը: Առաջնակարգ խնդիր էր համարվում միասնական կրթական համակարգի, ազգային միջնակարգ դպրոցի ստեղծումը, որին էլ ձեռնամուխ եղավ պատրիարք Ներսես Վարժապետյանը:

Կրթական գործի կազմակերպման և միասնական ղեկավարման առու-

Գևորգ Դ Կոստանդնուպոլսեցի (1866-1882)

Ներսես Վարժապետյան

մով կարևոր էր Կ. Պոլսից ոչ հեռու գտնվող Արմաշի վանքում եկեղեցական բարձրագույն ուսումնարանի բացումը: 1889 թ. Խորեն Աշըգյան պատրիարքի և Մաղաքիա Օրմանյանի ջանքերով հիմնվում է Արմաշի դպրեվանքը, որտեղ բարձր հիմքերի վրա էր դրված հայագիտության դասավանդումը: Արմաշի դպրեվանքն արևմտահայ իրականության մեջ իր ունեցած դերով և ծավալած գործունեությամբ համարժեք էր Գևորգյան ճեմարանին:

«Արարատ» ամսագրի հրատարակումը

Հայոց եկեղեցու և ողջ հայության մշակութային, հոգևոր և հասարակական կյանքում նշանակալից իրադարձություն էր Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի պաշտոնական պարբերականի՝ «Արարատ» հանդեսի հրատարակումը (1868-1919):

«Արարատն» իր հրապարակումներում լայնորեն անդրադարձել է հայ հասարակական-քաղաքական կյանքին, սոցիալ-տնտեսական և կրթական իրավիճակին: Մեծապես նպաստել է հայագիտության զարգացմանը: Առաջին անգամ նրա միջոցով են հայ ընթերցողի սեփականությունը դարձել հայ մշակույթի բազմաթիվ գոհարներ՝ վավերագրեր, ձեռագրեր, հիշատակարաններ, միջնադարյան հայ տաղերգուների երգեր: Այստեղ են հրապարակվել Ն. Ադոնցի, Հ. Մանանդյանի, Մ. Աբեղյանի, Հ. Աճառյանի և այլ

նշանավոր հայագետների հոդվածները: Առաջին անգամ թարգմանաբար այս ամսագրի էջերում է հայ ընթերցողը ծանոթացել համաշխարհային գրականության մեծերի՝ Ֆ. Շիլլերի, Ն. Նեկրասովի, Հոմերոսի, Շ. Պետեֆիի և այլոց ստեղծագործություններին:

Հանդեսը նոր շունչ և ոգի է առնում Մկրտիչ Ա Խրիմյանի կաթողիկոսության տարիներին: Արծարծվում են հասարակական հնչեղություն ունեցող, ժողովրդին հուզող հարցեր, փորձ է արվում գտնել դրանց պատասխանները:

Պայքար հայկական դպրոցների վերաբացման համար

Արևելյան Հայաստանում Հայոց եկեղեցու կրթամշակութային գործունեության բուռն և արդյունավետ ծավալմանը ցարական ինքնակալությունը պատասխանեց նոր հակահայ բռնություններով: Հայկական դպրոցներում ազգայինի յուրաքանչյուր դրսևորում ցարիզմը դիտում էր որպես ազատագրական շարժման արտահայտություն: Վարելով բռնի ռուսացման քաղաքականություն՝ իշխանությունները կատաղի հալածանք սկսեցին ազգային գործիչների ու կրթական գործի նվիրյալների նկատմամբ՝ արգելելով մայրենի լեզվով դասավանդումը:

Հայ հոգևորականությունը, համարձակ կերպով մարտահրավեր նետելով ցարական ինքնակալությանը, հրաժարվեց նոր կանոններն ընդունելուց և հայտարարեց, որ դպրոցական գործի տնօրինումն Ամենայն Հայոց կաթողիկոսի իրավասության շրջանակներում է: Ի պատասխան դրա՝ իշխանությունները փակեցին մոտ 300 հայկական դպրոցներ:

Սա բուռն վրդովմունք և զայրույթ առաջացրեց ողջ հայության շրջանում: Բազմաթիվ կոչեր, թռուցիկներ և հոդվածներ հրապարակվեցին (նաև եվրոպական մամուլում), որոնք մերկացնում էին ցարիզմի գաղութային քաղաքականությունը: Խուսափելով կրքերի հետագա բորբոքումից և զգուշանալով ժողովրդական ահագնացող դժգոհությունից՝ ցարական ինքնակալությունը գնաց զիջումների: Անսալով Մակար կաթողիկոսի բողոք-դիմումներին՝ կառավարությունը թույլատրեց բացել հայկական դպրոցները՝ միայն տարրական կրթություն իրականացնելու պայմանով: Իսկ ավելի բարձր կարգի դպրոցների գոյությունը թույլատրվում էր միայն մասնավոր հիմունքներով: Արգելվեց Հայաստանի պատմության և աշխարհագրության դասավանդումը, քանզի այդ առարկաները «հայկական պետության վերականգնման ցնորային հույսեր էին առաջացնում»:

Կրթական գործին և Հայոց եկեղեցուն ընդհանրապես զգալի հարված էր հասցնում Ալեքսանդր III ցարի հրամանը, որով եկեղեցական-ծխական դպրոցներն աստիճանաբար պետք է ենթարկվեին ուսումնական վարչու-

թյանը: Հայոց եկեղեցին, իհարկե, մերժեց այդ անհիմն և անօրինական պահանջը: Որպես պատասխան՝ ցարական իշխանությունները փակեցին հայկական 230 դպրոցներ: 1897 թ. հունիսին Պետական խորհրդի որոշմամբ հայկական ծխական բոլոր դպրոցները դրվում էին լուսավորության նախարարության տնօրինության ներքո:

Մակար Ա Թեղուտցի (1885-1891)

Չհաշտվելով ստեղծված իրավիճակի հետ՝ հայ հասարակական-քաղաքական շրջանակներն իրենց արդար բողոքի ձայնը բարձրացրեցին՝ ընդվզելով ցարիզմի գաղութային քաղաքականության դեմ: Պայքարի գլուխ կանգնած էր Հայոց եկեղեցին՝ Մկրտիչ Ա Խրիմյան կաթողիկոսի ղեկավարությամբ: Այդ պայքարն ի վերջո պսակվեց հաջողությամբ:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ի պատասխան իշխանությունների կողմից սկսված հալածանքների՝ ինչ քայլեր ձեռնարկեց Հայոց եկեղեցին:
2. Ինչ առարկաներ էին դասավանդվում տարրական դպրոցներում: Քանի՞ տարի էր տևում ուսուցումն այդ դպրոցներում:
3. Ինչ էին իրենցից ներկայացնում թեմական կամ վիճակային դպրոցները:
4. Ըստ Ստ. Փափազյանի մշակած ծրագրի՝ ինչ փոփոխություններ կատարվեցին կրթական ոլորտում:
5. Ո՞վ էր գլխավորում արևմտահայերի կրթական գործը:
6. Ե՞րբ է հիմնադրվել Արմաշի դպրեվանքը: Ինչ դեր է խաղացել այն արևմտահայ իրականության մեջ:
7. Որտե՞ղ և ո՞ր թվականներին է հրատարակվել «Արարատ» հանդեսը: Ինչ հարցեր էր արծարծում այն:
8. Ինչ քայլեր ձեռնարկեց ցարական կառավարությունը Հայոց եկեղեցու կրթամշակութային գործունեությունը սահմանափակելու նպատակով:
9. Ինչ հայտարարեց հայ հոգևորականությունը Ռուսաստանի լուսավորության նախարարության կողմից 1886 թ. մշակված հայկական դպրոցներին վերաբերող նոր կանոնների մասին: Ի պատասխան դրա՝ ինչ ձեռնարկեցին իշխանությունները:

10. Ինչո՞ւ ցարական կառավարությունը գնաց զիջումների՝ թույլատրելով վերաբացել հայկական դպրոցները:
11. Ինչի՞ մասին էր Ալեքսանդր II ցարի 1891 թ. հրամանը:
12. Ո՞վ էր գլխավորում հայ հասարակական-քաղաքական շրջանների պայքարը ցարիզմի գաղութային քաղաքականության դեմ:

Քննարկենք

1. Ինչո՞ւ էր օսմանյան և ռուսական իշխանությունների կողմից XIX դարի վերջին և XX դարի սկզբներին հալածվում Հայ առաքելական եկեղեցին:
2. Ինչո՞ւ էր Հայոց եկեղեցու կրթական գործունեությունն առավել կարևորվում Արևմտյան Հայաստանում:
3. Ինչո՞ւ ցարական իշխանությունը 1886 թ. արգելեց պատմության և աշխարհագրության դասավանդումը հայկական դպրոցներում:

Լրացուցիչ նյութ

ԱՐՄԱՇԻ ԴՊՐԵՎԱՆՔ

Արմաշի Զարխափան Ս. Աստվածածին վանք, 1416 թ.

Արմաշի դպրեվանքը հիմնվել է 1889թ. Արմաշ գյուղի Զարխափան Սուրբ Աստվածածին վանքում: Խորեն արքեպիսկոպոս Աշըգյան և Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանյան պատրիարքների կողմից հիմնված դպրեվանքը դարձել է իր ժամանակի ամենահայտնի հոգևոր բարձրագույն ուսումնական հաստատությունը: Այստեղ պատրաստվում էին հոգևորականներ, մտավորականներ և ուսուցիչներ: Դպրեվանքում ուսման տևողությունը 7 տարի էր: Այստեղ հոգևոր-կրոնական առարկաների կողքին դասավանդվում էին նաև տարբեր լեզուներ, հայագիտական առարկաներ, իմաստասիրություն, ինչպես նաև բնական գիտություններ: Դպրեվանքում կրթություն են ստացել ավելի քան 300 հայ պատանիներ ու երիտասարդներ:

1915 թ. ողբերգական դեպքերի ժամանակ Արմաշի դպրեվանքը թալանվում և փակվում է, ինչը մեծ կորուստ էր հայ հոգևոր-կրթական իրականության համար:

6. ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ԵՎ ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑՈՒ ՊԱՅՔԱՐԸ ՑԱՐԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԴԵՄ: ՄԿՐՏԻՉ Ա ԽՐԻՄՅԱՆ

Հայոց եկեղեցու պայքարը ցարիզմի հակահայ քաղաքականության դեմ

XIX դարի վերջին և XX դարի սկզբին ռուսական կառավարությունն էլ ավելի է սաստկացնում հակահայ քաղաքականությունը: Հարված էր նախապատրաստվում Հայոց եկեղեցուն, որովհետև նրա հայապահպան գործունեությունը, բարձր հեղինակությունը, գաղափարական և տնտեսական հզորությունը չէին համապատասխանում ցարական ինքնակալության ծրագրերին:

Մկրտիչ Ա Խրիմյան (1892-1907)

Հայոց եկեղեցին իր ունեցվածքի զգալի մասը հատկացնում էր թեմական ու ծխական դպրոցների պահպանման ծախսերին:

1903 թվականի հունիսի 12-ին Նիկոլայ II ցարը հաստատեց հայկական եկեղեցապատկան հողերի և գույքի բռնագրավման օրենքը: Դրա համաձայն՝ եկեղեցական կալվածքներն ու գույքը հանձնվում էր համապատասխան նախարարությունների տնօրինմանը:

Հայոց կաթողիկոս Մկրտիչ Ա Խրիմյանի առաջին արձագանքը հունիսի 12-ի օրենքին եղավ այն, որ արգելեց դրա հրապարակումը հայկական մամուլում: Օգոստոսի 4-ին նա Սինոդին կարգադրեց չհրապարակել օրենքը, իսկ օգոստոսի 21-ին հատուկ կոնդակով բոլոր թեմերից պահանջեց քաղաքացիական իշխանություններին չհանձնել իրենց ունեցվածքը: Ամենայն Հայոց կաթողիկոսին սատար կանգնեց ողջ հոգևորականությունը և Սինոդը:

Մկրտիչ Ա Խրիմյանն իր դժգոհությունը նամակով հայտնում է Նիկոլայ II-ին՝ նշելով, որ եկեղեցու ունեցվածքը չի կարելի հանձնել պետությանը, քանի որ այն առաջացել է ոչ միայն ռուսահայերի, այլև ողջ աշխարհում սփռված հայերի նվիրատվություններով: Վկայակոչելով Եկատերինա II կայսրուհու հրովարտակը Հայոց եկեղեցու և հովվապետի իրավունքների

մասին՝ կաթողիկոսն իր անհնազանդությունը ներկայացնում էր որպես սրբազան իրավունք և պարտականություն:

Իր դժգոհությունը ցարին դիմումով հայտնեց նաև Կ. Պոլսի հայոց պատրիարք Մաղաքիա Օրմանյանը:

Այս ամենի արդյունքում 1905 թ. օգոստոսի 1-ին Նիկոլայ II-ի կողմից ստորագրված հրովարտակով Հայոց եկեղեցուն վերադարձվեցին նրա գույքն ու դրամը:

Հայոց եկեղեցին հայ-թաթարական ընդհարումների ժամանակ

Հոգևորականության համագործակցությունը հայ քաղաքական կուսակցությունների հետ իր դրական արդյունքը տվեց նաև հայ-թաթարական (ադրբեջանական) ընդհարումների ժամանակ (1905-1906): Կաթողիկոսի հրահանգով Գանձակի հոգևոր փոխանորդ Կյուրեղ վարդապետը և քաղաքագլուխ Գ. Տեր-Պետրոսյանը դիմում են Կովկասի փոխարքային՝ թույլտվություն խնդրելով հայերից ժողովրդական միլիցիայի ջոկատներ կազմելու համար: Նրանք խնդրում են չխոչընդոտել հայերի ինքնապաշտպանության կազմակերպմանը: Բազմաթիվ տեղերից ինքնապաշտպանական ջոկատները դիմում էին կաթողիկոսին՝ օգնության համար պահանջելով դրամ, զենք և զինամթերք: Եվ ամեն անգամ Հայոց հայրապետը կարողանում է միջոցներ հայթայթել և տրամադրել ինքնապաշտպաններին: Որպես իր գործողությունների հիմնավորում՝ փոխարքայի հետ հանդիպման ժամանակ Խրիմյանը նշել է, որ իշխանությունների անգործության հետևանքով պետության նկատմամբ հավատը կորցրած արևելահայությանը մնում էր մեկ միջոց՝ ինքնապաշտպանությունը: Ի վերջո, կովկասահայությունը կարողացավ պաշտպանել իր կյանքն ու գոյության իրավունքը:

Եկեղեցու բարեկարգման անհրաժեշտությունը

Հայ հասարակության մեջ տիրող ազատագրական գաղափարները, հեղափոխական շարժումները չէին կարող իրենց կնիքը չթողնել նաև հոգևոր կյանքում, մասնավորապես, երբ հոգևոր հովվապետի պաշտոնը զբաղեց-

Երևանը 1902 թ.

Թիֆլիսը 1902 թ.

Բաքուն 1902 թ.

նում էր առաջադիմական հայացքների տեր գործիչ Մկրտիչ Ա Խրիմյանը: Նոր գաղափարների և տեսակետների առաջին արտահայտիչը եկեղեցական կյանքում եղավ «Արարատ» ամսագիրը: «Արարատում» ոչ միայն թուրքական և ռուսական արքունիքների քաղաքականությունը մերկացնող հոդվածներ էին հրապարակվում, այլև հոգևոր կյանքում բարեփոխումների խնդիր էր բարձրացվում:

Նոր ժամանակների ոգով տոգորված՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինն աշխատանքներ է ծավալում Հայոց եկեղեցու նոր սահմանադրության ստեղծման ուղղությամբ: Կազմվում են առանձին նախագծեր:

1906 թ. մայիսին «Արարատում» տպագրվում է կաթողիկոսի կոնդակը պատգամավորական ժողովի մասին, որի նպատակը պետք է լիներ, Մկրտիչ Ա Խրիմյանի խոսքերով՝ «վերականգնել Հայաստանյայց եկեղեցու դարերի ընթացքում սրբությամբ պահպանված իրավունքը նրա պաշտոնյաների վերաբերմամբ»: Վեհափառ հայրապետը փորձում էր ապահովել հասարակության լայն շրջանակների մասնակցությունը կրոնական գործերին և հոգևոր կյանքին: Ժողովուրդն իրավունք էր ստանում իր ներկայացուցիչների (պատգամավորների) միջոցով մասնակցել ոչ միայն կաթողիկոսական և քահանայական, այլև թեմական առաջնորդների, հոգևոր-վարչական կառույցների ընտրություններին՝ ընդհանուր և անմիջական քվեարկությամբ:

Կենտրոնական պատգամավորական ժողովը բացվեց 1906 թ. օգոստոսի 15-ին: Ժողովին մասնակցող հայ քաղաքական ուժերի ներկայացուցիչների կողմից փորձ արվեց քննարկման առարկա դարձնել նաև քաղաքական հարցեր, ինչը հարուցեց Էջմիածնի միաբանության ու պատգամավորների դժգոհությունը և դարձավ ժողովի աշխատանքների ձախողման պատճառը: Արդյունքում՝ օգոստոսի 30-ին, հիմք ընդունելով ժողովում հնչած հակացարական ելույթները, ոստիկանությունը ցրեց այն:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ինչ էր նախատեսված 1903 թ. հունիսի 12-ի օրենքով:
2. Ինչ քայլեր ձեռնարկեց Մկրտիչ Ա Խրիմյանը ցարական օրենքի իրականացումը կանխելու նպատակով:
3. Ինչո՞վ ավարտվեց ցարիզմի հակահայկական քաղաքականության դեմ ուղղված համաժողովրդական պայքարը:
4. Ինչ արեց Հայոց կաթողիկոսը հայ-թաթարական ընդհարումները կանխելու համար:

5. Ինչ մասնակցություն ունեցավ Հայոց եկեղեցին հայերի ինքնապաշտպանության գործին:
6. Ո՞ր ամսագրում բարձրացվեց Հայոց եկեղեցու բարեփոխումների խնդիրը:
7. Մկրտիչ Ա Խրիմյան կաթողիկոսի կոնդակով ինչ իրավունքներ էր ստանում ժողովուրդը հոգևոր վարչական կառույցների ընտրությունների ժամանակ:
8. Ինչ հարցեր էր քննարկելու 1906 թ. օգոստոսի 15-ի պատգամավորական կենտրոնական ժողովը:
9. Ինչպե՞ս ավարտվեց պատգամավորական կենտրոնական առաջին ժողովը:
10. Ինչո՞ւ ձախողվեց պատգամավորական կենտրոնական ժողովը: Նշեք պատճառները:

Քննարկենք

1. Ինչո՞ւ էր ռուսական կառավարությունը փորձում թուլացնել Հայոց եկեղեցին: Արդյո՞ք դրա պատճառը միայն եկեղեցու ունեցվածքն ու եկամուտները բռնագրավելն էր:
2. Արդյո՞ք միայն Հայոց եկեղեցու դեմ էր ուղղված հունիսի 12-ի օրենքը:

Firefox https://ebooks.bonee.net/fumf/zqdt/

ՌՈՒՍԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԴՈՒՄԱՅԻ ՊԱՇՏՈՆՅԱՆ ԽՐԻՄՅԱՆ ՀԱՅՐԻԿԻ ՄԱՍԻՆ

Մկրտիչ Ա Խրիմյան

Անհավասար պայքարում հայ ժողովուրդը հաղթեց իսկապես, և 1905-ի օգոստոսի 1-ին հրապարակվեց ցարի հրամանագիրը՝ հայ եկեղեցու գույքը վերադարձնելու և ազգային դպրոցները վերստին բացելու վերաբերյալ: Վճռական դերն այս հարցում, անշուշտ, Մկրտիչ Ա Խրիմյանինն էր: Պատահական չէ, որ Ռուսաստանի Պետական Դումայի հետադեմ երեսփոխանները՝ կշտամբելով իշխանություններին, որ տեղի են տվել հայոց շարժման առաջ, կատաղի զայրույթով էին խոսում կաթողիկոսի մասին: Նրանցից մեկը տարիներ անց, 1908 թ. դեկտեմբերի 10-ին չմարող չարությամբ հիշեցնում էր. «Այն դեպքում, երբ Կովկասում բոլոր մյուս ժողովուրդները երդման արարողությունը կատարում էին ռուսերեն, հայերը անհասկանալի ավանդույթի ուժով պահպանեցին այդ բանը հայերեն անելու իրավունքը: Վարչապետ Պ. Ստոլիպինը պահանջեց, որպեսզի դադարեցվի դա: Չնայած այդ պահանջն առաջադրվեց միանգամայն կտրուկ ձևով, այն շրջաբերականով հանգուցյալ Մկրտիչ Խրիմյանի իշխանությամբ չեղյալ համարվեց: Ահա փաստեր, որ արտացոլում են, թե հայոց եկեղեցական ստացվածքը վերադարձնելու պահից ի վեր հայոց վերաբերմունքը ռուսական իշխանության նկատմամբ չի փոխվել»:

Խրիմյան Հայրիկ. Երկեր, Երևան, 1992, էջ 13:

38 von 122 16.02.2021, 11:19

ԳԼՈՒԽ 3 ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԻՆ ԵՎ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԻ ՆՈՐ ՓՈՒԼԸ

7. ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԻՆ ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ

XIX դարի 50-60-ական թվականներին ազգային զարթոնքի պայմաններում առաջնային նշանակություն է ստանում ժողովրդին կրթելու, լուսավորելու ճանապարհով ազգային ինքնագիտակցության բարձրացման խնդիրը:

Ժողովրդին ոտքի հանելու և ազատագրական պայքարը կազմակերպելու նպատակով առաջացան ազատագրական-հայրենասիրական խմբակներ ու կազմակերպություններ, փոքր-ինչ ուշ՝ նաև քաղաքական կուսակցություններ: Պայքարի առաջապահ դիրքերում կանգնած էին ժողովրդի ցավով ապրող Հայոց եկեղեցին և հայ մտավորականությունը:

Հայկական հարցի միջազգայնացումը և Հայոց եկեղեցին

Արևմտահայության հարստահարության հարցը Կ. Պոլսի Հայոց ազգային ժողովում առաջին բարձրացնողը եղավ նշանավոր հոգևորական Մկրտիչ Խրիմյանը:

1872 թ. Մ. Խրիմյանը և Կ. Պոլսի պատրիարք Ներսես Վարժապետյանը Արևմտյան Հայաստանից և Օսմանյան կայսրության հայաբնակ շրջաններից ստացած բազմաթիվ բողոքների հիման վրա կազմում են «Գավառահայ հարստահարությունների բողոքագիրք» և հանձնում Կ.Պոլսի ռուսական, անգլիական և ֆրանսիական դեսպաններին: Նրանք ցանկանում էին վերջիններիս ուշադրությունը հրավիրել արևմտահայության ծայրահեղ ծանր դրության վրա՝ ակնկալելով, որ մեծ տերությունները հանդես կգան հայոց արդար դատի պաշտպանության դիրքերում:

1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմը մեծ հույսեր արթնացրեց ողջ հայության, մասնավորապես՝ արևմտահայության շրջանում: Աննախադեպ ոգևորություն էր տիրում հատկապես Կ. Պոլսի հայության շրջանում: Ազգային իղձերի առաջին արտահայտիչը Հայ առաքելական եկեղեցին էր, քանզի պետականության բացակայության պայմաններում միայն եկեղեցին կարող էր հանդես գալ ամբողջ հայության անունից, լինել նրա շահերի պաշտպանը տարբեր ատյաններում:

Ներսես Վարժապետյանին է այցելում բարձրաստիճան հոգևորականության պատվիրակությունը՝ Մ. Խրիմյանի գլխավորությամբ: Նրանք պատրիարքից պահանջում են գործուն դիրքորոշում դրսևորել Հայկական հարցի նկատմամբ:

Արդյունքում Հայոց Ազգային ժողովի ու պատրիարքարանի անունից Ն. Վարժապետյանը նամակ-խնդրագրեր է հղում Ռուսաստանի կայսր Ալեքսանդր II-ին և արտաքին գործերի նախարարին՝ հայցելով նրանց աջակցությունը: Դրանք պաշտոնապես հանձնելով ռուսական պատվիրակությանը՝ Ն. Վարժապետյանը խնդրում էր հայ ժողովրդին տալ այն իրավունքներն ու երաշխավորությունները, որոնք տրվելու էին բալկանյան ժողովուրդներին: Այսինքն՝ հայերը հույսեր էին փայփայում ռուսական դիվանագիտության օգնությամբ ձեռք բերել ինքնավարություն: Նույն օրը պատրիարքը նամակով դիմում է Ամենայն Հայոց կաթողիկոս Գևորգ Դ-ին՝ տեղեկացնելով նրան այդ ամենի մասին՝ հուսալով, որ նա նույնպես պաշտոնապես կհայցի ցարի օգնությունը: Արդյունքում ծնվում է Սան Ստեֆանոյի պայմանագրի 16-րդ հայտնի հոդվածը, որի իրագործումը, անկասկած, մասամբ կթեթևացներ արևմտահայության ծանր վիճակը:

Ռուսաստանի և Օսմանյան կայսրության միջև 1878 թ. փետրվարի 19-ին Կոստանդնուպոլսի արվարձան Սան Ստեֆանոյում կնքվեց նախնական հաշտության պայմանագիր, որով ավարտվեց 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմը:

Չհանդուրժելով Ռուսաստանի դիրքերի ամրապնդումը Օսմանյան կայսրությունում՝ Մեծ Բրիտանիայի և Ավստրո-Հունգարիայի պահանջով հրավիրվում է Բեռլինի կոնգրեսը:

Արևմտահայության դատը Բեռլինում պաշտպանելու համար կազմվում է պատվիրակություն՝ Մ. Խրիմյանի նախագահությամբ:

Սակայն ամեն ինչ ավարտվեց անարդյունք: Ծնվեց չարաբաստիկ 61-րդ հոդվածը, և միջազգային դիվանագիտության ասպարեզ բարձրացավ ցայսօր լուծումը չստացած Հայկական հարցը:

«Երկաթե շերեփի» խորհուրդը

Վերադառնալով Կ. Պոլիս՝ Մ. Խրիմյանը Բեռլինի վեհաժողովը նմանեցրեց հարիսայով լի կաթսայի, որտեղից տարբեր ազգերի ներկայացուցիչները երկաթե շերեփներով վերցնում տանում էին իրենց հասանելիքը: **«Դուք ինձի շերեփի տեղը թուղթ տվիք, այդ թղթի կտորը, որչափ որ խոթեցի տաք հարիսայի մեջ, թանձրացավ, լխկեցավ, մեջն ընկավ, ես ալ թողի ետ եկա. մոռացա առաջուց մի քանի հատ զեյթունցի տանեի հետս, անոնք շերեփ ունեին... ժողովուրդ, ամենեն առաջ քո ազատության հույսը քո վրա դիր, քո խելքին, բազկին ուժ տուր, մարդ ինքն իրմե պետք**

Բեռլինի կոնգրեսը, նկարիչ՝ Անտոն ֆոն Վերներ

Բեռլինի դաշնադրությունում Սան Ստեֆանոյի պայմանագրի 16-րդ հոդվածի փոխարեն մտցվել էր նոր հոդված՝ 61-րդը, «Հայաստան» բառը փոխարինվել էր «Հայկական մարզեր» և «Հայաբնակ վայրեր» բառակապակցություններով: Այսինքն՝ օսմանյան կողմն ազատվում էր այդ երկրամասը հայերի հայրենիք ընդունելու Սան Ստեֆանոյի պայմանագրի ձևակերպումից:

է աշխատի, որ փրկվի», - գրել է Մ. Խրիմյանը: Այս խոսքերով իմաստուն հոգևորականը ողջ հայության մեջ այն ճշմարիտ գիտակցությունն էր ուզում արթնացնել, որ ազատությունը ձեռք է բերվում ոչ թե խնդրագրերի, այլ երկաթե շերեփի՝ զինված պայքարի գնով:

Հարցեր և առաջադրանքներ

1. XIX դ. 50-60-ական թվականներին հայ իրականության մեջ ո՞ր խնդիրն էր դարձել առաջնային:
2. Ովքե՞ր և ե՞րբ կազմեցին «Գավառահայ հարստահարությունների բողոքագիրքը»: Ի՞նչ նպատակով էր այն կազմվել:
3. Ի՞նչ քայլեր ձեռնարկեց Կ. Պոլսի հայոց պատրիարք Ն. Վարժապետյանը Մ. Խրիմյանի և մյուս բարձրաստիճան հոգևորականների ճնշման տակ:
4. Ի՞նչ էին ակնկալում ձեռք բերել հայերը ռուսական դիվանագիտության օգնությամբ:
5. Հայոց պատմությունից վերհիշեք, թե ինչի մասին էր Սան Ստեֆանոյի պայմանագրի 16-րդ հոդվածը: Իրականացա՞ն արդյոք հայերի հույսերը:
6. Ո՞վ էր գլխավորում Բեռլին ուղարկված հայկական պատվիրակությունը:
7. Ինչի՞ էր նմանեցնում Մ. Խրիմյանը Բեռլինի վեհաժողովը: Ի՞նչ էր ուզում ասել նա՝ խնդրագրերը նմանեցնելով «թղթե շերեփի»:

Քննարկենք

1. Ինչո՞ւ մեծ տերությունները պահանջեցին հրավիրել Բեռլինի վեհաժողովը:
2. Ձեր կարծիքով՝ ինչո՞ւ Հայկական հարցը մինչ օրս լուծում չի ստացել: Արդյո՞ք հնարավոր է այն լուծել: Եթե այո, ապա ի՞նչ տարբերակ կարող եք առաջարկել:
3. Վերհիշելով նաև «Հայոց պատմությունից» Հայկական հարցին վերաբերող ձեր սովորածը՝ լրացրեք «Դիագրամը»:

Firefox https://ebooks.bonee.net/fumf/zqdt/

ԿԱԹՈՂԻԿՈՍ ՄԿՐՏԻՉ ԽՐԻՄՅԱՆԸ՝ ՆԻԿՈԼԱՅ II-ԻՆ (1907 Թ.)

Իմ հոտը Թուրքիայում, մանավանդ բնիկ հայկական գավառներում, անանախընթաց տառապանքների մեջ է: Ընդդեմ Փոքր Ասիայի հայ բնակչության ստեղծված է խաղաղ ոչնչացման մինչև այժմ չտեսնված մի համակարգ: Արդարադատության բացակայությունը, կառավարության կողմից հայ ժողովրդի արդարացի պահանջների լրիվ անտեսումը նրան հանձնել են անբարեխիղճ աստիճանավորների, քուրդ բեգերի և համիդիե հեծելազորի լիակատար իշխանությանը:

... XX դարի սկզբին հողագործական Հայաստանում վերստեղծվում է միջնադարյան ճորտատիրություն: Թուրքիո կառավարությունը ոչ միայն ոչ մի միջոց չի ձեռնարկում ընդդեմ այդ ողբալի վիճակի, այլ, ընդհակառակը, մուհաջիր-գաղթականներին՝ այլ պետություններից եկած մուսուլմաններին բնակեցնելով հայկական գյուղերում՝ խորացնում է քրիստոնյա ռայայի վիճակի ծանրությունը: Հայերին արգելելով Թուրքիայից դուրս վաստակ որոնելը և միաժամանակ թույլ չտալով իրենց գավակների մոտ վերադառնալ նրանց, ում որ հաջողվել էր փրկվել կոտորածից՝ կառավարությունը արհեստականորեն և սիստեմատիկաբար նպաստում է հայ ժողովրդի բարոյալքմանը, սովահարությանը և բնաջնջմանը, մի ժողովուրդ, որը միշտ եղել է համբերության և աշխատասիրության օրինակ:

Ինչպես հյուծված նախիր, որ նետված է գիշատիչներով լեցուն անապատը, քրիստոնյա բնակչությունը Թուրքիայի հայկական մարզերում այս կողմից այն կողմն է նետվում՝ ելք չգտնելով իր ողբերգական վիճակից:

... Վերջապես, մեծ է թիվը նաև այն դժբախտների, ովքեր, աջակցությունից հույսները կտրած, հուսահատ դրությունից դուրս գալու միակ ելքը գտնում են կրոնափոխության մեջ՝ կործանվելով ինչպես քրիստոնեական եկեղեցու համար, այնպես էլ բարոյապես առողջ հասարակության համար:

«Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում», Երևան, 1991, էջ 223-225:

43 von 122 16.02.2021, 11:19

8. ԵԿԵՂԵՑՈՒ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ XIX ԴԱՐԻ ՎԵՐՋԻ ԵՎ XX ԴԱՐԻ ՍԿԶԲԻ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԻՆ

Օգտագործելով մեծ տերությունների միջև առկա հակամարտությունները՝ օսմանյան իշխանությունները ոչ միայն չիրականացրին բարենորոգումներ, այլև ավելի դաժան հալածանքներ սկսեցին արևմտահայության դեմ: Փակվեցին հայկական թերթերը, դպրոցները: Պարբերաբար կազմակերպվող հայկական ջարդերը բարձրացվեցին պետական քաղաքականության մակարդակի: Թուրքական կառավարող շրջանները ցանկանում էին հայազրկել ողջ Արևմտյան Հայաստանը և արմատախիլ անել ազգային-ազատագրական շարժումը:

Հայ հոգևորականության մասնակցությունն ազատագրական շարժմանը

Ազատագրական շարժման գաղափարները լայն տարածում գտան Արևմտյան Հայաստանի գավառներում, որտեղ ժողովրդի ծոցից ելած բազմաթիվ գործիչների հետ պայքարը ղեկավարում էին նաև հայ հոգևորականները: Հոգևոր բազմաթիվ գործիչներ կանգնեցին ազատագրական շարժման գլուխ՝ խոսքով և գործով ոգևորելով ժողովրդին: Հայտնի են բազմաթիվ դեպքեր, երբ հայ հոգևորականները զենքը ձեռքներին պայքարել են թշնամու դեմ՝ պաշտպանելով ժողովրդի կյանքն ու պատիվը: Այսպես, 1877-1878 թթ. Զեյթունի ապստամբության ղեկավարն էր Ֆռնուզի վանահայր Նիկողայոս եպիսկոպոսը, ում գլխավորած ջոկատը բազմիցս աչքի էր ընկել մարտերում:



Մշո Ս. Կարապետ եկեղեցին

Կ. Պոլսում լույս տեսած իր բանաստեղծություններում ժողովրդին զենքի էր կոչում Հակոբ Սարկավագ Ղևոնդյանը, ով ձերբակալվեց իշխանությունների կողմից: Երեքամյա բանտարկությունից հետո, անցնելով հայրենի Մուշ, նա շարունակեց հեղափոխական գործունեությունը և վերստին ձերբակալվեց:



Զեյթունի կամուրջը

Վարդան վարդապետ

Բագրատ վարդապետ Թավաքալյան

Ներսես եպիսկոպոս Խարախանյան

Ազատվելուց հետո անցնում է Խնուս ու Կարին և շուրջ 6 տարի ժողովրդի մեջ սերմանում է ազատագրական գաղափարներ, իրականացնում զենքի տեղափոխումը, փորձում գտնել հայ-քրդական համագործակցության եզրեր:

Զեյթունի 1895 թ. ինքնապաշտպանության հայտնի գործիչներից էր Ֆռնուզի Սուրբ Կարապետ վանքի փոխվանահայր Բարդուղիմեոս վարդապետը, որի թրի տակով գլուխները խոնարհած անցել են Զեյթունի թուրքական կայազորի գերի հանձնված շուրջ 700 զինվորներ: Մալաթիա քաղաքի հայկական թաղամասերի ինքնապաշտպանության ղեկավարներից էր Եղիշե քահանա Խաչատրյանը:

Բազմաթիվ մարտերում հայրենասեր հոգևորականներն աչքի են ընկել քաջությամբ՝ փառքով պսակելով իրենց անունը: Նրանցից էին պարսկա-թուրքական սահմանագլխին գտնվող Դերիկի վանքի վանահայր Բագրատ վարդապետ Թավաքալյանը, Տարոնի առաջնորդ Ներսես վարդապետ Խարախանյանը, Մշո Սուրբ Կարապետ վանքի վանահայր Վարդան վարդապետը (Հեսու Վարդապետ) և շատ ուրիշներ:

Խանասորի արշավանքը

1896 թ. քուրդ մազրիկ ցեղախումբն իրականացրել էր մոտ 800 հայ երիտասարդների կոտորած:

Հայի բարոյական կորովը և պայքարելու ոգին զորացնելու, Եվրոպայի դիվանագիտության ուշադրությունը գրավելու նպատակով 1897 թ. հուլիսի 25-ին հայ ազատագրական պայքարի շուրջ 300 վրիժառուներ Նիկոլ Դումանի, Խանասորի Վարդանի և Հ. Արղությանի (Իշխան) հրամանատարությամբ պատժիչ գործողություններ սկսեցին Վանի նահանգի հայկական գյուղերի գլխին պատուհաս դարձած քրդական մազրիկ ցեղի դեմ: Հայ մարտիկների հետ միասին Խանասորի արշավանքին մասնակցում

Խանասորի արշավանքի մարտիկները

էին նաև Հայոց եկեղեցու բազմաթիվ հոգևորականներ՝ Գրիգոր քահանա Ավագյանը, Հակոբ քահանա Սառիկյանը, Վարդան քահանա Նալբանդյանը և ուրիշներ: Հայերին հաջողվեց կոտորել քուրդ զինյալներից շատերին: Մազրիկ ցեղի առաջնորդ Շարաֆ բեկը՝ կանացի հագուստ հագած փախավ մարտից: Խանասորի արշավանքն ավարտվեց 1897թ. հուլիսի 27-ին՝ հայերի լիակատար հաղթանակով:

Մկրտիչ Խրիմյանի ազգանվեր գործունեությունը

1880-1890-ական թվականներին Հայոց եկեղեցին մեծ գործունեություն էր ծավալել սովյալներին և ջարդերից տուժածներին օգնություն կազմակերպելու ուղղությամբ: Սովյալների օգնության Կ. Պոլսի հանձնաժողովն իր մասնաճյուղերն է հիմնում գավառներում: Առանձնապես ազգանվեր գոր-

Հակոբ քահանա Սառիկյան (մասնակցել է Խանասորի արշավանքին)

Գրիգոր քահանա Ավագյան (մասնակցել է Խանասորի արշավանքին)

Խորեն վարդապետ Վարդանյան (մասնակցել է զենքի փոխադրման աշխատանքներին)

Վանի բերդը

ծունեություն է ծավալում Վանի մասնաճյուղը՝ Մկրտիչ եպիսկոպոս Խրիմյանի ղեկավարությամբ: Մկրտիչ Խրիմյանն այդ ժամանակ ոչ միայն Վասպուրականի հայության հոգևոր առաջնորդն էր, այլև արևմտահայության տարբեր շրջաններն իրար կապող օղակ: Նա սերտ կապեր էր հաստատել առանձին վայրերի գաղտնի ընկերությունների, հասարակական կազմակերպությունների հետ՝ սերմանելով և տարածելով ազատագրական գաղափարներ:

Դառնալով կաթողիկոս՝ Մկրտիչ Խրիմյանը որոշում է վճռական քայլեր ձեռնարկել արևմտահայության ծանր վիճակը մեղմելու ուղղությամբ: Այցելելով Ռուսաստանի կայսր Նիկոլայ II-ին՝ նա փորձում է բարձրացնել արևմտահայության հարցը: Նրա և ցարի հանդիպումն ավարտվեց անարդյունք: Միակ հաջողությունն այն էր, որ Մկրտիչ Ա Խրիմյանին թույլատրվեց Ռուսաստանի հայաբնակ վայրերում հանգանակություն կազմակերպել՝ արևմտահայ գաղթականներին և ընդհանրապես արևմտահայությանն օգնելու համար: Խիստ կարևոր էր գաղթականներին հայրենի բնակավայրեր վերադարձնելու հարցը, ինչին էլ ձեռնամուխ է լինում Հայոց հայրապետը: 1904 թ. ամռանը՝ Սասունի ապստամբության ժամանակ, Մկրտիչ Ա Խրիմյանը հայ հոգևոր առաջնորդների միջոցով դիմումներ է ներկայացնում մեծ տերությունների ղեկավարներին՝ նրանց ուշադրությունը հրավիրելով Արևմտյան Հայաստանում ստեղծված լարված իրադրության վրա: Սակայն ամենուրեք կաթողիկոսի դիմումները հանդիպում էին սառն ու անտարբեր վերաբերմունքի:

Հայրենանվեր հովվապետը վերանորոգել է տվել Ս. Հռիփսիմեի, Խոր Վիրապի, Հաղպատի, Սանահինի, Սևանի վանքերը, հիմնադրել Ամերիկայի առաջնորդական թեմը:

Մկրտիչ Ա Խրիմյանը թողել է հարուստ գրական ժառանգություն, որտեղ կարևոր տեղ են զբաղեցնում գրական-գեղարվեստական, իմաստասիրական, հոգևոր-բարոյախրատական աշխատությունները:

Firefox https://ebooks.bonee.net/fumf/zqdt/

ԸՆԾԱՅՐ
(Գևորգ վարդապետ Նալբանդյան)

Եղել է Աղթամարի միաբանության անդամ: Ազատագրական շարժմանը մասնակցելու համար աքսորվում է թուրքական իշխանությունների կողմից: Հետագայում նշանակվում է Թադեոս առաքյալի վանքի վանահայր: Եղել է վանքին կից զենքի պահեստի պատասխանատու և գործուն մասնակցություն ունեցել «Երկիր» զենք տեղափոխելու աշխատանքներին:

Վերանորոգել է վանքը, հիմնել է գյուղ, որտեղ դպրոց է բացել մանուկների համար: Խոյ քաղաքում նույնպես կառուցել է դպրոց: Զոհվել է 1915 թ. եղեռնի ժամանակ:

ԿՈՄԻՏԱՍԻ ՀՈՒՇԵՐԸ ԽՐԻՄՅԱՆ ՀԱՅՐԻԿԻ ՄԱՍԻՆ

Շատ ուշագրավ է մի մանրավեպ, որ վերաբերում է Հայրիկի կաթողիկոսության շրջանին և որ ժամանակին պատմել է մեծն Կոմիտասը:

Գերմանացի մի հնախույզ հետաքրքրվում է հնագիտական արժեք ունեցող իրերով: Երբ Էջմիածնում նրան ներկայացնում են Խրիմյանին, վերջինս դիմում է թարգմանչին:

– Ըսեք, որ ես թանկագին հնություն մը ունիմ. քանի՞ տարվան կենթադրե:

– Հինգերորդ դարի, – փորձում է գուշակել հնագետը:

– Անկեց ալ հին, – հուշում է կաթողիկոսը:

– Քրիստոսի ժամանակվա:

– Անկեց ալ հին:

Հնախույզի աչքերը վառվում են հետաքրքրությունից, որ աստիճանաբար փոխվում է ոգևորության.

– Տեսնեմ, Վեհափառ, ինչ է այդ թանկագին հնությունը:

– Իմ ազգս է, – կշտամբող շեշտով պատասխանում է Խրիմյան Հայրիկը, – Քրիստոսեն ալ հին, Մովսեսեն ալ, իմ թշվառ ազգը: Անտեսած այս թանկագին հնությունը՝ հին քար մը կամ առարկա մը փնտրելու կելլեք:

Խրիմյան Հայրիկ. Երկեր, Երևան, 1992, էջ 11-12:

48 von 122 16.02.2021, 11:19

Հարցեր և առաջադրանքներ

1. Ինչո՞ւ օսմանյան կառավարությունը չիրականացրեց բարենորոգումներ, այլ ավելի դաժան հալածանքներ սկսեց արևմտահայության դեմ:
2. Նշեք դեպքեր, երբ հայ հոգևորականները զենքը ձեռքներին պայքարել են թշնամու դեմ:
3. Առաջին հայդուկների մեջ կային արդյոք հոգևորականներ:
4. Զեյթունի 1895 թ. ինքնապաշտպանության ժամանակ ո՞ր հոգևորական հայտնի գործչի թրի տակով են անցել գերի հանձնված թուրք զինվորները:
5. Ինչ հետևանքներ ունեցավ Խանասորի արշավանքը:
6. Ինչ գործունեություն էր ծավալել Մկրտիչ Խրիմյանը 1880-1890-ական թվականների ջարդերից տուժածներին օգնություն կազմակերպելու ուղղությամբ:
7. Ինչո՞վ ավարտվեց Մկրտիչ Ա Խրիմյան կաթողիկոսի և Ռուսաստանի կայսր Նիկոլայ II-ի հանդիպումը:
8. Մկրտիչ Ա Խրիմյանի հանձնարարությամբ հայ հոգևոր առաջնորդներն ինչ նպատակով էին դիմում մեծ տերությունների ղեկավարներին:

Քննարկենք

1. Ինչո՞ւ էր Խրիմյան Հայրիկը կարևորում գաղթականներին հայրենի բնակավայրեր վերադարձնելու, իսկ որբերին հայկական որբանոցներում հավաքելու խնդիրները:
2. Ինչ արդյունք տվեցին հայ հոգևոր առաջնորդների մեծ տերությունների ղեկավարներին ներկայացված դիմումները:

9. ԳԵՎՈՐԳ Ե ՍՈՒՐԵՆՅԱՆՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԱՑՈՒՄԸ

Գևորգ Ե Սուրենյանց (1911-1930)

Բալկանյան պատերազմներում Թուրքիայի պարտությունները նպաստեցին օսմանյան տիրապետության ներքո գտնվող ժողովուրդների ազատագրական շարժումների աշխուժացմանը: Հայկական ազգային շրջաններում վերստին հասունանում էր այն մտայնությունը, որ հարկավոր է մեծ տերությունների ուշադրությունը մեկ անգամ ևս հրավիրել հայկական նահանգներում բարենորոգումների իրականացման խնդրի վրա:

Համայն հայության անունից պաշտոնապես կարող էր հանդես գալ միայն Հայոց եկեղեցին: Ուստի հայ ազգային քաղաքական շրջանակները դիմում են հայոց հոգևոր առաջնորդներին:

1912 թ. հուլիս 7-ին Կ. Պոլսի հայոց պատրիարքարանը գավառներից ստացած բողոքների հիման վրա բողոքագիր է ներկայացնում Թուրքիայի արդարադատության նախարարությանը՝ պահանջելով վերջ տալ բռնություններին:

1912 թ. սեպտեմբերին հայ հասարակության տարբեր խավերի մասնակցությամբ Թիֆլիսում հրավիրված ժողովն Ամենայն Հայոց կաթողիկոսի առջև հարց է բարձրացնում դիմել ռուսական կառավարությանը: Ժողովներ են հրավիրվում նաև Երևանում, Բաքվում, Բաթումում և այլուր:

Ջգալով ամբողջ հայության աջակցությունը՝ Ամենայն Հայոց կաթողիկոս Գևորգ Ե Սուրենյանցը դիմում է Կովկասի փոխարքա Ի. Վորոնցով-Դաշկովին՝ խնդրելով հարց բարձրացնել ցարի առջև՝ Բեռլինի կոնգրեսի 61-րդ հոդվածն իրականացնելու համար: Փոխարքան Նիկոլայ II-ին հասցեագրած նամակում նշելով, որ մեծ տերությունները, հավանաբար, կմիջամտեն Հայկական հարցին, Ռուսաստանի քաղաքական շահերի տեսանկյունից անհրաժեշտ է համարում հանդես գալ արևմտահայության պաշտպանության դիրքերում: Փոխարքան գտնում էր, որ դա ռազմական ապագա գործողությունների ժամանակ կապահովի հայ ազգաբնակչության աջակցությունը և օգնությունը ռուսական զորքին:

Նույն ժամանակ Կ. Պոլսի հայոց պատրիարքարանը դիմում է Փարիզում գտնվող եգիպտահայ մեծահարուստ Պողոս Նուբար փաշային, որ-

Պողոս Նուբարը (Նուբարյանը) նոր ժամանակների հայ բարեգործների առաջին սերնդի ամենանվիրյալ և ամենաազդեցիկ դեմքերից մեկն է, Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության հիմնադիրն ու առաջին նախագահը:

պեսգի նա Արևմտյան Հայաստանում բարենորոգումներ իրականացնելու խնդրանքով դիմի դեկտեմբերին Լոնդոնում բացվող դեսպանաժողովին: Սակայն օսմանյան իշխանություններին չգրգռելու համար որոշվում է Հայկական հարցի պաշտոնական արծարծումը վերապահել Ամենայն Հայոց կաթողիկոսին: Նոյեմբերին Գևորգ Ե կաթողիկոսը հատուկ կոնդակով Պողոս Նուբարին լիազորում է մեծ տերություններին ներկայացնել բարենորոգումների հարցը, ինչպես նաև հուշագիր կազմել Լոնդոնի կոնֆերանսին ներկայացնելու համար:

Բայց այս անգամ ևս Հայկական հարցը զոհ գնաց միջազգային դիվանագիտության խարդավանքներին:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ինչո՞ւ հայ ազգային շրջաններում Արևմտյան Հայաստանում բարենորոգումների անցկացման խնդիրը լուծելու հույսեր արթնացան:
2. Ինչ հարցի շուրջ էր Թիֆլիսում ժողով հրավիրվել 1912 թ. սեպտեմբերին:
3. Ո՞ւմ դիմեց Հայոց կաթողիկոսը հայկական բարենորոգումների խնդրով:
4. Ո՞ւմ էր լիազորել Գևորգ Ե կաթողիկոսը մեծ տերություններին ներկայացնելու հայկական բարենորոգումների հարցը:

Քննարկենք

Ինչո՞ւ էր Կովկասի փոխարքա Ի. Վորոնցով-Դաշկովը Ռուսաստանի համար անհրաժեշտ համարում արևմտահայության պաշտպանությամբ հանդես գալը:

Լրացուցիչ նյութ

ԳԵՎՈՐԳ Ե ԿԱԹՈՂԻԿՈՍԻ՝ Ի. ՎՈՐՈՆՑՈՎ-ԴԱՇԿՈՎԻՆ ԳՐԱԾ ՆԱՄԱԿԻՑ

(1914 թ. օգոստոսի 5)

Ի. Վորոնցով-Դաշկով

Այժմ բռնկված պատերազմն արևմտահայերի կյանքն ու ռեֆորմների ճակատագիրը նորից դնում է մեծ փորձության տակ:

... Բայց որպես իմ ժողովրդի հոգևոր հովիվ, ես չեմ կարող չտագնապել և Ձերդ պայծառափայլությանը չմատնանշել այն, որ Թուրքիայում հայ բնակչությունն ապրելու է խորապես վշտալի օրեր, եթե Ռուսաստանի ուշադրությունը Հայոց հարցի նկատմամբ ժամանակավորապես թուլանա:

... Քանի դեռ Թուրքահայաստանը գտնվում է Թուրքիայի սահմաններում մինչև համայն հայության համար տանջալի այդ հարցի վերջնական լուծումը, անձամբ իմ և ամբողջ հայ ազգի կարծիքը կայանում է հետևյալում.

ա) Անատոլիայի հայկական գավառներից կազմել մեկ անբաժանելի մարզ.

բ) այդ մարզի կառավարիչ պետք է կարգել քրիստոնեական դավանանքի տեր, Դռնից անկախ, բարձր տիտղոսով կամ աստիճանով օժտված և Ռուսաստանի կողմից ընտրված մեկին.

գ) այդ մարզում մտցնել ներքին լայն ինքնակառավարում ընտրական սկզբունքների հիման վրա, քրիստոնյաներից և մուսուլմաններից հավասար թվով ներկայացուցիչներով.

դ) որպեսզի հայ բնակչությունը հավատա կառավարման նոր կազմակերպության և կարգի կայունությանն ու կենսականությանը, ամբողջ բարենորոգման վերահսկողության և իրականացման իրավունքը վերապահել բացառապես Ռուսաստանին:

«Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում», Երևան, 1991, էջ 331-332:

10. ՀԱՅՈՑ ՄԵԾ ԵՂԵՌՆԸ ԵՎ ԵԿԵՂԵՑԻՆ

Հայոց ցեղասպանությունը

Վարդգես Սուրենյանց. «Ոտնահարված սրբություն»

1908 թ. երիտթուրքական հեղաշրջման արդյունքում Օսմանյան կայսրությունում իշխանությունն անցավ «Միություն և առաջադիմություն» կուսակցությանը: Սահմանադրության կեղծ գաղափարների հռչակումից ընդամենը երեք տարի անց երիտթուրքերի համաժողովը որոշում ընդունեց Օսմանյան կայսրությունում բնակվող բոլոր ազգերին և ազգություններին թուրքերին ձուլելու մասին:

Եվ ահա, Հայկական հարցը մեկընդմիշտ լուծելու համար երիտթուրքերը որոշեցին օգտագործել պատեհ առիթը՝ Առաջին համաշխարհային պատերազմը, համոզված, որ այս անգամ օտարերկրյա միջամտություններ-ը բացառվելու են:

1915 թ. ապրիլ-մայիսին սկսվեց հայերի զանգվածային տարագրությունն ու կոտորածը: Հայաթափվեց ողջ Արևմտյան Հայաստանը և Թուրքիայի հայաբնակ շրջանները: 1914-1916 թթ. տարագրված հայերից սպանվեցին, սովին և համաճարակներին զոհ գնացին ավելի քան 1,5 միլիոնը:

Անչափելի էին նյութական և հոգևոր կորուստները: Ավերվեց հայկական դարավոր մշակույթը, ոչնչացվեցին բազմադարյան գրականության և ճարտարապետության նմուշները:

Հայ ժողովրդի հոգևոր կերպարի և մշակութային ինքնուրույնության կայացման գործում, անշուշտ, անուրանալի էր Հայոց եկեղեցու, հոգևորականության դերը: Այն իր հայեցի կրթությամբ և դաստիարակությամբ, կենցաղ դարձած ծեսերով, արարողություններով ամենամեծ նպաստն էր բերում հայապահպանությանը: Ուստի թուրք ջարդարարների կողմից հատուկ կարևորություն է տրվում հայ հոգևորականության բնաջնջմանը: Հայտնի է Թուրքիայի ներքին գործերի նախարար Թալեաթի հեռագիրն այն մասին, որ «հայ հոգևորականությունը պետք է ոչնչացվի առաջին հերթին»:

Դեռևս 1912-1913 թթ. Կ. Պոլսի հայոց պատրիարքությունը ներքին գոր-

ծերի նախարարության հանձնարարությամբ կազմել և օսմանյան կառավարությանն էր ներկայացրել Թուրքիայում հայկական եկեղեցիների ամբողջական ցանկը: Այդ ժամանակից էլ փաստորեն հարված էր նախապատրաստվում Հայոց եկեղեցուն:

Օսմանյան կայսրությունում գտնվող 2200 հայկական եկեղեցիներից կողոպտվեցին, հրդեհվեցին և ավերվեցին 2150-ը: Ոչնչացվեցին վաղ քրիստոնեական շրջանի ճարտարապետական այնպիսի գլուխգործոցներ, ինչպիսիք են Ստեփանոս Նախավկայի (VII դար), Ս. Հովհաննեսի (VII դար), Ս. Թեոդորոսի (VIII դար) եկեղեցիները, Խծկոնքի (IX-X դարեր), Ս. Ստեփանոսի (XI դար) վանքերը և այլն: Սրի քաշվեցին տասնյակ հազարավոր հոգևորականներ, նրանցից շատերը զոհվեցին իրենց հոդը պաշպանելիս:

Խծկոնքի վանքը

Գևորգ Ե կաթողիկոսը որբերի հետ

Արևմտահայ գաղթականությունը և Հայոց եկեղեցին

Մեծ եղեռնից մազապուրծ արևմտահայության բեկորները տարածվեցին ողջ աշխարհով՝ համալրելով տարբեր վայրերում առաջացած հայկական գաղթավայրերը և կազմելով հայկական սփյուռքը:

Անասելի ծանր պայմանները, սովը և համաճարակն ամեն օր տասնյակ գաղթականների կյանք էին խլում: Միայն 1915 թ. օգոստոս ամսին կենցաղային տարրական պայմանների բացակայության, սովի և հիվանդությունների պատճառով մահացան տասնյակ հազարավոր արևմտահայ գաղթականներ:

Արևմտահայության բեկորներին փրկելու համար լայն գործունեություն սկսեցին ծավալել բազմաթիվ բարեգործական միություններ, հասարակական կազմակերպություններ, որոնց աշխատանքները փորձում էր համակարգել Հայոց եկեղեցին: Դեռևս 1914 թ. դեկտեմբերին Ամենայն Հայոց կաթողիկոս Գևորգ Ե-ի որոշմամբ ստեղծվեց Եղբայրական օգնության Էջմիածնի կոմիտեն հենց իր՝ կաթողիկոսի գլխավորությամբ: Կոմիտեի նպատակն էր գաղթականներին ապաստան գտնելը, սննդով ապահովելը, բժշ-

Մեծ եղեռնի նահատակների առաջին հուշարձանը. Էջմիածին 1965 թ.

կական և կենցաղային տարաբնույթ օգնության կազմակերպումը: Կոմիտեն իր մասնաճյուղերն ուներ Էջմիածնում, Երևանում ու Ալեքսանդրապոլում: 1914-1917 թթ. կոմիտեն մեծ գործունեություն ծավալեց գաղթականներին Վաղարշապատի գյուղերում տեղավորելու, սննդով և հագուստով ապահովելու, բժշկական ծառայություններ մատուցելու ուղղությամբ:

Տարբեր կազմակերպությունների կողմից գաղթականներին ցուցաբերվող օգնությունը կազմակերպելու, ուժերը միավորելու նպատակով Գևորգ Ե-ի նախաձեռնությամբ 1915 թ. մարտին Էջմիածնում հրավիրվեց հայ գաղթականության հարցերին նվիրված համագումար: Մասնակցում էին նաև Մոսկվայի, Սիմֆերոպոլի և այլ վայրերի հայության պատվիրակները: Համագումարը որոշակի դեր խաղաց տարագրյալ հայերին օգնություն կազմակերպելու ծրագրի մշակման ուղղությամբ:

Գևորգ Ե կաթողիկոսը՝ ականատես լինելով իր ժողովրդի կրած տառապանքներին, ինքն իրեն կոչել է **«վշտակիր»**:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ինչի՞ մասին էր տեղեկացնում Գևորգ Ե կաթողիկոսը մեծ տերությունների ղեկավարներին:
2. Ինչ վնաս հասցվեց Հայոց եկեղեցուն Մեծ եղեռնի տարիներին:
3. Որտեղ հանգրվանեցին եղեռնից փրկված հայերը: Որքա՞ն էր նրանց թիվը Կովկասում:
4. Ինչ գործունեություն ծավալեց Հայոց եկեղեցին Գևորգ Ե կաթողիկոսի գլխավորությամբ՝ հայ գաղթականներին բազմակողմանի օգնություն ապահովելու համար:

Քննարկենք

Ինչո՞ւ էին թուրքերը հատուկ ուշադրություն դարձնում հայ հոգևորականության բնաջնջմանը: Մեկնաբանեք Թալեաթի այս միտքը. «Հայ հոգևորականությունը պետք է ոչնչացվի առաջին հերթին»:

Լրացուցիչ նյութ

ՀԱՏՎԱԾ 1915 Թ. ԱՊՐԻԼԻ 15-Ի ԳԱՂՏՆԻ ՀՐԱՄԱՆԱԳՐԻՑ.

«Հետևաբար մեր հայրենիքը, ազգը, պետությունը և կրոնը այդպիսի վտանգի հնարավորություններից պաշտպանելու համար կառավարությունը, որ ներկայացնում է իսլամն ու թուրք ժողովուրդը ու «Միություն և առաջադիմություն» կոմիտեն, ինչ էլ որ լինի, նպատակ ունենալով կանխել որևէ մի տեղ և որևէ մի ձևով Հայկական հարցի առաջադրումը, օգտվելով այն պատեհությունից, որ մեզ ընձեռել է պատերազմը, որոշեց վերջնականապես վերջ դնել այդ հարցին, բնաջնջելով խորթ տարրը, քշելով նրան Արաբիայի անապատները՝ համաձայն մեր տված գաղտնի հրահանգի...

Ամեն մի պաշտոնատար մասնավոր անձնավորություն, ով կընդդիմանա այս սրբազան և հայրենասիրական գործին և չի կատարի իր վրա դրված պարտականությունները կամ որևէ եղանակով կփորձի պաշտպանել կամ թաքցնել այս կամ այն հային, կճանաչվի հայրենիքի և կրոնի թշնամի և դրան համապատասխան կպատժվի»:

Ութ հարյուր հիսուն որբեր. Իրաք

ԳԼՈՒԽ 4 ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ

11. 1918 ԹՎԱԿԱՆԻ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԵՐԸ ԵՎ ԵԿԵՂԵՑԻՆ

1915-1918 թթ. թուրքական իշխանությունների հայաջինջ քաղաքականության հետևանքով Արևմտյան Հայաստանը դատարկվեց հայերից:

Արևմտահայությանը ցեղասպանության ենթարկելուց հետո թուրքերը ձգտում էին գրավել նաև Արևելյան Հայաստանը:

1918 թ. մայիսի 15-ին թուրքական բանակը գրավեց Ալեքսանդրապոլը և մոտեցավ Արարատյան դաշտի մատույցներին: Սպառնացող մահացու վտանգի դեմ ոտքի կանգնեցին հայ հասարակության բոլոր ուժերը: Ոխերիմ թշնամու դեմ պայքարի կոչով ժողովրդին դիմեց նաև Հայոց եկեղեցին:

Հայոց եկեղեցու մասնակցությունը Մայիսյան հերոսամարտերին

Ռազմաճակատ մեկնելու թույլտվության և օրհնության խնդրանքով Ամենայն Հայոց կաթողիկոսին էին դիմում ճեմարանի սանը, Մայր Աթոռի միաբանը, թեմի առաջնորդը ...

Ալեքսանդրապոլ

Բազմաթիվ հոգևորականներ շրջում էին գյուղերում և գյուղացիներին հորդորում ինչով հնարավոր է աջակցել հայրենիքի պաշտպանությանը և չխուսափել զորահավաքից:

Քննարկելով հայրենի երկրի և հայ ժողովրդի ծանր վիճակը՝ միաբանական ժողովների ատենապետությունը որոշում է ազգի կարիքները հոգալու համար զգալի նյութական օգնություն ցուցաբերել:

Իսկ ռազմաճակատում իրադրությունը փոփոխվում էր օր օրի, և թուրքական զորքերը մայիսի կեսերին հասնում են մինչև Սարդարապատ, Բաշ Ապարան և Համամլու:

Նկատի ունենալով Էջմիածնին սպառնացող վտանգը՝ հայկական զորքերի հրամանատարությունը դիմեց Գևորգ Ե Սուրենյանցին՝ ավելի ապահով տեղ՝ Բյուրական տեղափոխվելու խնդրանքով: Հայոց հայրապետը պատասխանում է, որ եթե հայկական զորքը հրաժարվում է կամ թե չի կարող պաշտպան կանգնել այս սուրբ վայրերին, ապա ինքը մենակ սուր կվերցնի և կընկնի Մայր Տաճարի գավթում, բայց չի հեռանա պապերից ավանդ մնացած Սուրբ աթոռից:

Հայոց հովվապետը հրամայեց օր ու գիշեր հնչեցնել բոլոր եկեղեցիների զանգերը և ոտքի հանել ժողովրդին: Նա ժողովրդի ներկայությամբ աղոթելով՝ երդվեց համընդհանուր նահանջի դեպքում անգամ մնալ Ս. Էջմիածնում ու անձամբ պաշտպանել Մայր Աթոռը: Կաթողիկոսի խոսքը բազմացվեց տպարանում և ուղարկվեց ռազմաճակատ:

Հայկական զորամասերի մարտական ոգին բարձրացնելու նպատակով ռազմաճակատ մեկնեցին Գարեգին եպիսկոպոս Հովսեփյանն ու Զավեն եպիսկոպոս Մահտեսի-Բաբայանը, ովքեր երկուսն էլ բազմիցս եղել էին դիրքերում և մեծ փորձ ունեին: Նրանք միացան հինգերորդ գնդին, որը ստացավ «Մահապարտներ» անվանումը: Նրանց հետ էին նաև Թադեոս, Հովհաննես և Եզնիկ վարդապետների հավաքագրած հինգ հարյուր մահապարտները:

Գարեգին Սրբազանի մասին Ս. Վրացյանը հետագայում գրել է. «Էջմիածնի միաբան գիտնական Գարեգին եպիսկոպոս Հովսեփյանը, իբրև նոր ժամանակների Ղևոնդ Երեց, ... շրջում էր մի մասից մյուսը և իր հրաշունչ ճառերով բարձրացնում զորքերի տրամադրությունը: Կրկնվում էին Վարդանանց պատմական օրերը»:

Հին Ղարաքիլիսան

Մայիսի 22-ին Սարդարապատում հայկական զորքերն անցան հակահարձակման: Թուրքերն սկսեցին խուճապահար նահանջել:

Բաշ Ապարանի ճակատամարտի նախօրեին նույնպես ժողովրդական պայքարի գործը ստանձնեցին հայ հոգևորականները: Տեր Հովհաննեսի և Տաճատ քահանայի կազմակերպած աշխարհազորային ջոկատներն առաջինը դիմագրավեցին թուրքական զորքերի հարձակմանը: Նրանք կասեցրին թուրքական զորքերի առաջխաղացումը, մինչև տեղ կհասներ Դ. Կանայանի (Դրո) հրամանատարությամբ գործող վեցերորդ գունդը: Մայիսի 28-ին և 29-ին, չդիմանալով հայկական բանակի ձեռնարկած հզոր հարվածներին, թուրքական բանակը դիմում է փախուստի:

Մայիսի 24-28-ը հայ ժողովուրդը հերոսական կռիվներ մղեց նաև Ղարաքիլիսայի ճակատամարտում: Հայկական կանոնավոր զորամասերին աջակցում էր հայոց կամավորական շարժման հայտնի ղեկավարներից մեկը՝ Մեսրոպ արքեպիսկոպոս Տեր-Մովսիսյանը: Դարպաս գյուղի քահանա տեր Կոմիտաս Սարգսյանը, համախմբելով մի քանի գյուղերի բնակիչների, դիմադրություն կազմակերպեց Ղարաքիլիսայի մատույցներում:

Մայիսյան հերոսամարտերի արդյունքում 1918 թ. մայիսի 28-ին հինգուկեսդարյա ընդմիջումից հետո վերականգնվեց հայոց անկախ պետականությունը:

Հայոց եկեղեցու համար սկսվեց գործունեության նոր շրջան:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ինչ վտանգ էր սպառնում հայ ժողովրդին 1918 թ. սկզբին:
2. Արևելյան Հայաստանի ո՞ր տարածքներն էին գրավել թուրքական զորքերը 1918 թ. մայիսին:
3. Ինչպիսի՞ որոշում կայացրեց Գևորգ Ե Սուրենյանց կաթողիկոսը:
4. Աշխարհազորային ի՞նչ ջոկատներ կազմավորեցին հայ հոգևորականները:
5. Ինչ դեր խաղաց Գարեգին եպիսկոպոս Հովսեփյանը Մայիսյան հերոսամարտի կազմակերպման գործում:
6. Հայ հոգևորականներն ինչպիսի՞ մասնակցություն ունեցան Ղարաքիլիսայի ճակատամարտին:
7. Ովքե՞ր կազմակերպեցին Բաշ Ապարանի ժողովրդական դիմադրությունը:

Քննարկենք

Ինչո՞ւ Հայոց կաթողիկոսը հրաժարվեց աթոռը տեղափոխել ավելի ապահով վայր: Ձեր կարծիքով, արդյո՞ք ճիշտ որոշում կայացրեց նա:

Firefox https://ebooks.bonee.net/fumf/zqdt/

ԳԵՎՈՐԳ Ե ՍՈՒՐԵՆՅԱՆՑԻ ԿՈՉԸ ԺՈՂՈՎՐԴԻՆ

- Ազգ հայոց, թուրքը՝ մեր բանական հոտի դարավոր թշնամին, նվաճել է Ալեքսանդրապոլը, շարժվում է դեպի սիրտը մեր երկրի, մեր հավատի, մեր կենսագրության: Գալիս է Արարատյան երկրի վրա: Թուրքը կոտորած ու ավեր փռելով գալիս է, և մեր զորապետներն էլ այլ ելք չեն գտնում այդ աղետից, քան Հայոց հայրապետին փախուստի մղել: Նրանք Ամենայն Հայոց կաթողիկոսին առաջարկում են ոսոխի բերանին թողնել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը, մեր սրբարանները, հայ ժողովուրդը, հայրենի երկրի վերջին կտորը: Առաջարկում են լքել այս բոլորը և սեփական կյանքը փրկել Բյուրականում կամ այլ անմատչելի լեռնաձերպի վրա: Ո՛չ և ո՛չ, հազար անգամ ո՛չ: Ես չեմ լքի մեր սուրբ նախնիներից ավանդված Մայր Աթոռը: Ես չեմ հեռանա Հայոց առաքելական եկեղեցու օջախից: Եթե հայոց զինվորությունն ու ինքը՝ հայ ժողովուրդը չեն կարողանա թշնամու առաջխաղացումը կասեցնել, եթե ի զորու չեն լինի փրկելու մեր սրբությունները, ապա թող ես նահատակվեմ հենց այստեղ, շեմի վրա՛ Մայր Աթոռի, որի գահակալի պատիվն ունեմ մեր սուրբ նախնիների արդար բարեխոսությամբ և Աստծո ողորմածությամբ: Մի՞թե մենք չպիտի կարողանանք պահպանել մեր օջախի կրակը, մեր հավատի ջահը, մեր ազգային գոյի հիմքերը: Իսկ եթե եկել է վերջը, ապա այն ինչո՞ւ չընդունենք պատվով ու քաջությամբ և ոչ թե ողորմելի զեռունի պես ոսոխի առաջ սողալով: Մեր պատմության անցյալ դարերը լիքն են քաջության օրինակներով, ներկված են նահատակների արյամբ: Դրանով չի սպառվել մեր արյունը, և չի կորսվել քաջությունը մեր շարքերից: Դարեր շարունակ հայոց ազգն այսպես է ապրել՝ իր ինքնության համար պայքարելով, իր վաղվա համար այսօր մեռնելով: Եվ որովհետև ով գաղափարի հետ է մեռնում, մեռնում է որպես հատիկը ցորյանի, ապա հատիկի մահով նոր կյանքեր են ծնվում վաղ թե անագան: Դրա համար է, որ զանգվածային կոտորածներով ու մահերով հարուստ մեր կենսագրությունը չի ունեցել և երբեք էլ չպիտի ունենա վերջին վերջակետ: Ուրեմն էլ ինչո՞ւ դավենք ապրելու և գոյատևելու մեր ազգային կերպին: Ինչո՞ւ ազգովին չբարձրանանք

60 von 122 16.02.2021, 11:19

թշնամու դեմ, որ գալիս է անդրարաքսյան իր թեթև հաջողություններով հղփացած և մեր արյան վերջին կաթիլին ծարավի...:

Եվ Վեհարանի դահլիճում ու Մայր Աթոռի բակում հավաքված ամբողջ բազմությունը կերպարանափոխված միահամուռ բացականչեց.

- Պատրաստ ենք ելնելու, Վեհափառ Տեր:

Ապա ծերունազարդ հայրապետն իր արծվային հայացքն ուղղելով ժողովրդին՝ շարունակեց.

- Ես միշտ էլ հավատացել եմ իմ ժողովրդի ոգուն: Ես գիտեմ նրա անցած ճանապարհի դառնությունները: Ես համոզված եմ նաև, որ ազգն իմ հայոց անարգ թշնամուն դեռ չի ասել իր վերջին խոսքը: Եվ խոսքն այդ պիտի լինի հաղթական:

ՀԱՏՎԱԾ ՍԱՐԴԱՐԱՊԱՏՈՒՄ ԳԱՐԵԳԻՆ ՀՈՎՍԵՓՅԱՆԻ ՈՒՆԵՑԱԾ ԵԼՈՒՅԹԻՑ

Հայ ժողովուրդն օրհասական կռիվներ շատ է ունեցել և միշտ ելք է գտել ու փրկել իրեն: Ելքը եղել է անձնազոհ հերոսությունը... Հե՛տ նայեցեք, մեզ մնացել են Երևանն ու Էջմիածինը... Եթե հերոսության չդիմենք, ամեն ինչ կորչելու է իսպառ, այլևս չի լինի ո՛չ հայ, ո՛չ հայի հայրենիք...:

Հայրենակիցնե՛ր, եղբայրնե՛ր և որդինե՛ր, հին դարերում, երբ հայոց զորքը պատրաստվում էր թշնամու դեմ գնալու, նրա հրամանատարները գալիս էին Էջմիածին՝ կաթողիկոսի մոտ՝ նրա աջը համբուրելու և օրհնությունն առնելու: Բայց այս անգամ վտանգն այնքան ահավոր է ու մեծ, որ ահա ես եմ Սուրբ Էջմիածնից եկել ձեր բոլորի ձեռքը համբուրելու, որ փրկենք հայրենիքը, փրկենք ձեր պատիվը, հայի պատիվը...:

12. ԵԿԵՂԵՑՈՒ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ 1918-1920 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

Հայաստանի Հանրապետությունը ծնվեց չափազանց բարդ ժամանակահատվածում: Երկիրը քայքայված էր: Պատերազմների հետևանքով կազմալուծվել էր տնտեսությունը: Եղեռնից փրկված հարյուր հազարավոր գաղթականներ գտնվում էին աղետալի վիճակում: Մոլեգնում էին սովն ու համաճարակները:

Ստեղծված պայմաններում միակ գերխնդիրը երկիրը դուրս բերելն էր սարսափելի ճգնաժամից: Այս առաջնային խնդրի լուծմանն էին ուղղված նաև Հայոց եկեղեցու ջանքերը:

Հայոց եկեղեցու գործունեությունն անկախ պետականության կառուցման տարիներին

Հայոց եկեղեցին իր ողջ նյութական և մարդկային ռեսուրսներն ի սպաս դրեց նորանկախ հայրենիքի կառուցման գործին: Մայր Աթոռն իրեն պատկանող շինությունների մեծ մասը տրամադրեց որբանոցներ, հիվանդանոցներ, դպրոցներ և գաղթականների ժամանակավոր կացարաններ հիմնելու համար: Ամենայն Հայոց կաթողիկոսը 1918 թ. օգոստոսին նամակներ գրեց Գերմանիայի ու Ավստրո-Հունգարիայի կայսրերին: Ներկայացնելով նորաստեղծ պետության ու գաղթականության ծանր վիճակը՝ հայրապետը նյութական օգնություն էր խնդրում նրանցից:

Հայոց եկեղեցին գործուն մասնակցություն է ունենում նաև երկրի հասարակական-քաղաքական կյանքին: Գևորգ Ե-ն մասնակցեց Հայաստանի խորհրդարանի անդրանիկ նիստին: ՀՀ կառավարության նիստերին և դիվանագիտական ընդունելություններին մշտապես ներկա էր լինում Երևանի փոխթեմակալ Խորեն եպիսկոպոս Մուրադբեկյանը:

Եկեղեցին կառավարությանը մեծ աջակցություն էր ցույց տալիս նաև ֆինանսական հարցերում, հատկապես «փոխառնության» օրինագծի իրականացման գործում: «Փոխառնության» ֆոնդին մեկ միլիոն ռուբլի հատկացնելուց հետո կաթողիկոսը դիմեց սփյուռքահայությանը՝ Հայաստանի վերաշինության գործին աջակցելու համար փոխառնության պարտաթղթեր գնելու կոչով: Ընդհանրապես Մայր Աթոռը հաճախ էր դիմում սփյուռքահայությանը՝ նորաստեղծ պետությանն օգնելու կոչերով ու հորդորներով: Այսպես, երբ 1919 թ. փետրվարին ՀՀ վարչապետ Հովհաննես Քաջազնունին պետք է մեկներ ԱՄՆ, կաթողիկոսը հայրապետական կոնդակով դիմեց ամերիկահայությանը և Հայոց եկեղեցու Ամերիկայի թեմի առաջնորդին՝ ամեն կերպ աջակցելու ՀՀ պատվիրակությանը:

Անկախ պետականության տարիներին եկեղեցու և պետության համագործակցության մի կարևոր ասպարեզ էլ արտաքին քաղաքականության ոլորտն էր: Այս ուղղությամբ Հայոց եկեղեցու ջանքերը հիմնականում ուղղված էին աջակցելու Հայաստանի Հանրապետությունում անկախության ճանաչմանը, միջազգային հանրության կողմից Արևմտյան Հայաստանի խնդրի լուծմանը, Կիլիկիայի հետագա ճակատագրին, ԱՄՆ-ի կողմից ստանալիք մանդատին և այլն:

Եկեղեցի – պետություն «դաշնագիրը»

Հայաստանում հաստատված հարաբերական անդորրը և արտաքին վտանգի առժամանակ բացակայությունը լուրջ [illegible] ստեղծեցին եկեղեցի – պետություն փոխհարաբերությունները նոր մակարդակի բարձրացնելու համար:

Հասունացել էր հայոց աշխարհիկ և հոգևոր իշխանությունների փոխհարաբերությունների իրավական կարգավորման անհրաժեշտությունը: Այդ նպատակով 1920 թ. փետրվարին կազմվեց մի ժամանակավոր «դաշնագիր»:

Դաշնագրում ասվում էր, որ Հայաստանյայց Առաքելական Մայր Եկեղեցին օրինում է Միացյալ և անկախ Հայաստա[illegible]տությունը և նրա օրինական իշխանությունը: Իսկ Հայաստանի Հանրապետությունը երաշ-

Առաջին հանրապետության երկրորդ տարեդարձը

խավորում է Մայր Աթոռի և Ամենայն Հայոց կաթողիկոսի գերիշխան իրավունքներն ազգային-եկեղեցական և կրոնաբարոյական խնդիրներում:

Մայր Աթոռն իրավունք էր ստանում բացելու դպրոցներ, հասարակական ու կրոնաբարոյական հաստատություններ: Հայոց եկեղեցին կարող էր նվիրակներ ունենալ օտար պետություններում ու եկեղեցիներում և փոխադարձաբար նրանցից լիազոր նվիրակներ ընդունելու: Նախատեսվում էր նաև լիազոր ներկայացուցիչ ունենալ ՀՀ կառավարությունում, որն էլ իր հերթին պետք է Մայր Աթոռին առընթեր ունենար իր ներկայացուցիչը: Մայր Աթոռի լիազորներին և նվիրակներին տրվում էր դիվանագիտական ներկայացուցիչներին վերապահված իրավունքներ:

Ամենայն Հայոց կաթողիկոսի անձը համարվում էր սուրբ և անձեռնմխելի:

Մայր Աթոռի լիազորները, Սինոդի անդամները, թեմական առաջնորդները և Ազգային-եկեղեցական ժողովի պատգամավորները պետք է օգտվեին անձի անձեռնմխելիության իրավունքից:

Սակայն այս դաշնագիրը չիրականացավ անկախ Հայաստանի անկման պատճառով:

Ներեկեղեցական կյանքի բարենորոգության հարցը

Անկախության տարիներին եկեղեցական գործիչներն աշխույժ բանավեճ ծավալեցին Հայոց եկեղեցու բարենորոգության խնդրի վերաբերյալ: Բանն այն է, որ թե՛ Ցարական Ռուսաստանի պարտադրած «Պոլոժենիե»-ն, թե՛ Օսմանյան Թուրքիայի պարտադրած «Ազգային սահմանադրությունը» իրականում դադարել էին գոյություն ունենալուց: Բացի այդ, Հայոց եկեղեցու գործունեության համար ստեղծվել էին նոր պայմաններ, առաջացել էր աշխարհաքաղաքական նոր իրավիճակ:

Քրիստոնեական եկեղեցիներից Հայոց եկեղեցին միակն էր, որ դարեր ի վեր հավատարիմ էր մնացել կարևորագույն խնդիրները ժողովրդի մասնակցությամբ վճռելու սկզբունքին:

Ազգային գործիչների կողմից առաջարկվող ծրագրի մեծ մասը շարադրված էր այդ սկզբունքով:

Այդ ծրագրերը վերաբերում էին հոգևոր իշխանության, թեմական վարչությունների վերակառուցման, վանական կյանքի, ժամերգության, լեզվի, Աստվածաշնչի աշխարհաբար հրատարակության, ծիսակարգի և այլ հարցերին:

Առաջարկների մեջ կարևոր տեղ էր հատկացված ամուսնության իրավունքին, կրոնական դաստիարակությանը, կրոնի դասավանդմանը, եկեղեցական բարեգործության ու կարիքավորների խնամքի կազմակերպման անհրաժեշտությանը:

Այս խնդիրները պետք է քննարկվեին Ազգային-եկեղեցական ժողովում, որին մասնակցելու էին ներկայացուցիչներ հայության աշխարհասփյուռ բոլոր հատվածներից:

Ահա այսպիսի հիմնախնդիրների լուծման ուղիներ փնտրելով էր զբաղվում Հայոց եկեղեցին, երբ 1920 թ. սեպտեմբերի վերջերին սկսվեց թուրքական բանակի հարձակումը, և գլխիվայր շրջվեց հայության հասարակական ու հոգևոր կյանքի զարգացման ողջ ընթացքը:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ներկայացրեք Հայաստանի Հանրապետության ներքին դրությունն անկախության հռչակումից հետո:
2. Որո՞նք էին եկեղեցու հիմնական անելիքները սկզբնական շրջանում:
3. Ֆինանսական ի՞նչ աջակցություն ցույց տվեց եկեղեցին կառավարությանը:
4. Արտաքին ասպարեզում ի՞նչ գործունեություն էր ծավալել եկեղեցին:
5. Համառոտ ներկայացրեք եկեղեցի – պետություն դաշնագիրը:
6. Ի՞նչ խնդիրներ էին ընդգրկված եկեղեցու բարենորոգումների առաջարկներում:

Քննարկենք

1. Գնահատեք եկեղեցու մասնակցությունն անկախ պետականության կառուցման գործին:

Լրացուցիչ նյութ

1918 թ. Խորեն եպիսկոպոս Մուրադբեկյանի ներկայացմամբ Ամենայն Հայոց կաթողիկոսը հաստատեց մի շարք կետերից բաղկացած մի «հրահանգ», որով առաջնորդվեցին հայ զինվորական քահանաները Հայաստանի Առաջին հանրապետության բանակի գոյության ողջ ընթացքում:

ՀՐԱՀԱՆԳ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՔԱՀԱՆԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ

1. Յուրաքանչյուր զինվորական քահանա պարտավոր է ունենալ մի մատյան, որի մեջ ցուցակագրելու է գնդի զինվորներին՝ ցույց տալով նրանց տեղը, որտեղացի լինելը, ընտանիքի անդամների թիվը, անունները և բնակության վայրը:

2. Գնդի բոլոր անդամները զինվորական քահանայի ծխականներն են

համարվում, ուստի քահանան պարտավոր է ունենալ չափաբերական մատյան՝ արձանագրելու համար կատարած պսակները, ծնունդները և թաղումները՝ ցույց տալով, թե ո՛ր տեղի, ո՛ր եկեղեցու մատյանի մեջ է մուծել:

3. Զինվորական քահանան ամենայն օր որոշ ժամերի լինելու է իր գնդի զինվորների մոտ, իսկ եթե գունդը տեղավորված է մաս-մաս զանազան վայրերում, պարտավոր է շարունակ այցելել նրանց:

4. Զինվորական քահանան պարտավոր է գնդապետի որոշած ազատ ժամերին դասախոսել զինվորներին Ս. Գրքից և ազգային-եկեղեցական պատմությունից՝ վառ պահելով նրանց մեջ պարտքի գիտակցությունը և սերը դեպի ազգը և ազգային սրբությունները:

5. Զինվորական քահանան պարտավոր է զինվորներին սովորեցնել «Հայր մեր» աղոթքը և երգել տալ առավոտյան քնից արթնանալուց հետո, երեկոյան քնից առաջ և ճաշին:

6. Զինվորական քահանան պարտավոր է տոն և կիրակի օրերին զինվորներին տանել այն եկեղեցին, ուր ինքը հաճախում է:

7. Եկեղեցի չեղած տեղերում զինվորական քահանան կարող է հատուկ դահլիճում սեղան պատրաստել՝ խաչով և Ավետարանով զարդարված՝ մաղթանք և առավոտյան ու երեկոյան ժամերգություն կատարելու...

ԳԼՈՒԽ 5 ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԻՆ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՇՐՋԱՆՈՒՄ

13. ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵԿԵՂԵՑՈՒ ՆԿԱՏՄԱՄԲ

1920 թ. դեկտեմբերի 2-ին Երևանի համաձայնագրով Հայաստանի Հանրապետության կառավարությունը վայր է դնում լիազորությունները, իշխանությունը փոխանցելով Հայհեղկոմին: Իշխանության գլուխ անցնելուց հետո հեղկոմը ձեռնամուխ է լինում նոր կարգերի հաստատմանը: Բոլշևիկները հենց սկզբից ժխտողական և խիստ բացասական դիրք են գրավում Հայոց եկեղեցու նկատմամբ:

Հայոց եկեղեցու համար սկսվում են ծանր ժամանակներ:

Հայոց եկեղեցին և խորհրդային իշխանությունը

Հայաստանի խորհրդայնացման շրջանում Հայոց կաթողիկոսն էր Գևորգ Ե Սուրենյանցը: Նրան բաժին է ընկնում ծանր կյանք ու դժվարին կառավարում: Բայց հայրենասեր կաթողիկոսը հանդես է բերում նուրբ դիվանագետի և հաշվենկատ քաղաքագետի ընդունակություններ:

Խորհրդային վարչակարգի առաջին հրովարտակներով եկեղեցին բաժանվում է պետությունից և դպրոցը՝ եկեղեցուց: Իշխանություն-եկեղեցի հարաբերությունները կարգավորելու համար ստեղծվում է Եկեղեցական գործերի խորհուրդ: Գևորգ կաթողիկոսի կոնդակով Խորեն արքեպիսկոպոս Մուրադբեկյանը հայտարարվում է կաթողիկոսի տեղապահ և նշանակվում կաթողիկոսի լիազոր ներկայացուցիչ կառավարության հետ հարաբերություններում: Սակայն հետագայում Հայոց եկեղեցու իրավունքները կառավարական հիմնարկների հետ փոխհարաբերություններում կտրուկ սահմանափակվում են:

Խորհրդայնացումից հետո Հայոց եկեղեցին չուներ կանոնադրություն, մի քանի տարի արդեն չէր գործում «Պոլոժենիեն», Էջմիածնի սինոդը: Հայոց եկեղեցու կառույցը պահպանելու համար կաթողիկոսի ջանքերով ստեղծվում են նոր ղեկավար մարմիններ: Հայոց եկեղեցու գերագույն կանոնադիր մարմին հռչակվում է Ազգային-եկեղեցական ժողովը, որն ուներ մեծ լիազորություններ:

Սինոդի փոխարեն ստեղծվում է աշխարհիկ և հոգևոր գործիչներից կազմված Գերագույն հոգևոր խորհուրդ, որի պարտականությունն էր կաթողիկոսի հետ խորհրդակցաբար քննարկել ու լուծել Մայր Աթոռի ընթացիկ խնդիրները:

Հետևողական աշխատանքի շնորհիվ Մայր Աթոռը կարողանում է իր իշխանության տակ պահել խորհրդային պետության մեջ գտնվող, ինչպես նաև աշխարհով մեկ տարածված հայկական թեմերը, Երուսաղեմի և Կ. Պոլսի պատրիարքարանները, և կարևոր դերակատարություն ունենում Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսության՝ Անթիլիասում (Լիբանան) գործունեություն կազմակերպելու բնագավառում:

Չնայած խորհրդային կարգերի հետևանքով առաջացած անհանդուրժողական պայմաններին՝ Գևորգ Ե Սուրենյանց կաթողիկոսը կարողանում է կատարել մի շարք բարեկարգություններ: Մեծ եղեռնի և հետագա ողբերգական իրադարձությունների պատճառով հայ ժողովուրդը քանակական հսկայական կորուստներ էր կրել: Նկատի ունենալով այս իրավիճակը՝ Հայոց հայրապետը որոշում է ավելացնել պսակադրության օրերը, արտոնել քահանաների վերամուսնությունը և այլն:

Բռնություններ և հալածանքներ: Եկեղեցիների փակումը

Խորհրդային իշխանությունն իր գոյության առաջին օրերից բռնություններ և հալածանքներ է կիրառում հայ եկեղեցու դեմ: 1920 թ. դեկտեմբերի 17-ի որոշմամբ Հայհեղկոմը դպրոցն անջատում է եկեղեցուց, իսկ երկու օր

Ս. Գայանե

Կառուցվել է շուրջ 630 թվականին, Եզր կաթողիկոսի օրոք՝ Ս. Գայանե կույսի մասունքների ամփոփավայրում կառուցված մատուռի փոխարեն:

Ս. Պողոս-Պետրոս եկեղեցին քանդվել է «Մոսկվա» կինոթատրոնը կառուցելու նպատակով՝ 1930-1931 թթ., այն իր մեջ էր ընդգրկել 5-6-րդ դարերից եկող փաճարի մնացորդները և հատկապես մույթերին պահպանված խիստ արժեքավոր որմնանկարները:

անց բռնագրավվում են Մայր Աթոռի շենքերը և ունեցվածքի մեծ մասը, այդ թվում ճեմարանի շենքը, մատենադարանը, թանգարանը, տպարանը, Ս. Հռիփսիմեի, Ս. Գայանեի վանքերը և Զվարթնոցի տաճարը, վանքապատկան այգիները: Հողի ազգայնացման մասին հրովարտակը հարցականի տակ է դնում Հայոց եկեղեցու հետագա գոյությունը:

Հայհեղկոմն ընդունում է որոշում, որով կառավարությունը պետականացնում է Ս. Էջմիածնի վանքի արժեքները: Եկեղեցական ունեցվածքի բռնագրավումը շարունակվում է նաև հաջորդ տարիներին: Էջմիածնից խլվում են նրա ձեռքում մնացած վանքապատկան հողերը և ստեղծվում են կոլտնտեսություններ: Մայր Աթոռը շատ ջանքեր է գործադրում իր կալվածքները վերադարձնելու համար, բայց հաջողության չի հասնում:

Բոլշևիկյան վարչակարգը ոչ միայն բռնագրավում է Հայոց եկեղեցու ունեցվածքը, այլև բռնություններ է գործադրում հոգևորականության նկատմամբ: Հոգևորականությունը մեղադրվում է հակահեղափոխական քարոզչության և այլ հանցագործությունների մեջ: Կալանավորվում են բազմաթիվ

միաբաններ, տասնյակ քահանաներ ստիպված հրաժարվում են հոգևոր ծառայությունից: Հալածանքները շարունակվում են նաև հետագա տարիներին: Խորհրդային կառավարությունն իրար ետևից փակում է եկեղեցիները, վանքերն ու աղոթարանները: Հայաստանի խորհրդայնացման առաջին տարիների ընթացքում Հայաստանում և ԽՍՀՄ տարածքում փակվում են 20-ից ավելի հայկական եկեղեցիներ ու վանքեր: Դադարում է գործել Վրաստանի հայոց թեմը:

Հետագա տարիներին շարունակվում է վանքերի և եկեղեցիների փակումն ու ավերումը: Երևանում քանդվում են Ս. Պետրոս-Պողոս և Նորքի Ս. Սիմեոն Ծերունի եկեղեցիները: Հայաստանի խորհրդայնացման առաջին տասնամյակում բազմաթիվ շրջաններում որևէ գործող եկեղեցի չի մնում:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ե՞րբ Հայաստանը խորհրդայնացվեց:
2. Ե՞րբ Հայհեղկոմը որոշում ընդունեց Ս. Էջմիածնի արժեքները բռնագրավելու մասին:
3. Ինչպե՞ս էին վերաբերվում բոլշևիկները Հայոց եկեղեցուն:
4. Ի՞նչ քայլերի էին դիմում բոլշևիկները Հայոց եկեղեցին թուլացնելու համար:

Քննարկենք

1. Ինչո՞ւ էին բոլշևիկները բացասաբար վերաբերվում Հայոց եկեղեցուն:

Բառարան

Առաջնորդական վիճակ – թեմ, եպիսկոպոսություն, առաջնորդություն: Հայաստանյայց առաքելական եկեղեցու հոգևոր վարչատարածքային միավոր:

Լրացուցիչ նյութ

ՀՍԽՀ ժողկոմխորհի նախագահ Ս. Լուկաշինին ուղղված Ամենայն Հայոց կաթողիկոսի տեղակալ Խորեն արքեպիսկոպոս Մուրադբեկյանի 1924 թ. փետրվարի 11-ի գրությունից.

Փակված են Դարալագյազի շրջանի Արփա, Աղավնաձոր, Գենշիկ, Ախազ, Քեշիշքենդ, Աչիկ, Ենգիջա ու Ղամարլվի շրջանի Յուվա գյուղերի եկեղեցիները: Յուրաքանչյուր գյուղում եկեղեցիները փակելու գործում հանդես են եկել մի քանի անձնավորություններ միայն, ովքեր և իրենց կողմից սպառնացել են գյուղի ազգաբնակչությանը՝ չհամարձակվել բողոքել: Այդ պատճառով էլ հավատացյալ անկուսակցական գյուղացիությունը գրավոր բողոք ստորագրելուց խուսափել է՝ երկյուղ կրելով բանտարկությունից ու պատժից:

Որպես ապացույց վերոգրյալին, պարտք եմ համարում մի երկու դեպք առաջ բերել:

1. Երբ փակել են Քեշիշքենդի եկեղեցին, մի խումբ կանայք դիմել են շրջգործկոմին և խնդրել բանալ եկեղեցին: Եկեղեցին, իհարկե, չի բացվել, բայց հետևյալ օրը բանտարկվում է քահանան, որը քսան օր բանտում նեղություններ կրելուց հետո երաշխավորությամբ ազատվում է:

2. Եկեղեցիների փակման գործում դեր է խաղացել մի պաշտոնյա՝ Ղարագյուլյան ազգանունով, ով Աչիկ գյուղի եկեղեցին փակել տալուց հետո կանչում է քահանային, անպատվում, սպառնում ու ստորագրություն է վերցնում քահանայից, որ քահանայագործություն չանի:

3. Ղամարլուի շրջանի Յուվա գյուղի եկեղեցին փակվում է, և ժողովրդի խոշորագույն մասը մի քանի անգամ դիմում է շրջգործկոմին ու խնդրում բանալ եկեղեցին: Ժողովուրդը մի քանի անգամ դիմում է ինձ ու իմ միջնորդությունը խնդրում: Այս երկու օրս վերջին ծայր հուսահատության հասնելով, երկյուղը մեկդի թողած՝ որոշում են գրավոր դիմումն ուղարկել, որով խնդրում են իմ միջնորդությունը: Դժբախտաբար, այդ խնդրի հետևանքով շրջգործկոմը յուվացիներից հինգ հոգու, որոնց մեջ և քահանային, բանտարկում է: Ժողովրդից մի մեծ խումբ գնում է Ղամարլու, խնդրում, որ բանտարկյալներին ազատեն, քանի որ առաջնորդին ուղարկված խնդրի տակ ստորագրել են բոլորը: Դիմումը ոչ մի արժեք չի ունենում...:

Ս. Ստեփանյանց. Հայ Առաքելական եկեղեցին ստալինյան բռնապետության օրոք, Երևան, 1994, էջ 38-39:

14. ՀԱԼԱԾԱՆՔՆԵՐԻ ՆՈՐ ՇՐՋԱՆ: ԽՈՐԵՆ Ա ՄՈՒՐԱԴԲԵԿՅԱՆ

1930-ական թվականներին Հայոց եկեղեցու նկատմամբ ճնշումներն ու բռնություններն աննախադեպ չափեր են ընդունում:

Բոլշևիկյան իշխանությունները և կաթողիկոսի ընտրությունը

Խորեն Ա Մուրադբեկյան (1932-1938)

Գևորգ Ե Սուրենյանց կաթողիկոսի մահից հետո Հայոց եկեղեցու ղեկն անցնում է կաթողիկոսական տեղապահ Խորեն արքեպիսկոպոս Մուրադբեկյանին: Կաթողիկոսի տեղապահին և ողջ հայ հոգևորականությանն այդ ժամանակ մտահոգող հիմնական հարցը կաթողիկոսի ընտրության խնդիրն էր: Նրանք վախենում էին, որ Հայոց եկեղեցու նկատմամբ թշնամական դիրք բռնած բոլշևիկյան իշխանությունները կօգտագործեն ստեղծված իրավիճակը և կփակեն Ս. Էջմիածինը: Սակայն իշխանությունները վախենում էին, որ կաթողիկոսական ընտրություններ թույլ չտալու դեպքում այն սփյուռքի պահանջով կարող է տեղի ունենալ արտասահմանում:

Երկար ձգձգումներից հետո, ի վերջո, խորհրդային իշխանությունները թույլ են տալիս հրավիրել Ազգային-եկեղեցական ժողով: Այն բացվում է Էջմիածնում 1932 թ. նոյեմբերին:

Ժողովում Ամենայն Հայոց կաթողիկոս է ընտրվում Խորեն արքեպիսկոպոս Մուրադբեկյանը: Խորեն կաթողիկոսը հայրենասեր ու սկզբունքային անձնավորություն էր: Նրան բաժին է ընկնում ծանր կյանք ու դժվարին կառավարում: Քանդվում ու ոչնչանում էին եկեղեցիները, ձերբակալվում ու աքսորվում էին հոգևորականները:

Չնայած այս դժոխային պայմաններին՝ Հայոց հայրապետն անդուլ աշխատանքով ու համառությամբ կարողանում է պահպանել Հայոց եկեղեցու բազմադարյան ավանդույթները: Նրա նախաձեռնությամբ 1934-1935 թթ. սփյուռքում մեծ շուքով ու հանդիսություններով տոնվում է Աստվածաշնչի հայերեն թարգմանության 1500-ամյակը: Նա զգալի ջանքեր է գործադրում Էջմիածնի հոգևոր ճեմարանի բացման, ամսաթերթ հրատարակելու և Մայր Տաճարի վերանորոգման համար: Խորեն կաթողիկոսը մեծ աշխատանք է

տանում սփյուռքահայության, սփյուռքի թեմերի և նվիրապետական աթոռների կապը Մայր Աթոռի հետ ամրացնելու և ճկուն փոխհարաբերություններ հաստատելու ուղղությամբ:

Խորեն Ա-ին մտահոգում էին նաև եկեղեցական նոր սահմանադրության մշակման և Հայոց եկեղեցու բարենորոգության հարցերը: 1937 թ. նա Գերագույն հոգևոր խորհրդի հետ պատրաստում է բարենորոգության մի ծրագիր և նույն թվականի օգոստոսին հատուկ կոնդակով ուղարկում է նվիրապետական աթոռներ՝ քննարկման և կարծիքի համար: Բայց Ազգային-եկեղեցական ժողով հրավիրել ու ծրագիրը հաստատել չի հաջողվում:

Խորեն կաթողիկոսի սպանությունը: Հայոց կաթողիկոսությունը վերացնելու փորձերը

1937 թ. տեղի ունեցած ԽՍՀՄ Կենտգործկոմի նստաշրջանը հերթական անգամ հակախորհրդային գործունեության անհիմն մեղադրանքներ է ներկայացնում եկեղեցուն: Դա նշանակում էր եկեղեցու նկատմամբ բռնությունների և հալածանքների նոր ալիք: 1937 թ. աշնանը Հայաստան են գալիս Գ. Մալենկովը և Ա. Միկոյանը, ովքեր իրենց հետ բերել էին Ստալինի նամակ-ցուցումը՝ հայ ժողովրդի թշնամիների դեմ անողոք պայքար մղելու մասին:

Նրանք նախևառաջ թշնամիներ էին համարում Հայոց եկեղեցուն՝ հոգևորականությանը: Իշխանությունների կրոնական անհանդուրժողականությունը հասնում է իր գագաթնակետին: Խնդիր է դրվում վերջնականապես վերացնել Հայոց եկեղեցին, կաթողիկոսությունը: Անհրաժեշտ էր դիտվում Մայր Աթոռը զրկել գոյության միջոցներից և հաշվեհարդար տեսնել Հայոց կաթողիկոս Խորեն Ա-ի հետ: Բոլշևիկյան իշխանությունները 1937 թ. քանդում ու ոչնչացնում են մշակութային մեծ արժեք ներկայացնող VII դարի կառույց Երևանի Ս. Կաթողիկե եկեղեցին:

Սկսվում են հոգևորականների զանգվածային ձերբակալությունները: Նրանց մի մասը գնդակահարվում է, իսկ մյուսները՝ աքսորվում: 1937 թ. Էջմիածնի կաթողիկոսարանի 75 կալանավորված սպասավորներից 70-ը աքսորվում են:

Հայոց եկեղեցին վերացնելու ճանապարհին հաջորդ քայլը ծանր հարկերի միջոցով Մայր Աթոռը տնտեսապես վերջնականապես քայքայելն էր: Այդ նպատակով 1938 թ. փետրվարին Հայաստանի ժողկոմխորհը որոշում է ընդունում Էջմիածնի վանքից հարկեր գանձելու մասին: Եկամտահարկի չափն անցնում էր 120 հազար ռուբլուց, այն դեպքում, երբ վանքի տարեկան եկամուտը կազմում էր ընդամենը 40–50 հազար ռուբլի: Եկեղե-

ցուց պահանջվում էր վճարել նաև 1936-1937 թթ. պարտքերը, ավելի քան 200 հազար ռուբլի: Չվճարելու դեպքում ԽՍՀՄ ֆինանսների ժողկոմատի հանձնարարությամբ Մայր Աթոռից պետք է առգրավվեին ու վաճառվեին նրա 2 ջրաղացները: Խորեն Ա կաթողիկոսը կոնդակով դիմում է Հայաստանի Կենտգործկոմի նախագահին՝ խնդրելով տնտեսապես ծանր վիճակում գտնվող կաթողիկոսարանն ազատել հարկերից, բայց հաջողության չի հասնում:

Այդ ամենից հետո բոլշևիկյան իշխանություններն իրականացնում են իրենց հանցավոր ծրագրի հաջորդ քայլը՝ գլխատում են Հայոց եկեղեցին: Այդ գործը հանձնարարվում է պետանվտանգության գաղտնի բաժնի աշխատողներին: Նրանք սկզբում հաշվեհարդար են տեսնում Խորեն կաթողիկոսի հարազատների ու մերձավորների հետ: 1937 թ. գնդակահարվում են կաթողիկոսի երկու եղբայրները: Խորեն Ա-ն ծանր ապրումների մեջ էր, երբ 1938 թ. ապրիլի 5-ի լույս 6-ի գիշերը վեհարանի իր ննջասենյակում խեղդամահ է արվում պետանվտանգության ծպտյալ գործակալների կողմից: Հայաստանի կառավարությունը, կեղծելով իրողությունը, պաշտոնապես հայտարարում է, որ իբր կաթողիկոսը մահացել է սրտի կաթվածից:

Այս դեպքից մեկ օր հետո ներքին գործերի ժողկոմատի աշխատողները մտնում են վեհարանի գանձարանը և բռնագրավում Մայր Աթոռի գանձերը:

1938 թ. օգոստոսի 4-ին ՀԿ(բ)Կ Կենտկոմը որոշում է փակել Մայր Աթոռ Ս. Էջմիածինը:

1938 թ. օգոստոսի 8-ին այդ որոշումը հաստատելու համար ՀԿ(բ)Կ Կենտկոմի առաջին քարտուղար Գր.Հարությունյանը դիմում է ՀամԿ(բ)Կ Կենտկոմ: Սակայն Մոսկվան, հաշվի առնելով ստեղծված միջազգային լարված իրադրությունը, թույլ չի տալիս փակել Ս. Էջմիածինը և վերացնել կաթողիկոսությունը:

Հարցեր և առաջադրանքներ

1. Որտեղ և երբ բացվեց Ազգային-եկեղեցական ժողովը:
2. Ազգային-եկեղեցական ժողովն ո՞ւմ ընտրեց Հայոց կաթողիկոս:
3. Երբ տոնվեց Աստվածաշնչի հայերեն թարգմանության 1500-ամյակը:
4. 1937 թ. ո՞ր եկեղեցին քանդվեց և ոչնչացվեց:
5. 1938 թ. ի՞նչ որոշում ընդունեց Հայաստանի Ժողկոմխորհը:
6. Տարեկան որքա՞ն եկամտահարկ էր գանձվելու Էջմիածին վանքից:
7. Ինչքա՞ն էր վանքի տարեկան եկամուտը:
8. Ինչպե՞ս վարվեցին բոլշևիկները Խորեն Ա Մուրադբեկյան կաթողիկոսի հետ:
9. 1938 թ. օգոստոսի 4-ին ՀԿ(բ)Կ Կենտկոմն ի՞նչ որոշեց:

Քննարկենք

1. Ինչն էր պատճառը, որ բոլշևիկները թույլատրեցին Ազգային-եկեղեցական ժողով գումարել:
2. Ինչո՞ւ Աստվածաշնչի հայերեն թարգմանության տոնը նշվեց սփյուռքում և ոչ թե Հայաստանում:
3. Ինչո՞ւ Մոսկվան թույլ չտվեց փակել Էջմիածնի վանքը:

Բառարան

Կաթողիկոսական տեղապահ – կաթողիկոսի բացակայության կամ մահվան դեպքում (մինչև նոր կաթողիկոս ընտրելը) նրա պարտականությունները կատարող բարձրաստիճան հոգևորական:

Լրացուցիչ նյութ

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը փակելու առաջարկով 1938 թ. օգոստոսի 8-ին Ի. Ստալինին դիմեց Հայաստանի բոլշևիկների ղեկավար Գր. Հարությունյանը, որն իր նամակում մասնավորապես գրում էր. «Հայաստանում, շրջկենտրոն Վաղարշապատում, որը գտնվում է սահմանից 10-12 կմ հեռավորության վրա, մինչև այժմ գոյություն ունի Էջմիածնի վանքը: Այստեղ տեղավորված է Հայոց կաթողիկոսի նստավայրը, որը գոյատևում է արտասահմանի հայ հոգևորականության կողմից ուղարկվող միջոցների հաշվին...

Հայ հոգևորականությունը Հայաստանում անընդհատ տարել է քայքայիչ և լրտեսական աշխատանք, կապված լինելով արտասահմանում գտնվող հակահեղափոխական կուսակցությունների՝ դաշնակների, ռամկավարների և մյուս «ընկերությունների» կենտրոնների հետ:

Վերջերս մահացած Խորեն Մուրադբեկյան կաթողիկոսն ինքն էր հանդիսանում դաշնակցական կուսակցության ակտիվ անդամներից մեկը և հեղափոխական աշխատանքի գծով կապված էր Խանջյանի, Տեր-Գաբրիելյանի և ուրիշների հետ:

1937 թ. Էջմիածնի կաթողիկոսարանում աշխատում էր մի քանի հոգևոր անձ, որոնց մեծ մասը մեր կողմից ձերբակալվել է ակտիվ հակահեղափոխական աշխատանք կատարելու համար:

Ներկայումս Էջմիածնի կաթողիկոսարանում մնացել է 7 մարդ՝ կրոնական պաշտամունքի ծառայող՝ հանդիսանալով հակախորհրդայնորեն տրամադրված դաշնակներ:

ՀԿ/բ/Կ Կենտկոմը, քննարկելով Էջմիածնի վանքի և կաթողիկոսարանի մասին հարցը, որոշեց, քանի որ ունեցած նյութերը մերկացնում են Էջմիածնի կաթողիկոսությանը խորհրդային իշխանության և հայ ժողովրդի դեմ ակտիվ պայքարի գործում, փակել Էջմիածնի վանքը՝ վերածելով թանգարանի, նոր կաթողիկոսի ընտրություններ չանցկացնել և վերացնել հոգևորականության կենտրոն Էջմիածնի կաթողիկոսությունը: Խնդրում ենք ՀամԿ/բ/Կ Կենտկոմին՝ հաստատել»:

Ստեփան Կերտող. Գիրք փառապելոց, Երևան, 2002, էջ 9-10:

15. ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԻՆ ԵՐԿՐՈՐԴ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ

Խորհրդային ղեկավարությունը հասկանալով Երկրորդ համաշխարհային պատերազմի անմիջական վտանգը և նկատի ունենալով եկեղեցու մեծ հեղինակությունը և ազդեցությունը հասարակության մեջ՝ առժամանակ թուլացնում է հակակրոնական քաղաքականությունը:

Եկեղեցին Հայրենական պատերազմի նախօրյակին

Խորեն Ա Մուրադբեկյան կաթողիկոսի եղերական վախճանից հետո, նրա կտակի համաձայն, կաթողիկոսության գործերի տնօրինումը հանձնվում է Գևորգ արքեպիսկոպոս Չորեքչյանին:

Չնայած Հայոց եկեղեցու ծանր վիճակին՝ Գևորգ արքեպիսկոպոսը կարողանում է համբերությամբ ու շրջահայացությամբ ապահովել Մայր Աթոռը պահպանելու գործը:

Համաձայնություն ձեռք բերելով Խորհրդային Հայաստանի Գերագույն խորհրդի նախագահ Մ. Պապյանի հետ, Գևորգ արքեպիսկոպոսը հրավիրում է Ազգային-եկեղեցական ժողով 1941 թ.: Սակայն ժողովը եպիսկոպոսների թվի և արտասահմանյան երկրներից պատգամավորների ոչ բավարար քանակի պատճառով չի կարողանում կաթողիկոս ընտրել: Ժողովի որոշմամբ Գևորգ արքեպիսկոպոսը, որպես ազգընտիր տեղապահ, շարունակելու էր ղեկավարել եկեղեցին:

Եկեղեցին Հայրենական պատերազմի տարիներին

1941 թ. հունիսի 22-ին ֆաշիստական Գերմանիան հարձակվում է ԽՍՀՄ-ի վրա: Սկսվում է Հայրենական մեծ պատերազմը:

Հայ ժողովուրդը խորհրդային մյուս ժողովուրդների հետ միասին ոտքի է կանգնում պաշտպանելու ընդհանուր հայրենիքը: Հայոց եկեղեցին, մի կողմ թողնելով խորհրդային վարչակարգից կրած տառապանքները և վեր դասելով ազգային շահը, հանդես է գալիս Խորհրդային Միության պաշտպանության կոչերով: Ազգընտիր տեղապահը դիմում է համայն հայությանը՝ համախմբվելու և սատար կանգնելու հայ ժողովրդի միակ հայրենիքին՝ Խորհրդային Հայաստանին: Մայր Աթոռի կոչերը լայն արձագանք են գտնում թե՛ Մայր հայրենիքում և թե՛ սփյուռքում, որին հաջորդում է սփյուռքահայության նյութական և բարոյական աջակցությունը:

Մայր Աթոռի և նրա կողմից հանգանակված միջոցներով ստեղծվում են «Սասունցի Դավիթ» տանկային երկու շարասյուները:

Պատերազմի տարիներին, խորհրդային կառավարությունն ավելի է մեղմացնում քաղաքականությունը եկեղեցու նկատմամբ: Խորհրդային զորքերը մոտենում էին Եվրոպայի սահմաններին, և եկեղեցին կարող էր մեծ դեր խաղալ ԽՍՀՄ-ի նկատմամբ եվրոպական ժողովուրդների մոտ դրական կարծիք ստեղծելու գործում:

1943 թ. Հայաստանի կառավարությանը կից ստեղծվում է Եկեղեցու գործերի խորհուրդ, որը միջնորդի դեր էր կատարելու եկեղեցու և պետության միջև, ինչպես նաև ԽՍՀՄ ժողկոմխորհը որոշում է ընդունում եկեղեցիների վերաբացման կարգի մասին: Այս ամենը հնարավորություն է տալիս Հայոց եկեղեցուն որոշ չափով վերականգնելու իր բռնադատված իրավունքները: Օգտվելով նպաստավոր պայմաններից՝ ազգընտիր տեղապահը գործնական քայլերի է դիմում Էջմիածնի հոգևոր ճեմարանի վերաբացման, բանտերում և աքսորներում գտնվող ավելի քան 300 հոգևորականների ազատ արձակման և այլ հարցերի լուծման համար: Այդ ջանքերի շնորհիվ վերականգնվում է Վրաստանի Հայոց թեմը, վերաբացվում են մի շարք եկեղեցիներ: Սկսում է հրատարակվել «Էջմիածին» ամսագիրը: Եկեղեցու գործուն մասնակցությամբ վերականգնվում է Վաղարշապատ քաղաքի ու շրջանի Էջմիածին անվանումը:

Հայոց եկեղեցու աճող հեղինակության մասին է վկայում 1945 թ. ապրիլի 19-ին Գևորգ արքեպիսկոպոսի հանդիպումը և զրույցը Ի. Ստալինի հետ: Ստալինը բարեհաճությամբ է ընդունում ազգընտիր տեղապահին, բարձր գնահատում նրա հայրենասիրական գործունեությունը պատերազմի ընթացքում: Գևորգ արքեպիսկոպոսը Ստալինին է ներկայացնում 11 կետից բաղկացած զեկուցագիր: Զեկուցագրում խոսվում էր Էջմիածնի հոգևոր ճեմարանի և տպարանի բացման, Խոր Վիրապ, Հռիփսիմե և Գեղարդ վանքերը վերադարձնելու, Զվարթնոցի տաճարի վերակառուցման, սփյուռքից հոգևորականներ հրավիրելու և արտասահման մեկնելու թույլտվության ու այլ հարցերի մասին: Ստալինը խոստանում է լուծել բոլոր հարցերը, բացառությամբ Էջմիածնապատկան կալվածքները վերադարձնելու հարցից, քանի որ նշված հողատարածքները գտնվում էին կոլտնտեսությունների

տրամադրության տակ: Հանդիպման ժամանակ կաթողիկոսական տեղապահը բարձրացնում է նաև Թուրքիայից հայկական հողերը վերադարձնելու հարցը:

1945 թ. մայիսին 9-ին խորհրդային ժողովրդի հաղթանակով ավարտվում է Հայրենական մեծ պատերազմը: Այդ մեծ հաղթանակի առթիվ մայիսի 10-ին Հայաստանի եկեղեցիներում տրվում է հանդիսավոր պատարագ:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ինչպիսին էր Հայոց եկեղեցու վիճակը Երկրորդ աշխարհամարտի նախօրեին:
2. Ո՞վ էր Գևորգ արքեպիսկոպոս Չորեքչյանը և ինչ գործունեություն է ծավալել:
3. Ինչպիսի՞ մասնակցություն ունեցավ Հայոց եկեղեցին Հայրենական պատերազմին:
4. Ինչպիսին էր խորհրդային իշխանության դիրքորոշումը Հայոց եկեղեցու նկատմամբ Հայրենական պատերազմի ընթացքում:

Քննարկենք

1. Ինչո՞ւ Հայոց եկեղեցին ակտիվ մասնակցություն ունեցավ Հայրենական պատերազմին:
2. Ինչո՞ւ խորհրդային իշխանությունները փոխեցին իրենց վերաբերմունքը Հայոց եկեղեցու նկատմամբ:

Firefox https://ebooks.bonee.net/fumf/zqdt/

«ՍԱՍՈՒՆՑԻ ԴԱՎԻԹ» ՏԱՆԿԱՅԻՆ ԵՐԿՈՒ ՇԱՐԱՍՅՈՒՆԵՐԻ ՍՏԵՂԾՄԱՆ ՄԱՍԻՆ

Կաթողիկոսական տեղապահ Գևորգ արքեպիսկոպոս Չորեքչյանը որոշում է հանգանակությունների միջոցով ստեղծել «Սասունցի Դավիթ» տանկային շարասյունը՝ օժանդակելու խորհրդային բանակին: Առաջին մուծումները կատարում է ինքը՝ հատկացնելով 800 հազար ռուբլի ընդհանուր արժողությամբ թանկարժեք իրեր՝ պլատինից ու ադամանդից: Կարճ ժամանակամիջոցում սփյուռքահայության ջանքերով հավաքվում է մեծ գումար և ուղարկվում Խորհրդային Հայաստան: Այդ գումարներով պատրաստվում է 21 տանկ և 1944 թ. ուղարկվում ռազմաճակատ: Շուտով հավաքվում է 250 հազար դոլարից ավելի գումար և կառուցվում է «Սասունցի Դավիթ» տանկային 2-րդ շարասյունը, որը 1944 թ. մայիսին ուղարկվում է գեներալ Բաղրամյանի հրամանատարությամբ գործող Մերձբալթյան ռազմաճակատ:

«Սասունցի Դավիթ» տանկային շարասյունը

80 von 122 16.02.2021, 11:19

16. ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ: ԳԵՎՈՐԳ Զ ՉՈՐԵՔՉՅԱՆ

1945 թ. Ազգային-եկեղեցական ժողովը

Հայոց եկեղեցու նկատմամբ խորհրդային իշխանությունների հանդուրժողական վերաբերմունքը շարունակվում է նաև հետպատերազմյան տարիներին: Պատերազմից անմիջապես հետո Հայոց եկեղեցու կյանքում տեղի ունեցած ամենակարևոր իրադարձությունը Ազգային-եկեղեցական ժողովի հրավիրումն էր: Ժողովի բացումը տեղի է ունենում 1945 թ. հունիսի 16-ին Էջմիածնում: Ժողովի աշխատանքներին մասնակցում են 100-ից ավելի հոգևոր և աշխարհիկ պատգամավորներ ԽՍՀՄ-ից, Ամերիկայից, Եվրոպայից, Եգիպտոսից, Իրանից, Հնդկաստանից և այլ վայրերից: Ներկա էին նաև եկեղեցու գործերով պետական մարմինների ներկայացուցիչները:

Ազգային-եկեղեցական ժողովն ընդունում է Հայոց եկեղեցու նոր սահմանադրությունը և ազգընտիր տեղապահ Գևորգ արքեպիսկոպոս Չորեքչյանին ընտրում Ամենայն Հայոց կաթողիկոս: Կաթողիկոս ընտրվելու կապակցությամբ Գևորգ Զ-ն Ստալինից նվեր է ստանում խորհրդային մակնիշի մարդատար ավտոմեքենա: Ֆրանսահայ պատվիրակներն իրենց հերթին Ստալինին նվեր են ուղարկում մարոկկոյական հնագույն մի սուր՝ հույս հայտնելով, թե վերջինս այդ սրով պատուհան կբացի դեպի հայոց հողերը:

Գևորգ Զ Չորեքչյան

Որպես կաթողիկոս Գևորգ Զ-ն ավելի լայն գործունեություն է ծավալում: Նա կարևոր քայլեր է ձեռնարկում Հայոց եկեղեցու վարչական ղեկավարության ամրապնդման ուղղությամբ: 1920-1930-ական թթ. բռնությունների հետևանքով եկեղեցականների քանակը պակասել էր և թուլացել եկեղեցու վարչական կառույցը: Եպիսկոպոսական պաշտոնները զբաղեցնում էին քահանաները, լավագույն դեպքում՝ վարդապետները: Արդեն 1945 թ. ամռանը Գևորգ Զ-ն եպիսկոպոս է ձեռնադրում մեկ տասնյակից ավելի հոգևորականների: Նրա կաթողիկոսության տարիներին բացվում են մի շարք եկեղեցիներ: Մայր Աթոռին են վերադարձվում Հռիփսիմեի, Գեղարդի և Խոր Վիրապի վանքերը: Հայոց եկեղեցու կառուցվածքում հայտնվում են նոր թեմեր ԽՍՀՄ-ում և արտասահմանում: 1948 թ. Հայոց եկեղեցին ուներ 6 ներքին և 14 արտասահմանյան թեմեր, Հայաստանում գործող 13 եկեղեցիներ և 3 վանքեր:

Գևորգ Զ Չորեքչյան (1945-1954)

1945 թ. հոկտեմբերին Հայոց կաթողիկոսը կոնդակով դիմում է Խորհրդային Միության, ԱՄՆ-ի և Անգլիայի կառավարություններին հայկական հողերը Թուրքիայից հետ ստանալու խնդրանքով: 1947 թ. ապրիլին առաջիկա Հայկական համաշխարհային կոնգրեսի հրավիրման հետ կապված հրապարակվում է Հայոց կաթողիկոսի ընդարձակ կոնդակը «Հայկական հարցի լուծման մասին»: Դրանից հետո՝ 1947 թ. ապրիլի 30-ին, Նյու Յորքում բացվում է Հայկական համաշխարհային կոնգրեսը, որի աշխատանքներին մասնակցում էին 700-ից ավելի պատգամավորներ աշխարհի 22 երկրներից: Կոնգրեսի օրակարգի հիմնական հարցը հայոց պահանջատիրության խնդիրն էր: Խորհրդային Հայաստանի կառավարությունը կաթողիկոսին և կոնգրեսի խորհրդահայ պատգամավորներին թույլ չի տալիս մասնակցելու նրա աշխատանքներին: Կաթողիկոսը հայրենասիրական շնչով գրված ողջույնի հեռագիր է ուղարկում կոնգրեսի մասնակիցներին: Կոնգրեսում հայկական տարածքների վերաբերյալ ընդունված ընդարձակ որոշումը և հուշագիրը հանձնվում է ԱՄՆ-ի կառավարությանը և ՄԱԿ-ի ղեկավարությանը:

ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարին ուղղված նամակում Հայոց հայրապետը առաջարկում է քննարկել հայկական տարածքների հարցը և ապահովել առավելագույն հնարավորություններ Խորհրդային Հայաստան սփյուռքահայերի վերադարձի համար: Սակայն Հայաստանի կառավարությունը, ծանոթանալով այդ փաստաթղթին, արգելում է նամակի առաքումը:

1940-ական թվականների վերջին կրկին փոխվում է ԽՍՀՄ պետական մարմինների քաղաքականությունը հայ ժողովրդի և Հայոց եկեղեցու նկատմամբ: Հայկական հարցը մղվում է երկրորդական պլան: Կրկին ավերվում և քանդվում են հայկական եկեղեցիները: 1947 թ. Երևանում քանդվում են Նորքի, իսկ 1949 թ.՝ Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցիները: Դրանք փրկելու ուղղությամբ Ամենայն Հայոց կաթողիկոսի գործադրած ջանքերն անցնում են անարդյունք:

Երևանի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին

Աշխատանքներ՝ սփյուռքի հետ կապերը վերականգնելու և հոգևոր-մշակութային կյանքը վերականգնելու ուղղությամբ

Գևորգ Զ-ն մեծ աշխատանք է տանում նաև սփյուռքահայ գաղթավայրերի հետ տարիներ ի վեր խզված կապերը վերականգնելու, սփյուռքի եկեղեցական ու ազգային միասնությունն ապահովելու ուղղությամբ: Նրա հետևողական աշխատանքի շնորհիվ աստիճանաբար վերականգնվում են սփյուռքի հայության վստահությունը և հավատը Մայր Աթոռի և Խորհրդային Հայաստանի նկատմամբ:

Հայոց եկեղեցին կարևոր դեր է խաղում նաև 1946-1948 թթ. սփյուռքահայերի հայրենադարձության կազմակերպման գործում:

Մեծ հարգանքի է արժանի Հայոց կաթողիկոսի հոգևոր-մշակութային գործունեությունը: Նրա ջանքերի շնորհիվ վերաբացվում է Էջմիածնի հոգևոր ճեմարանը, տպարանը, վանքի գրադարանը, կարգավորվում է «Էջմիածին» հանդեսի հրատարակությունը:

Կաթողիկոսի հայրապետական կոնդակով ամբողջ աշխարհի հայությունը տոնում է Վարդանանց դյուցազնամարտի 1500-ամյակը:

Հայոց հայրապետը ձեռնամուխ է լինում Էջմիածնի տաճարի նորոգման աշխատանքներին, սակայն վերահաս մահը խանգարում է այդ ծրագրերի իրականացմանը: Նա մահանում է 1954 թ. մայիսի 9-ին: Գևորգ Զ Չորեքշյանը վաստակում է «Հայրենասեր» պատվանունը, որը դրոշմվում է նրա շիրմաքարին:

Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո կապիտալիստական և սոցիալիստական երկրների միջև սկսվում է սառը պատերազմի քաղաքականությունը: Միմյանց նկատմամբ հաջողության հասնելու համար նրանք միջոցների մեջ խտրականություն չեն դնում: Քաղաքական շահարկումների առարկա է դառնում նույնիսկ Հայոց եկեղեցին:

Խորհրդային Միությունն իր ազդեցությունը հայկական սփյուռքում ուժեղացնելու համար ձգտում է համայն հայությունը համախմբել Էջմիածնի շուրջ: Սակայն ԽՍՀՄ հակառակորդները, օգտագործելով խորհրդային իշխանությունների կողմից նախորդ տարիներին Հայոց եկեղեցու նկատմամբ կատարված բռնարարքների փաստը, ինչպես նաև կոմունիստական կուսակցության աթեիստական քաղաքականությունը, հակագործողություններ են ձեռնարկում:

Ճեմարանի շենքը

Կիլիկիայի կաթողիկոսություն. կաթողիկոսանիստը՝ Անթիլիասի (Լիբանան) Ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր տաճարն է 1941-ից: Ճանաչում է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի գահերեցությունը և նախամեծարությունը: 1909-ի Ադանայի կոտորածի, ապա Մեծ եղեռնի հետևանքով Կիլիկիան հայաթափվել է: Ջարդերից փրկվածները գաղթել են առավելապես Սիրիա, Լիբանան:

Գարեգին Ա Հովսեփյան

Անթիլիաս՝ Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին

Հակասությունների թիրախ է դառնում Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսությունը, որը գտնվում էր Լիբանանի մայրաքաղաք Բեյրութում՝ Անթիլիաս արվարձանում: 1940-ական թվականների վերջին և 50-ականների սկզբին փորձեր են արվում Կիլիկիայի կաթողիկոսությունը հակադրել Մայր Աթոռին: Դրանք, շնորհիվ Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոս Գարեգին Ա Հովսեփյանի ընդունած հաստատուն դիրքի ու վճռականության, ձախողվում են:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ինչպե՞ս էր վերաբերվում խորհրդային կառավարությունը Հայոց եկեղեցուն պատերազմից հետո:
2. Հետպատերազմյան տարիներին ի՞նչն է առաջնակարգ տեղ գրավում Գևորգ Զ-ի գործունեության մեջ: Ի՞նչ քայլեր է ձեռնարկում նա Հայկական հարցի վերաբացման համար:
3. Ի՞նչ գործունեություն է ծավալել Գևորգ Զ կաթողիկոսը սփյուռքի հետ կապերն ամրապնդելու և Հայոց եկեղեցին բարեկարգելու համար:
4. 1940-ական թվականների վերջերին ի՞նչ քաղաքականություն էին վարում ԽՍՀՄ պետական մարմինները հայ ժողովրդի և Հայոց եկեղեցու նկատմամբ:
5. Ե՞րբ տոնվեց Վարդանանց դյուցազնամարտի 1500-ամյակը:
6. Ի՞նչ քայլերի է դիմում ԽՍՀՄ-ը հայկական սփյուռքում իր ազդեցությունն ուժեղացնելու համար:
7. Ի՞նչ քայլի դիմեցին ԽՍՀՄ-ի հակառակորդները:

Քննարկենք

1. Ինչո՞ւ խորհրդային իշխանությունը 1940-ական թվականների վերջին փոխեց իր քաղաքականությունը Հայոց եկեղեցու նկատմամբ:
2. Գնահատեք Գևորգ Ջ կաթողիկոսի գործունեությունը:
3. Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո ինչո՞ւ առաջացավ Հայոց եկեղեցու պառակտման վտանգ:

Լրացուցիչ նյութ

ԳԵՎՈՐԳ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՉՈՐԵՔՉՅԱՆ

«Նախահայրերով և անցյալով պարծենալու մենք էլ իրավունք ունենք, սակայն մի՞թե մեր նախնիքն ու մեր անցյալը կարող են մեզ օգնել, երբ մենք զուրկ ենք նոցա առաքինություններից: Ո՛չ մեր նախնյաց հայրենասիրությունը, ո՛չ նոցա հավատն ու երկյուղածությունը և ո՛չ էլ նոցա անձնվիրությունն ունինք: Ո՛չ անցյալի փառքը և ո՛չ էլ ներկայի մարդկային ուժը կարող են օգնել մեզ, եթե ի վերուստ օրհնություն չիջնէ մեզ վրա. դրսից չէ՛, որ գալիս է ազատությունը մեր ժողովրդի համար, այլ՝ ներսի՛ց. աստվածային ճշմարտության ուժն է, որ վերածնում է ժողովրդի հոգին և բերում նրան ազատության:

ՎԱՉԳԵՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ ԼՐԱԳՐՈՂՆԵՐԻՆ
(11 դեկտեմբերի 1992 թ.)

...Ինչպես այլ առիթներով արտահայտվել ենք, մեր օրերին Հայաստանի Հանրապետության պայմաններում այլևս որևէ այժմեություն չունեն հայ սփյուռքում, սովետական կարգերի շրջանում ստեղծված կացություններն ու գործելակերպերը, ի մասնավորի հայ եկեղեցական կյանքի մակարդակի վրա և Մայր Աթոռի և Տանն Կիլիկիո Աթոռի հարաբերություններում: Պարզ է բոլորիս, որ այդ կացություններն ու գործելակերպերն առաջ էին եկել միմիայն սովետական կարգերի առկայության հետևանքով Հայաստանում: Եթե 1956 թ., երբ մենք Բեյրութ գնացինք, Հայաստանն ազգային անկախ պետություն լիներ, Կիլիկիո Աթոռի գահակալի ընտրության առթիվ կստեղծվե՞ր ծանոթ տագնապը մեր եկեղեցու ծոցում:

17. ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑՈՒ ՎԵՐԵԼՔԸ: ՎԱԶԳԵՆ Ա

Բուխարեստի Ս. Հրեշտակապետաց Մայր տաճարը

1955 թվականի սեպտեմբերի 30-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում տեղի ունեցած Ազգային-եկեղեցական ժողովում Ամենայն Հայոց կաթողիկոս ընտրվեց Ռումինիայի հայոց թեմի 47-ամյա առաջնորդ Վազգեն եպիսկոպոս Պալճյանը: Ամենայն Հայոց 130-րդ հայրապետի երկարամյա, գրեթե չորս տասնամյակ տևած կաթողիկոսությունը Հայոց եկեղեցու նորագույն պատմության մեջ համարվում է վերելքի ժամանակաշրջան:

Վազգեն Ա-ի գահակալության վերջին տարիներին փլուզվեց և պատմության ասպարեզից հեռացավ աթեիզմը պաշտոնական գաղափարախոսություն դարձրած Խորհրդային Միությունը: Տասնամյակների ընդմիջումից հետո՝ 1990-1991 թթ., վերականգնվեց հայոց անկախ պետականությունը: Հասարակական և քաղաքական տարուբերումներով հարուստ այդ ժամանակաշրջանում Հայոց եկեղեցին Վազգեն Ա կաթողիկոսի գլխավորությամբ պահպանեց իր սթափ ու հավասարակշռված կեցվածքը՝ մնալով իր ժողովրդի իմաստուն խորհրդատուի և հոգևոր առաջնորդի դերում:

Վազգեն Ա-ի (1955-1994) եկեղեցաշինական և հոգևոր-մշակութային գործունեությունը

Վազգեն Ա Պալճյան

Վազգեն Ա-ն կաթողիկոս դարձավ Խորհրդային Միության համար բեկումնային մի ժամանակաշրջանում, երբ Ի. Ստալինի մահվանից հետո երկրում բարեփոխումներ էին սկսվել: Նոր, բարենպաստ իրավիճակ էր ստեղծվում աշխարհի բազմաթիվ երկրներում սփռված հայության և Խորհրդային Հայաստանի միջև բնականոն հարաբերություններ հաստատելու առումով: Հայրենիք - սփյուռք կապերի նորոգումն ու զարգացումն այսուհետև դառնում է եկեղեցու գործունեության գլխավոր ուղղություններից մեկը: Այս և հաջորդ

տասնամյակներում Վազգեն Ա-ն այդ նպատակով տասնյակ հայրապետական այցելություններ կատարեց տարբեր երկրներ:

Նորընտիր կաթողիկոսը շարունակում է Գևորգ Զ Չորեքչյանի օրոք սկսված եկեղեցու վերականգնումն ու զարգացումը: Հայրապետական օծում ստանալուց չորս օր հետո Վազգեն կաթողիկոսը եպիսկոպոս է ձեռնադրում յոթ վարդապետների և երկու օր անց 12 եպիսկոպոսների ընկերակցությամբ կատարում մեռոնի օրհնություն, որը 30 տարի չէր կատարվել Էջմիածնի Մայր Աթոռում:

Ս. Հովհաննես եկեղեցին

Խոր Վիրապի վանքը

Ս. Զորավոր եկեղեցին

1957 թ. Վազգեն Ա-ի համառ ջանքերի շնորհիվ Մայր Աթոռին վերադարձվեց ազգային հայտնի բարերար Ալ. Մանթաշյանի նվիրատվությամբ կառուցված նոր վեհարանի շենքը: Այն վերանորոգվեց, իսկ հին վեհարանն իր Ծաղկյա դահլիճով վերածվեց թանգարանի: Ձեռնարկվեց Էջմիածնի հոգևոր ճեմարանի նորացման ու դասախոսական կազմի համալրման գործը: Նրա կաթողիկոսության տարիներին իրականություն դարձավ Խրիմյան Հայրիկի երազանքը՝ վերաբացվեց Սևանի հոգևոր դպրանոցը, որը հետագայում կոչվեց Վազգենյան:

Դեռևս իր առաջին կոնդակում Վազգեն կաթողիկոսը գրել է. «Պիտի տքնենք վերանորոգելու մեր հայրենի սրբավայրերը՝ վանքեր ու եկեղեցիներ, որոնք մեր հոգևոր կյանքի սյուներն են և հայ ճարտարապետության փառքի զմայլելի հուշարձանները»: Վեհափառի կարգադրությամբ այդ աշխատանքը կազմակերպելու համար ստեղծվեց հայ անվանի ճարտարապետներից ու գիտնականներից կազմված մի հանձնաժողով, որի պատրաստած նախագծերով վերանորոգվեցին,

նոր շունչ ստացան Մայր Տաճարը, Էջմիածնի (Ս. Հռիփսիմե, Ս. Գայանե և Ս. Շողակաթ), Ս. Գեղարդի և Ս. Խոր Վիրապի վանքերը, Երևանի Ս. Սարգիս, Ս. Հովհաննես, Ս. Զորավոր եկեղեցիները: Եկեղեցական կառույցներ են նորոգվում նաև Մոսկվայում, Դոնի Ռոստովում, Բաքվում և այլ վայրերում: Պատահական չէ, որ ժողովուրդը Վազգեն կաթողիկոսին պատվեց «Շինարար» տիտղոսով:

Վազգեն Ա-ի նախաձեռնությամբ և սփյուռքահայության աջակցությամբ ժամանակակից հրատարակչական տեխնիկայով վերազինվում է Մայր Աթոռի տպարանը, որը հիմնադրվել էր Սիմեոն Ա Երևանցու ջանքերով: Կանոնավոր կերպով շարունակվեց հրատարակվել «Էջմիածին» ամսագիրը: Այն ոչ միայն լուսաբանում էր Մայր Աթոռի և Հայոց եկեղեցու թեմերի կյանքը, այլև հրատարակում անտիպ նյութեր և ուսումնասիրություններ Հայոց պատմության և հայ մշակույթի տարբեր բնագավառների վերաբերյալ: Վեհափառը նախաձեռնում է Նոր Կտակարանի աշխարհաբար թարգմանությունը:

Վազգեն Ա-ի օրոք Մատենադարանին են հանձնվել «Վեհափառի» և «Վեհամոր» Ավետարանները, Զեյթունի Ավետարանը՝ Թորոս Ռոսլինի մանրանկարչությամբ, Թովմա Արծրունու «Պատմություն Արծրունյաց տան» մատյանի միակ ձեռագիր օրինակը և այլ արժեքավոր ձեռագրեր:

Վեհափառ հայրապետի տնօրինությամբ 1984-1991 թվականների ընթացքում գրաբարագետ մասնագետներից բաղկացած աշխատանքային խումբն աշխարհաբար թարգմանեց Աստվածաշնչի ամբողջական բնագիրը:

Եռանդուն քայլեր են արվում նաև միջեկեղեցական հարաբերությունների ընդլայնման ուղղությամբ: 1962 թ. Հայոց եկեղեցին դառնում է Եկեղեցիների համաշխարհային խորհրդի, այնուհետև՝ Եվրոպական եկեղեցիների համաժողովի անդամ: 1970 թ. մայիսին Վազգեն Ա-ն այցելում է Վատիկան և հանդիպում Հռոմի Պողոս Զ պապին: Վեհափառ հայրապետը Հայոց եկեղեցին ներկայացնում է Մոսկվայի, Բեռլինի և Հելսինկիի խաղաղության համաշխարհային համաժողովներին: Խաղաղության և ժողովուրդների միջև արդար հարաբերությունների հաստատման իր ջանքերի համար նա արժանանում է Խաղաղության համաշխարհային խորհրդի Ժոլլիո Կյուրիի անվան և Խաղաղության պաշտպանության խորհրդային կոմիտեի ոսկե մեդալների, այլ շքանշանների ու պարգևների:

Վեհափառ հայրապետի իմաստուն քաղաքականության և Խորհրդային Հայաստանի կառավարության բարեհաճության շնորհիվ բարենպաստ հող ստեղծվեց Հայոց եկեղեցու գոյատևման ու զարգացման համար: Արդյունքում արթնանում էր ժողովրդի ազգային ոգին դեպի եկեղեցին, իր հոգևոր ակունքներն ու անցյալի սրբությունները: Վազգեն Ա կաթողիկոսը մեծա-

պես նպաստեց Սարդարապատի հուշահամալիրի կառուցմանը: Նա հայրապետական կոնդակով 1918 թ. մայիսի 28-ը Հայաստանի պետականության վերականգնման օր հռչակեց:

Ազգային նոր շարժումը և Հայոց եկեղեցին

1988 թ. փետրվարին Լեռնային Ղարաբաղում սկիզբ առավ ազգային-ազատագրական շարժման նոր ալիք, որը մի քանի օրում ոտքի հանեց Հայաստանի և արտերկրի ողջ հայությանը: Արդեն 1988 թ. փետրվարի 25-ին Արցախը Հայաստանի հետ վերամիավորվելու հարցով Վազգեն Ա կաթողիկոսը դիմում է Խորհրդային Միության ղեկավար Մ.Գորբաչովին: Այս և հետագա այլ քայլերով խորհրդային և միջազգային բարձր ատյաններում լսելի է դարձնում արցախահայության ձայնը: Վեհափառ հայրապետն իր հեռագրերով, իսկ հետո նաև այցելությամբ իր զորակցությունն է հայտնում ակադեմիկոս Վիկտոր Համբարձումյանի, Լեռնային Ղարաբաղի ժողովրդական պատգամավորների և հայ անվանի մտավորականների բողոքի գործողությանը Մոսկվայում:

1989 թ. վերահաստատվում է Հայոց եկեղեցու Արցախի թեմը: Եկեղեցիներ են վերաբացվում ու նորոգվում Արցախում և հայրենիքի այլ մասերում: Կյանքի են կոչվում նաև Սյունիքի և Գուգարքի թեմերը:

1988 թ. դեկտեմբերի 7-ին Սպիտակի երկրաշարժը հայ ժողովրդին նոր, դաժան հարված հասցրեց: Հայոց եկեղեցին այդ ծանր օրերին ոչ միայն ձգտում էր բարոյական նեցուկ լինել, այլև նյութական շոշափելի օժանդակություն կազմակերպել: 1989-1991 թթ. երկրաշարժի աղետյալներին, Ադրբեջանից բռնագաղթածներին, զոհված ազատամարտիկների ընտանիքներին, սահմանամերձ գյուղերին, գյուղական դպրոցներին օգնելու համար հանգանակվեց և Մայր Աթոռից տրամադրվեց ավելի քան 10 մլն խորհրդային ռուբլու չափով գումար, մոտ 4000 տոննա ապրանք և մթերք:

Շուշիի Ղազանչեցոց Ս. Ամենափրկիչ եկեղեցին

Ազգային շարժման, հայ ժողովրդի տոկունության ու զոհողությունների շնորհիվ 1990-1991 թթ. սկիզբ դրվեց հայոց անկախ պետականությանը: Կյանքի մայրամուտին իր օրհնած վերջին՝ վեցերորդ մյուռոնը Վազգեն Ա կաթողիկոսն անվանեց Անկա-

Մայր Աթոռի Ավագ խորան

խության մյուռոն: Դրանով Վեհափառ հայրապետն օծեց Մայր Տաճարի Ավագ խորանի «Տիրամայրը մանկան հետ» պատկերը՝ այն անվանելով Անկախության Տիրամայր:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ինչ կարևոր քայլեր կատարվեցին Վազգեն Ա կաթողիկոսի օրոք Մայր Աթոռում:
2. Վազգեն Ա-ի օրոք նորոգվեցին եկեղեցական բազմաթիվ կառույցներ: Թվարկեք դրանցից մի քանիսը:
3. Ինչպիսի՞ տիտղոսով պատվեց ժողովուրդը Վազգեն Ա կաթողիկոսին:
4. Ինչպիսի՞ զարգացում ապրեց Մայր Աթոռի հրատարակչական-տպագրական գործունեությունը Վազգեն Ա կաթողիկոսի հայրապետության տարիներին:
5. Վազգեն Ա-ի օրոք Հայոց եկեղեցին առաջվա պես աջակցում էր ազգային մշակութային արժեքների պահպանմանը: Ինչն է վկայում այդ մասին:
6. Ինչ կարևոր քայլեր ձեռնարկվեցին Վազգեն Ա-ի օրոք միջեկեղեցական և միջազգային կապերի ուղղությամբ:
7. Ինչպե՞ս էր Հայոց կաթողիկոսը ձգտում լսելի դարձնել ժողովրդի ձայնը 1988 թ. սկսված Արցախյան շարժման օրերին:
8. Ինչ միջոցների էր դիմում Հայոց եկեղեցին երկրաշարժից տուժած և բռնագաղթի ենթարկված ժողովրդին աջակցելու համար:

Քննարկենք

1. Ինչն է վկայում Հայոց անկախ պետականության վերականգնման համար պայքարում եկեղեցու մասնակցության մասին: Պատասխանելիս օգտագործեք նաև լրացուցիչ նյութը:

Լրացուցիչ նյութ

Հայոց եկեղեցին Վազգեն Ա-ի օրոք

ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԸ ՈՂՋՈՒՆՈՒՄ Է ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆՈՐԸՆՏԻՐ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԸ

(1990 թ. օգոստոս)

Հարգելի տիար ատենապետ, հարգելի դեպուտատներ՝ երեսփոխաններ, ես գալիս եմ Ս.Էջմիածնից ամենայն հայոց՝ բերելու իմ ողջույնը և օրհնությունը Գերագույն խորհրդի այս նորակազմ, բախտորոշ պատմական նստաշրջանին:

Ինչպես գիտեք, ես իմ տկար ուժերով 130-րդ Հայոց կաթողիկոսն եմ, և այս պահին իմ միտքը գնում է դեպի ետ, վերջին 1700 տարիների ընթացքի ճանապարհին գործած, ապրած, շատ անգամ տառապած, երբեմն նույնիսկ նահատակված կաթողիկոսների հիշատակին: Եվ զգում եմ. այս պահին կանգնած է Ձեր առաջ ոչ թե պարզապես Վազգեն կաթողիկոսը, այլ մեր ողջ պատմության 130 կաթողիկոսները, որոնց պատգամաբերը լինելու ես բախտավորությունը և պատիվը ունեմ: Հայաստանյայց առաքելական եկեղեցին հայ ժողովրդի ազգային եկեղեցին է 1700 տարիներից ի վեր, միակ ազգային եկեղեցին: Հայաստանյայց եկեղեցու պատմությունը, փոթորկալից պատմությունն այս 1700 տարիների ընթացքում համարյա թե համընկնում է հայ ժողովրդի պատմության ճանապարհի հետ: Եվ, հետևաբար, կարծում եմ, որ պատահական երևույթ չէ, և նշանակալից երևույթ է, որ այսօր, երբ մեր ժողովուրդը, երբ մեր հայրենիքը գտնվում է նոր ճանապարհներ որոնելու ճակատագրական կացության մեջ, ներկա է այստեղ նաև Հայոց հայրապետը:

Այսօր իմ բոլոր մտածումները, մաղթանքները և սպասումներն ուզում եմ արտահայտել մեկ ամփոփ բանաձևումով, որն ընդունված է մեր եկեղեցու կյանքում: Այդ է՝ «ազատություն յերկբայականս, միութիւն ի կարևորս և սեր

յընդհանուրս»: Այսինքն՝ ազատություն բոլոր այն հարցերում, որոնք դրվում են ձեր առաջ ի քննություն, ազատություն մտածումի և արտահայտության այն բոլոր հարցերում, որոնք քննարկելի են, որոնք կարիք ունեն լուսաբանվելու, որոնք վիճելի են նույնիսկ: Դա մեր եկեղեցու հին մի բանաձևումներից մեկն է, որ, ինչպես նկատեցիք, լիովին համապատասխանում է մեր օրերի ժողովրդական սկզբունքներին: Երկրորդ՝ միութիւն ի կարևորս: Սա էլ պատմական փորձառության արդյունք է, սիրելի եղբայրներ և քույրեր, որ միանանք հիմնական հարցերի մեջ, որոնք վճռական նշանակություն ունեն մեր ժողովրդի կյանքի ճանապարհը գծելու և ավելի լուսավոր ապագա գտնելու: Ուրեմն բախտորոշ հարցերում պետք է ստեղծվի այդ միությունը, բախտորոշ՝ մեր ազգի գոյատևման, մեր հայրենիքի պաշտպանության և անվտանգության տեսակետից, որովհետև մեր օրերում և նաև գալիք օրերում կարող ենք կանգնել վտանգի առաջ: Հետևաբար, այդ գիտակցությամբ՝ կարևոր, հիմնական նշանակություն ունեցող հարցերի մեջ պետք է լինի միություն, միասնություն: Եվ երրորդ՝ սեր: Սերը, որ մայրն է բոլոր բարիքների մարդկային կյանքում առհասարակ, նաև հասարակական կյանքում: Այս դեպքում սեր ասելով պետք է հասկանանք հատկապես եղբայրությունը: Մենք բոլորս, դուք բոլորդ մեկ ազգի հարազատ զավակներն ենք, ամեն բանից վեր և անկախ բոլոր տեսակետներից և գաղափարական դիրքորոշումներից: Ի սկզբանե մենք մեկ ազգ ենք և, հետևաբար, նույն ազգի զավակներն ենք՝ համախմբված սուրբ Արարատի լանջերի շուրջ հազարավոր տարիներե ի վեր, նախաստեղծման օրերից սկսյալ:

1991 թ. սեպտեմբերի 21-ի՝ ԽՍՀՄ կազմից դուրս գալու մասին անցկացված հանրաքվեի արդյունքների ամփոփումից հետո Հայոց հայրապետի ժողովրդին ուղղված խոսքը (1991 թ. սեպտեմբերի 23)

Հայեր, որ ի Հայաստան և որ ի սփյուռս աշխարհի, արթնացեք
և ուխտեցեք մնալ հավատարիմ ազատն Հայկ Նահապետին և
մեր հոգիների Լուսավորչին ամենասուրբ:
Ողջույն և օրհնություն Հայաստանի ինքնիշխան անկախ
մեր հանրապետության:
Օրհնություն և փառք մեր ազատատենչ ու հավատարիմ անմահ ազգին:

ԳԼՈՒԽ 6 ՎԵՐԱԶԱՐԹՈՆՔԻ ՇՐՋԱՆ

18. ԵԿԵՂԵՑԻՆ ՀԱՅՈՑ ՆՈՐԱՆԿԱԽ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՍՏԵՂԾՄԱՆ ԵՎ ԱՄՐԱՊՆԴՄԱՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ

XX դարի վերջին իրականացավ հայ ժողովրդի նվիրական երազանքը՝ Արցախն ազատագրելու համար ոտքի ելած հայ ժողովուրդը 1991 թ. սեպտեմբերի 21-ին ձեռք բերեց անկախություն:

Հայոց եկեղեցին իր ժողովրդի հետ միասին դարձավ նվաճված հաղթանակների կերտման գործուն մասնակիցը:

Մասնակցությունն Արցախյան ազատամարտին

Առաջին իսկ օրերից բազմաթիվ հոգևորականներ զինվորագրվեցին Արցախյան ազատամարտին: Հայրենի հողն ազատագրելու համար կռվի դաշտ մեկնած հայ հոգևորականներն իրենց ներկայությամբ ազատամարտիկներին էին փոխանցում Ղևոնդ Երեցի, Գարեգին ու Զավեն եպիսկոպոսների ռազմաշունչ ոգին: Մարտից առաջ հոգևորական-ազատամարտիկը ցած էր դնում զենքը և վերցնելով խաչը՝ մկրտում չկնքված մարտիկներին: Այնուհետև միասին նետվում էին պայքարի մեջ: Իրենց անունը փառքով պսակեցին Վահան աբեղա Դավթյանը, Ռաֆիկ սարկավագը, Արմեն դպիր Մովսիսյանը և ուրիշներ: Արցախի ազատագրության գործին մասնակցություն և աջակցություն ցուցաբերելու համար մի շարք հոգևորականներ պարգևատրվեցին. օրինակ՝ հատուկ ծառայությունների համար Աբրահամ եպիսկոպոս Մկրտչյանը պարգևատրվեց «Մայրական երախտագիտություն», Պարգև արքեպիսկոպոս Մարտիրոսյանը՝ «Ս. Գրիգոր Լուսավորիչ», Հովհաննես քահանա Հովհաննիսյանը՝ «Մարտական խաչ» երկրորդ աստիճան, Ռաֆիկ դպիր Խաչատրյանը՝ «Մարտական խաչ» երկրորդ աստիճան, Գրիգոր քահանա Մարկոսյանը՝ «Հատուկ արիության» ԼՂՀ շքանշաններով և մեդալներով:

Արցախին սատարելու նպատակով Հայոց եկեղեցին եռանդուն գործունեություն է ծավալում նաև արտերկրում: 1991-1994 թթ. ընթացքում Վազգեն Ա կաթողիկոսը արցախահայության օրինական իրավունքները պաշտպանելու համար բազմաթիվ դիմումներ է հղում միջազգային հեղինակավոր կրոնական կազմակերպություններին՝ Եկեղեցիների համաշխարհային խորհուրդ, Եվրոպայի եկեղեցիների կոնֆերանս և տարբեր պետությունների ղեկավարներին: Դիմումներից մեկում Վեհափառ հայրապետը գրել է. «Մեր ազգը թե՛ Հայաստանում, թե՛ Արցախում մարտնչում է հանուն կյանքի հաղթության: Այսպես է, որ հինավուրց հայ ազգը մի անգամ ևս պատմության բեմի վրա հանդես է գալիս հպարտ ճակատով, որպես վավերական քրիստոնյա ժողովուրդ»:

1993 թ. հունվարին Մոսկվայում տեղի ունեցած պաշտոնական հանդիպումների ընթացքում Վազգեն Ա-ն խնդրում է տնտեսական աջակցություն ցույց տալ շրջափակման մեջ գտնվող Հայաստանին և Արցախին: Նույն թվականին Հայոց հայրապետը և Ռուս ուղղափառ եկեղեցու առաջնորդ Ալեքսի Բ պատրիարքը հանդես եկան հայ և ռուս ժողովուրդների բարեկամության ամրապնդման, Լեռնային Ղարաբաղի հարցի արդար ու խաղաղ լուծման վերաբերյալ համատեղ հայտարարությամբ:

Հայաստանին և Արցախին օգնության ձեռք են մեկնում Հայոց եկեղեցու նվիրապետական աթոռներն ու թեմերը: 1991-1992 թթ. Արցախին օգնելու նպատակով Մայր Աթոռը ստացել և Արցախին է փոխանցել 2,58 մլն ռուբլի, մեծ քանակությամբ պարենամթերք և այլ ապրանքներ: Միայն 1992 թ. ԱՄՆ-ի երկու թեմերից Արցախին աջակցելու համար հանգանակվել էր 6 մլն դոլար:

Շուշիի Ղազանչեցոց Ս. Ամենափրկիչ եկեղեցին 1992 թ. մայիսին

Եկեղեցի – պետություն փոխհարաբերությունները

Կարեցարև հանգիստ դեպի Տաթև ուղևորության ճանապարհին, 1989 թ.

1991 թ. հունիսի 17-ին, Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհուրդն ընդունեց «ՀՀ-ում խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» օրենքը: Հայաստանյայց առաքելական եկեղեցին ճանաչվեց որպես հայ ժողովրդի ազգային եկեղեցի, իսկ պետությունը պարտավորվում էր չմիջամտել նրա ներքին կյանքին, չխոչընդոտել ազգային եկեղեցուն ազատ քարոզելու և տարածելու իր դավանանքը հանրապետությունում: Օրենքում Հայոց եկեղեցուն իրավունք էր տրվում վերստեղծելու իր պատմական ավանդույթները, կառուցվածքը, կազմակերպությունները, թեմերն ու համայնքները, կառուցելու նոր եկեղեցիներ, նպաստելու հայ ժողովրդի հոգևոր կրթությանն ու բարոյական կատարելագործմանը:

Հայաստանի Հանրապետության առաջին նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանը նախագահական երդում տվեց՝ ձեռքը դնելով VII դարի պահպանված Վեհամոր Ավետարանի վրա: Երդման արարողության ժամանակ ալեզարդ Վազգեն Ա կաթողիկոսն օրհնեց և հաջողություն մաղթեց նորընտիր նախագահին:

Պատմության գիրկն անցան խորհրդային տարիների բռնություններն ու սահմանափակումները: Հայոց եկեղեցին Մայր հայրենիքում հնարավորություն ստացավ բազմադարյան փորձություններից հետո շարունակելու իր պատմական առաքելությունը: Նորանկախ պետականության ամրապնդմանն ուղղված յուրաքանչյուր ձեռնարկ արժանանում էր Հայոց եկեղեցու ամենագործուն աջակցությանը:

Հայոց եկեղեցին պաշտպանեց «Հայաստան» համահայկական հիմնադրամ ստեղծելու պետական իշխանությունների նախաձեռնությունը:

1992 թ. մարտի 17-ի կոնդակով Վազգեն կաթողիկոսը համայն հայությանը կոչ էր անում մասնակցել և լայն աջակցություն ցույց տալու «Հայաստան» հիմնադրամին: Միաժամանակ համահայկական նոր կառույցին սատարելու կոնդակով հանդես է գալիս նաև Մեծի Տանն Կիլիկիո Գարեգին Բ կաթողիկոսը:

Վազգեն Ա-ն և Գարեգին Բ-ն դառնում են «Հայաստան» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անդամներ:

1994 թ. հունիսին հայրենանվեր հոգևոր-եկեղեցաշինական և գիտամշակութային գործունեության համար Վազգեն կաթողիկոսն առաջինն արժանացավ Հայաստանի Ազգային հերոսի բարձրագույն կոչմանն ու «Հայրենիք» շքանշանին:

Ներեկեղեցական կյանքը

Եկեղեցու կյանքում սկսվում է գործունեության նոր շրջան: 1991 թ. Վազգեն կաթողիկոսը հաստատեց Գերագույն հոգևոր խորհրդի և եպիսկոպոսական ժողովի կողմից ներկայացված «Ներքին թեմերի եկեղեցական կանոնադրությունը»: Հայաստանում և սփյուռքում շուտով, ավանդական կարգի համաձայն, վերակազմակերպվեց Հայոց եկեղեցու վարչական կառույցը:

Աստիճանաբար իրենց գործունեությունն էին վերականգնում խորհրդային տարիներին արգելված եկեղեցասեր կազմակերպություններն ու միությունները, մանկական կրոնական երգչախմբերը: 1990 թ. Վազգեն կաթողիկոսի նախաձեռնությամբ կազմակերպվում են դասընթացներ այն ուսուցիչների համար, ովքեր վերաբացվող կիրակնօրյա դպրոցներում դասավանդելու էին կրոնի պատմություն: Անգործության մատնված նախկին պիոներ պալատների մի մասը դարձան Հայորդյաց տներ: Հայոց եկեղեցու հովանավորությամբ բազմաթիվ մանուկներ հնարավորություն էին ունենում հոգևոր դաստիարակություն ստանալու, երգել, պարել, ասեղնագործել սովորելու և այլն:

Մեծ թափով վերականգնվում էին կիսաքանդ եկեղեցիները, կառուցվում էին նորերը: Հայոց աշխարհի հեռու և մոտ գյուղերում, քաղաքներում կրկին աշխուժանում էր հոգևոր կյանքը, լսվում էր հայկական եկեղեցիների զանգերի ղողանջը:

Արցախի նորաստեղծ թեմում, որտեղ խորհրդային տարիներին փակվել էին բոլոր եկեղեցիները, 1992 թ. արդեն գործում էին երկու վանք և երեք եկեղեցի: Մայր Աթոռն աշխույժ գործունեություն ծավալեց նաև սփյուռքի գաղթավայրերում: Նոր թեմեր ստեղծվեցին արտաշխարհի հայաշատ երկրներում: Օրինակ՝ Հայոց եկեղեցու թեմեր ձևավորվեցին Գերմանիայում և Շվեյցարիայում:

1990-1994 թթ. ամրապնդվում են Մայր Աթոռի և Կիլիկիո կաթողիկոսության փոխադարձ կապերը: Գարեգին Բ-ի բազմաթիվ այցելություններն Հայաստան և Ամենայն Հայոց կաթողիկոսի հետ հանդիպումները մեծապես նպաստեցին հարաբերությունների ջերմացմանը:

Ամրապնդվեցին նաև Մայր Աթոռի կապերը քրիստոնեական մյուս եկեղեցիների հետ: 1994 թ. ապրիլին Էջմիածին ժամանեց Հռոմի Հովհաննես Պողոս II պապի նվիրակը, ով Վեհափառ հայրապետին փոխանցեց Ս. Թադեոս և Ս. Բարդուղիմեոս առաքյալների մասունքներն ու Հռոմի պապի ուղերձը:

Հարցեր և առաջադրանքներ

1. Հայոց եկեղեցին ինչ մասնակցություն է ունեցել Արցախյան ազատամարտին:
2. Արցախին օգնելու նպատակով ինչ քայլեր ձեռնարկեց Վազգեն Ա կաթողիկոսը:
3. Երբ ընդունվեց և ինչ հարցեր էր կարգավորում խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին օրենքը:
4. Եկեղեցի – պետություն համագործակցության մասին վկայող ինչ փաստեր կարող եք նշել:
5. Ներկայացրեք Հայոց եկեղեցու ներքին կյանքը կարգավորելու նպատակով Մայր Աթոռի ծավալած գործունեությունը:

Քննարկենք

1. Անհրաժեշտ էր արդյոք 1991 թ. հունիսի 17-ի օրենքի ընդունումը: Հիմնավորեք ձեր տեսակետը:
2. Համեմատելով նախորդ շրջանի հետ՝ ցույց տվեք, թե Հայոց եկեղեցու գործունեության համար ինչ նոր հնարավորություններ ստեղծվեցին 1990-ական թվականների սկզբներին:

Firefox https://ebooks.bonee.net/fumf/zqdt/

ՎԵՀԱՄՈՐ ԱՎԵՏԱՐԱՆԸ

«Վեհամոր Ավետարանը» ամբողջական հնագույն Ավետարանն է հայերեն ձեռագրերի շարքում: Այն թվագրվում է 7-րդ դարով: Ձեռագիրը երկար ժամանակ պահպանվել էր Գանձակի շրջանի Բանանց գյուղում: Վանքում գտնվելու տարիներին Ավետարանը, իր հնության և զորության պատճառով, կնքվել է «Ծեր» և «Պահապան» անուններով: Դրանից հետո այն տարվել է Գանձակի Սբ. Գրիգոր եկեղեցի, որտեղից էլ 1975 թվականին Ադրբեջանի թեմի առաջնորդ Վահան եպիսկոպոս Տերյանը բերել է Էջմիածին ու նվիրել Վազգեն Ա Վեհափառին:

Վեհամոր Ավետարան

Վազգեն Ա կաթողիկոսը, գիտակցելով Ավետարանի արժեքը, այն նվիրել է Մատենադարանին: Հենց այստեղ էլ այն ստացել է «Վեհամոր Ավետարան» անունը՝ ի հիշատակ կաթողիկոսի մոր՝ Սիրանույշ Պալճյանի:

Անկախ Հայաստանում «Վեհամոր Ավետարանը» ստացավ պետական խորհրդանիշի իմաստ: Հայաստանի Հանրապետության նախագահները պաշտոնակալման արարողության ժամանակ երդվում են՝ աջն այդ Ավետարանին դրած:

ՎԱԶԳԵՆ Ա ՊԱԼՃՅԱՆ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՊԱՏԳԱՄՆԵՐԻՑ



...Երբ մի ժողովուրդ կանգնած է մնում անցյալի ժառանգության վրա առանց ներկա լիությամբ ու ստեղծագործորեն ապրելու, առանց նոր խոսք ասելու, առանց նոր արժեքներ ստեղծելու նոր ժամանակների տարազով, այդ ժողովրդի առաջ փակվում են դեպի ապագա տանող դռները...

...Երանի այն երիտասարդներին, ովքեր գիտեն ի՞նչ կարդալ, ե՞րբ կարդալ և ինչքա՞ն կարդալ:

...Հայրենիք ստեղծելը հերոսություն է, հայրենիք շենացնելը՝ առաքինություն:

...Կա մեկ հայ ժողովուրդ, կա մեկ Հայ Հայրենիք, կա մեկ ճակատագիր, հետևաբար՝ կա մեկ կամեցողություն և գործելու մեկ ուղղություն:

98 von 122 16.02.2021, 11:19

19. ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑՈՒ ՄԻԱՍՆՈՒԹՅԱՆ ԱՄՐԱՊՆԴՈՒՄԸ: ԳԱՐԵԳԻՆ Ա

1994 թ. մայիսին կնքված զինադադարով հայ ժողովուրդը պահպանեց հերոսական պայքարի գնով ձեռք բերված Արցախի անկախությունը և ազատագրված հայկական տարածքները: Նոր հնարավորություններ ստեղծվեցին Հայոց պետականության կայացման և հետագա զարգացման համար: Աճեց Հայաստանի Հանրապետության միջազգային հեղինակությունը:

Այս ընթացքում փոփոխություններ տեղի ունեցան նաև Հայոց եկեղեցու կյանքում:

Գարեգին Ա Սարգսյանի ընտրությունը

Գարեգին Ա
(1995-1999)

1994 թ. օգոստոսի 18-ին վախճանվեց Վազգեն Ա Ամենայն Հայոց կաթողիկոսը: Ավանդական կարգի համաձայն՝ մինչև Ազգային-եկեղեցական ժողով հրավիրելը տեղի ունեցավ կաթողիկոսական տեղապահի ընտրություն: Կաթողիկոսական տեղապահ ընտրվեց Երուսաղեմի հայոց պատրիարք Թորգոմ արքեպիսկոպոս Մանուկյանը:

1995 թ. ապրիլին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում բացվեց Ազգային-եկեղեցական ժողովը: Համայն հայությունը ներկայացնող պատգամավորների ժողովը պատմական էր, քանի որ այն վեցդարյա ընդմիջումից հետո տեղի էր ունենում հայոց անկախ պետականության պայմաններում:

Ապրիլի 4-ին Մեծի Տանն Կիլիկիո Գարեգին Բ կաթողիկոսն ընտրվեց Ամենայն Հայոց կաթողիկոս (1995-1999)՝ վերանվանվելով Գարեգին Ա Ամենայն Հայոց կաթողիկոս: Նա Ամենայն Հայոց կաթողիկոս ընտրվեց Կիլիկիայի կաթողիկոսության 18-ամյա գահակալի հարուստ փորձառությամբ: Նրա կարճատև, բայց եռանդուն գործունեության տարիներին էլ ավելի ամրապնդվեց Հայոց եկեղեցու ներքին միասնությունը, ընդարձակվեց եկեղեցաշինությունը, ստեղծվեցին հոգևոր-եկեղեցական նոր կառույցներ, սերտացան միջեկեղեցական կապերը:

Եկեղեցի – պետություն համագործակցության ամրապնդումը

Հայաստանի իշխանությունները ողջունեցին Ազգային-եկեղեցական ժողովի արդյունքները և Գարեգին Ա Ամենայն Հայոց կաթողիկոսի ընտրությունը:

Հայոց եկեղեցու բոլոր կառույցները շարունակեցին լայնածավալ աջակցություն ցույց տալ Հայաստանի Հանրապետությանը և Արցախին: Գորիս-Ստեփանակերտ մայրուղու կառուցման համար կազմակերպված հեռուստամարաթոնի ժամանակ Գարեգին Ա-ն ուղերձով դիմեց սփյուռքահայությանը՝ հորդորելով ամեն կերպ աջակցելու այդ չափազանց կարևոր ձեռնարկին և նոր ուժով զորավիգ լինելու Մայր հայրենիքին:

1998 թ. ֆրանսահայության ներկայացուցիչների հետ հանդիպման ժամանակ Արցախյան շարժման տասնամյակի կապակցությամբ Վեհափառ հայրապետը հայտարարեց. «Այսօր մեր գոյամարտը, անկախ մեր ցանկությունից, որքան էլ երկար տևի, ոչ մի դեպքում ընկրկում, նահանջ, թուլացում մենք մեզ չենք կարող թույլատրել: Դա դավաճանություն է Աստծուն, դավաճանություն է հայրենիքին»:

Պետությունը նույնպես աջակցում էր եկեղեցուն՝ նրան վերադարձնելով խորհրդային տարիներին բռնագրավված հաստատությունները, կառույցները, շինությունները:

Հայոց բանակի մարտիկների հոգևոր-կրոնական կարիքները բավարարելու նպատակով երկրի զինված ուժերում ստեղծվեց հոգևոր ծառայություն (1998 թ.), որը գլխավորում է ՀՀ Զինված ուժերի հոգևոր առաջնորդը:

Եկեղեցու ներքին միասնության ամրապնդումը: Հոգևոր-մշակութային գործունեության ընդլայնումը

Գարեգին Ա կաթողիկոսը շարունակեց Հայոց եկեղեցու ներքին միասնությունն ամրապնդելու Վազգեն Ա-ի քաղաքականությունը: Նա բազմաթիվ այցելություններ կատարեց նվիրապետական աթոռներ ու թեմեր: 1995 թ. հունիսին Ամենայն Հայոց կաթողիկոսի ձեռամբ օծվեց Մեծի Տանն

Արենիի Ս. Աստվածածին եկեղեցին

Սևանա կղզու Առաքելոց եկեղեցին

Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոս Արամ Ա Քեշիշյան

Ցեղասպանության զոհերի հիշատակը հավերժացնող մատուռը Դեր-Զորում

Կիլիկիո նորընտիր կաթողիկոս Արամ Ա-ն: Սա պատմական կարևոր իրադարձություն էր Հայոց եկեղեցու կյանքում, որովհետև 1956 թ. հետո Վազգեն Ա-ն չէր մասնակցել Կիլիկիո կաթողիկոսների ընտրության և օծման արարողություններին: Իր ելույթում Գարեգին Ա-ն մեկ անգամ ևս կարևորեց «մեկ ազգ, մեկ հայրենիք, մեկ եկեղեցի» գաղափարը:

Սերտացան նաև Մայր Աթոռի հարաբերությունները Երուսաղեմի և Կ.Պոլսի հայոց պատրիարքությունների հետ:

Գարեգին Ա-ի կաթողիկոսության տարիներին վերանորոգվեցին տասնյակ եկեղեցիներ ու վանքեր, կառուցվեցին նորերը: Ամբողջությամբ վերակառուցվեցին հռչակավոր Նորավանքի, Գորիսի, Արենիի, Սևանա կղզու եկեղեցիները և այլն:

Վերակազմակերպվեց նաև Հայոց եկեղեցու թեմական կառուցվածքը: Այն համապատասխանեցվեց ՀՀ նոր վարչատարածքային բաժանմանը, հաստատվեց 8 թեմ:

Ընդլայնվեցին նաև Հայոց եկեղեցու հոգևոր-մշակութային գործունեության շրջանակները: Հայոց հայրապետի ջանքերով Երևանի պետական համալսարանում հիմնվեց Աստվածաբանության ֆակուլտետ:

Այս աշխատանքները նոր ծավալներ ու բովանդակություն ստացան՝ կապված քրիստոնեությունը Հայաստանում պետական կրոն հռչակվելու 1700-ամյակի հետ: Մոսկվայում, Կրեմլում կազմակերպված «Հայ եկեղեցու գանձերը» ցուցահանդեսը մի քանի օրում դիտեց 20 հազար մարդ: 1997 թ. Օշականում կառուցվեց Ս. Մեսրոպ Մաշտոց դպրատունը: Այս գիտամշակութային կենտրոնում պետք է հավաքվեր Ս. Մեսրոպ Մաշտոցի, Ս. Սահակ Պարթևի և մյուս թարգմանիչ վարդապետների գրական ժառանգությունը: Կանոնավոր լույս էր տեսնում Մայր Աթոռի պաշտոնական ամսագիրը՝ «Էջմիածին» հանդեսը:

Գորիսի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին

Նորավանք

Ավանդաբար Հայոց եկեղեցու առաջնորդները մեծ ուշադրություն և միջոցներ են հատկացրել մարդասիրական ու բարեգործական ձեռնարկներին: 1997 թ. դեկտեմբերին Մայր Աթոռի հովանավորությամբ Էջմիածնի հիվանդանոցում բացվեց մանկաբուժական բաժանմունք: Ծերերի, կարիքավորների համար հիմնվեցին նոր անվճար ճաշարաններ: Եկեղեցին մեծ օգնություն էր ցույց տալիս բնակչության անապահով ու անպաշտպան խավերին:

Եկեղեցու միջազգային հեղինակության աճը

Աճեց Հայոց եկեղեցու միջազգային հեղինակությունը, սերտացան միջեկեղեցական կապերը:

Այդ կապերն ամրապնդելու նպատակով Գարեգին Ա-ը բազմաթիվ այցելություններ կատարեց քրիստոնեական մյուս եկեղեցիներ: 1997 թ. Մեծ Բրիտանիայում Հայոց եկեղեցուն դավանակից Արևելյան եկեղեցիները (ղպտի, եթովպական, հնդիկ, ասորի) Գարեգին կաթողիկոսին խնդրում են էկումենիկ* հարցերի հետ կապված հանդես գալ միասնական տեսակետով:

Համագործակցության ընդունելի ձևեր հաստատելու համար 1996 թ. Գարեգին Ա-ն Վատիկանում հանդիպեց Հռոմի պապին: Հաջորդ հանդիպումը տեղի ունեցավ

1999 թ. Հայոց հայրապետը ՀՀ նախագահ Ռ. Քոչարյանի և Հռոմի պապի հետ նախագահեց հայոց մկրտության 1700-ամյակին նվիրված «Հռոմ - Հայաստան» ցուցահանդեսի բացմանը:

Ամրապնդվեցին Հայոց եկեղեցու դիրքերը Եկեղեցիների համաշխարհային խորհրդում: 1998 թ. Կիլիկիո կաթողիկոս Արամ Ա-ն վերընտրվեց այդ կազմակերպության ատենապետ:

Քրիստոնեության 1700-ամյակի հետ կապված՝ միջազգային ասպարեզում մեծացել էր հետաքրքրությունը Հայոց եկեղեցու նկատմամբ:

Գարեգին Ա կաթողիկոսը մեծ հեղինակություն ու հարգանք էր վայելում արտերկրի եկեղեցական, պետական, քաղաքական շրջանակներում: Մեծ Բրիտանիայում Հայոց հայրապետին ընդունեց Եղիսաբեթ II թագուհին: Մեծ Բրիտանիայի պառլամենտի Լորդերի պալատում Գարեգին Ա-ն դասախոսություն կարդաց «Ազգ, որ չի ուզում մեռնել» թեմայով: Վեհափառ հայրապետը փայլուն հռետոր էր, խոսքի մեծ վարպետ, բազմաթիվ գրքերի ու աշխատությունների հեղինակ:

Հարցեր և առաջադրանքներ

1. Երբ Գարեգին Ա-ն ընտրվեց Ամենայն Հայոց կաթողիկոս:
2. Փաստերով հիմնավորեք, որ Գարեգին Ա կաթողիկոսի օրոք ամրապնդվեց եկեղեցի – պետություն համագործակցությունը:
3. Հայոց եկեղեցու նվիրապետական աթոռների և թեմերի միջև ինչպիսի՞ փոխհարաբերություններ հաստատվեցին: Այսօր ի՞նչ թեմեր են գործում Հայաստանի Հանրապետությունում:
4. Հայոց եկեղեցին հոգևոր-մշակութային ի՞նչ ձեռնարկներ իրականացրեց 1995-1999 թվականներին:
5. Որտե՞ղ և ի՞նչ նպատակով հիմնվեց Ս. Մեսրոպ Մաշտոց դպրատունը:
6. 1997 թ. Արևելյան եկեղեցիներն ի՞նչ խնդրանքով դիմեցին Գարեգին Ա կաթողիկոսին:

Առաջադրանքներ

1. Քննարկեք և ապացուցեք, որ Հայոց եկեղեցու միջազգային հեղինակությունը 1990-ական թվականներին իսկապես աճել էր:
2. Գնահատեք Գարեգին Ա կաթողիկոսի գործունեությունը:

Բառարան

Էկումենիկ (միջեկեղեցական) շարժում – քրիստոնեական եկեղեցիների միավորմանն ուղղված շարժում:

Firefox https://ebooks.bonee.net/fumf/zqdt/

ԳԱՐԵԳԻՆ Ա ՀԱՅՐԱՊԵՏԻ ՊԱՏԳԱՄՆԵՐԻՑ

...Բարոյական առողջ սկզբունքներէ հեռացած ազգ մը ո՛չ հողով կը փրկուի և ո՛չ ալ բանակով: Բարոյական անկումը նախադուռն է մարդոց և ազգերու կործանման, պատճառը՝ խռովութեան ու պատերազմի, քանդումի և աւերածութեան:

...Ահաւասիկ չորս հիմնական ճշմարտութիւններ՝ Եկեղեցի, Հայրենիք, Լեզու և Հայ Դատ: Բոլորս պէտք է այս չորսին մէջ միանանք և այս չորսով ամրանանք, որպէսզի կարենանք աշխարհին փաստել, որ մեր թշնամիին խաղը ձախողած է: ...Ողջ մեռնիլը աւելի դառն է, աւելի սոսկալի, քան իրական մահը: Տէր Զօրի նահատակները մեռած ողջեր են. մենք չդառնանք ողջ մեռելներ կեանքին մէջ:

...Տարբեր կրնանք ըլլալ իրարմէ, բայց ո՛չ հակադիր իրարու, տարակարծիք կրնանք ըլլալ, բայց ոչ թշնամանող իրարու: Ամէն տեսակի ու չափի պառակտում ուրախութեան քրքիջ է մեր բոլոր թշնամիներուն և տրտմութեան դառն կսկիծ մեր նահատակներուն:

...Չմոռնա՞նք, սիրելի՞ք, ուր ալ ըլլանք, նո՛յն արիւնը կը կրենք, ուր ալ ապրինք, նո՛յն անցեալի ժառանգորդն ենք, ուր ալ շնչենք, նո՛յն ապագային նայող ճամբորդն ենք այս աշխարհի մէջ: ...Քայլ պահենք աշխարհին հետ, առանց սակայն մեր ճամբէն դուրս գալու...: Աչքի բիբին պէս պահենք այն, ինչ որ հայ կ'ընէ մեր մէջ:

...Քրիստոնէութիւնը ԱՂ եղաւ մեր ժողովուրդի հոգեկան կեանքի համար: Եւ Հայաստանեայց Եկեղեցին հանդիսացաւ ԱՂԱՄԱՆԸ:

...Մեր Եկեղեցին հոգին է եղած մեր ժողովրդին ու ժողովուրդը իր կարգին՝ մարմինն անոր: ...Հայութիւնը ծնունդ է այս երկուքին ներդաշնակութեան:

...Մեր սուրբ եկեղեցին մեզ համար հպարտութեան առիթ է: Վաւերական և արդար կը լինի մեր հպարտութիւնը սակայն, երբ նրանից անբաժան լինեն մեր պարտքի գիտակցութիւնը և մանաւանդ նուիրումի ոգին և գործնական մասնակցութիւնը:

104 von 122 16.02.2021, 11:19

Firefox https://ebooks.bonee.net/fumf/zqdt/

20. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՐՈՆԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԸ

Խորհրդային Միության փլուզումից և Հայաստանի անկախացումից հետո նպաստավոր պայմաններ ստեղծվեցին նաև կրոնական մյուս համայնքների համար:

1991 թ. ՀՀ-ում ընդունված խղճի ազատության մասին օրենքը կարգավորում է նաև կրոնական մյուս կազմակերպությունների գործունեությունը, սահմանում նրանց պետական գրանցման կարգը, իրավունքներն ու պարտականությունները, արգելում հոգեորսությունը*: Օրենքի համաձայն՝ այս կրոնական կազմակերպություններն իրավունք ունեն գործել միայն իրենց համայնքների շրջանակներում:

XX դարի 80-ական թվականների վերջերից Հայաստանում իրենց գործունեությունն աշխուժացրին Հայ կաթողիկե (կաթոլիկ) և Հայ ավետարանական եկեղեցիները:

Հայ առաքելական եկեղեցին, ի դեմս Վազգեն Ա վեհափառի, ողջունեց Հայ կաթողիկե և Հայ ավետարանական եկեղեցիների գործունեությունը՝ ի սպաս իրենց համայնքների անդամների: Միաժամանակ Հայոց հայրապետը նրանցից պահանջեց հարգել Հայոց եկեղեցու կարգը, ավանդույթները և պատմական առաքելությունը Մայր հայրենիքում:

Հայ կաթողիկե եկեղեցի

Ինչպես գիտենք, XIX դարի 30-ական թվականներին կաթոլիկությունը որոշ տարածում գտավ Արևելյան Հայաստանի հյուսիսային շրջաններում և Ջավախքում: Կաթոլիկ համայնքներ առաջացան Շիրակում, Տաշիրում, Լոռիում: XIX դարի վերջին և XX դարի սկզբներին Հռոմի պապը Կովկասի կաթոլիկների համար ստեղծեց եկեղեցական կազմակերպություն և նշանակեց հոգևոր կառավարիչ: Հայաստանում խորհրդային կարգեր հաստատվելուց հետո հայ կաթոլիկները նույնպես ենթարկվեցին հալածանքների ու բռնությունների:

Բեյրութի Ս. Գրիգոր Լուսավորիչ հայ կաթողիկե եկեղեցին

105 von 122 16.02.2021, 11:19

1931 թ. Հայ կաթողիկե եկեղեցու պատրիարքական աթոռը կրկին հաստատվեց Լիբանանում գտնվող Ջմմառի վանքում:

1990-ական թթ. վերջին, Հայաստանի անկախացման նախօրյակին, Հայ կաթողիկե եկեղեցու ներկայացուցիչները նույնպես աշխուժացրին իրենց գործունեությունը Հայաստանում:

1991 թ. Հռոմի պապի որոշումով կազմավորվեց Հայաստանի, Վրաստանի և Արևելյան Եվրոպայի թեմը, որի առաջնորդարանը գտնվում է Գյումրի քաղաքում: Թեմի առաջնորդ նշանակվեց Ներսես արքեպիսկոպոս Տեր-Ներսիսյանը: Թեմում գործում են Շիրակի մարզի մի քանի գյուղերի (Փանիկ, Արևիկ, Ազատան, Մեծ Սեպասար) եկեղեցիները: Գործող եկեղեցիներ կան նաև Ջավախքի մի շարք գյուղերում: Գյումրիում բացվել է Ներսիսյան դպրեվանք-ընծայարանը, Աշոցքում կառուցվել է «Տիրամայր Նարեկի» հիվանդանոցը:

2000 թ. Մխիթարյան միաբանության Վենետիկի և Վիեննայի երկու հաստատությունները պատմական որոշում ընդունեցին՝ միավորվել և ստեղծել Մխիթարյան միացյալ միաբանություն:

Հայաստանում քրիստոնեությունը որպես պետական կրոն հռչակվելու 1700-ամյակի տոնակատարություններին մասնակցեց նաև Հռոմի պապ Հովհաննես Պողոս Բ-ն: 2001 թ. սեպտեմբերի 25-27-ը կաթոլիկ եկեղեցու առաջնորդը պատմության մեջ առաջին անգամ այցելեց ամենահին քրիստոնյա պետություն:

Հայ ավետարանական եկեղեցի

Հայ ավետարանական եկեղեցին բողոքականության հայազգի հետևորդների եկեղեցին է:

Բողոքականության գաղափարներն արևելահայության մեջ որոշ տարածում գտան XIX դ. սկզբներին: Դրան նպաստել է Ղարաբաղում և Շամախիում հաստատված ամերիկացի և եվրոպացի բողոքական միսիոներների գործունեությունը:

XIX դ. վերջին և XX դ. սկզբներին ավետարանական փոքրաթիվ համայնքներ են ստեղծվում Երևանում և Անդրկովկասի մի շարք հայաշատ քաղաքներում: Ցարական կառավարությունը 1914 թ. պաշտոնապես ճանաչում է Հայ ավետարանական եկեղեցիների միությունը:

1930-ական թվականներին Խորհրդային Միությունում արգելվում է նաև Հայ ավետարանական համայնքների գործունեությունը:

1991 թ. Հայաստանում սկսեց գործել Ամերիկայի Հայ ավետարանական ընկերության երևանյան գրասենյակը: Հայ ավետարանական եկեղեցին Հայաստանի Հանրապետությունում պաշտոնապես գործելու իրավունք է

Ստեփանավանի ավետարանական եկեղեցին

ստացել 1994 թ.: Հայ ավետարանական գործող եկեղեցիներ կան Երևանում, Վանաձորում և Ստեփանավանում: Հայ ավետարանական եկեղեցին Հայաստանում հիմնել է Աստվածաբանական ճեմարան և հրատարակում է «Հայաստանյայց ավետարանական եկեղեցի» հանդեսը:

Տարաբնույթ կրոնական հոսանքներ

XX դարի 80-ական թվականների վերջին և 90-ական թվականներին Հայաստանի Հանրապետություն մուտք գործեցին նաև տարաբնույթ կրոնական հոսանքներ, տոտալիտար (ամբողջատիրական) աղանդավորական շարժումներ: Դրանց ներկայացուցիչները, օգտվելով Հայաստանում ստեղծված սոցիալ-տնտեսական և բարոյահոգեբանական ծանր վիճակից, միսիոներական ակտիվ գործունեություն ծավալեցին: Նրանք ժողովրդի մեջ տարածում էին աշխարհի մոտալուտ վախճանի, «նոր մարգարեների» հայտնվելու, ընտանիքի, ազգի, պետության վերաբերյալ «յուրահատուկ» տեսակետներ, կոչ անում հրաժարվել զենքից և այլն: Այդ քարոզները հատկապես Արցախյան ազատամարտի պայմաններում խիստ վնասակար էին և, բնականաբար, առաջ բերեցին հայ հասարակության դժգոհությունն ու վրդովմունքը:

Բացի այդ, տեղի էին ունենում մարդկանց հոգեորսության բազմաթիվ դեպքեր, ինչը խստորեն արգելված է «ՀՀ խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» օրենքով:

Այս ամենը չէր կարող չառաջացնել Հայաստանի իշխանությունների մտահոգությունը: 1992 թ. դեկտեմբերին հրապարակվեց հանրապետության նախագահի հրամանագիրը, որտեղ ասված է. «Հանրապետության տարածքում իրենց աշխատանքն են աշխուժացրել օտարերկրյա մի շարք կրոնական կազմակերպություններ, որոնց գործունեությունը խախտում է բարոյահոգեբանական մթնոլորտը հանրապետությունում, անհարգալից վերաբերմունք սերմանում զինվորական ծառայության նկատմամբ ...»: Դա մի փորձ էր կասեցնելու այդպիսի անօրինական գործողությունները և կարգավորելու իրավիճակը հանրապետության կրոնական դաշտում:

Սակայն նորամուտ կրոնական կազմակերպություններից մի քանիսը

կարողացան հայ հասարակության մեջ ձեռք բերել որոշ կողմնակիցներ, հետևորդներ և կազմավորել համայնքներ:

Հարցեր և առաջադրանքներ

1. Վերհիշեք, թե երբ է առաջացել Հայ կաթողիկե եկեղեցին: Նորանկախ Հայաստանում ինչ գործունեություն է ծավալել հայ կաթողիկե համայնքը: Ո՞վ է այդ համայնքի առաջնորդը:
2. Ե՞րբ է ստեղծվել Մխիթարյան միացյալ միաբանությունը:
3. Ինչո՞վ էր բացառիկ Հռոմի պապի 2001 թ. այցը Հայաստան:
4. Ե՞րբ է Հայ ավետարանական եկեղեցին պաշտոնապես հաստատվել Հայաստանում:
5. Ի՞նչ մասնակցություն ունի Հայ ավետարանական եկեղեցին Հայաստանի հոգևոր-կրթական կյանքին:

Քննարկենք

1. Ինչո՞ւ է անհրաժեշտ օրենսդրորեն կարգավորել կրոնական տարբեր համայնքների և հոսանքների գործունեությունը Հայաստանում: Հիմնավորեք ձեր տեսակետը:

Բառարան

Հոգեորսություն – որևէ կրոնական հոսանքի կողմից առանց համաձայնության և հաճախ նյութական միջոցների կիրառմամբ հետևորդների հավաքագրում մեկ այլ ավանդական կրոնի հետևորդների միջավայրից:

Լրացուցիչ նյութ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Հոդված 18.1. Հայաստանի Հանրապետությունում եկեղեցին անջատ է պետությունից:

Հայաստանի Հանրապետությունը ճանաչում է Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցու՝ որպես ազգային եկեղեցու բացառիկ առաքելությունը հայ ժողովրդի հոգևոր կյանքում, նրա ազգային մշակույթի զարգացման և ազգային ինքնության պահպանման գործում: ...

21. ԳԱՐԵԳԻՆ Բ ՆԵՐՍԻՍՅԱՆ: ՎԵՐԵԼՔԻ ՏԱՐԻՆԵՐ

Հայոց 132-րդ հայրապետի ընտրությունը

Գարեգին Բ

Մայր Աթոռ Ս. Էջմիածնում 1999 թ. հոկտեմբերի 26-28-ը տեղի ունեցած Ազգային եկեղեցական ժողովում Ամենայն Հայոց կաթողիկոս ընտրվեց Արարատյան թեմի առաջնորդական փոխանորդ Գարեգին արքեպիսկոպոս Ներսիսյանը:

Հայոց 132-րդ հայրապետը գահ բարձրացավ հայ ժողովրդի և Հայոց պետության համար խիստ ծանր ու պատասխանատու իրավիճակում: Ընտրության օրը՝ հոկտեմբերի 27-ին, Ազգային ժողովում տեղի ունեցած ահաբեկչության ընթացքում սպանվեցին հանրապետության Ազգային ժողովի նախագահը, վարչապետը, պետական ու քաղաքական այլ գործիչներ: Հայրապետական անդրանիկ կոնդակում (2000 թ. փետրվար) անդրադառնալով հոկտեմբերի 27-ի ողբերգությանը՝ Գարեգին Բ-ն համազգային մտահոգության և անձնական պատասխանատվության կոչով դիմեց յուրաքանչյուրին՝ հաղթահարելու ներքաղաքական լարվածությունը, ամրապնդելու երկրի անվտանգությունն ու կայունությունը՝ որպես հետագա զարգացման ու առաջընթացի հիմնարար պայման:

Անդրադառնալով Հայոց եկեղեցու ներքին կյանքի բարեկարգության խնդրին՝ Վեհափառ հայրապետը նույն կոնդակում կարևորում է եկեղեցական արարողությունները ժողովրդին առավել հասկանալի ու հարազատ դարձնելու անհրաժեշտությունը:

Գարեգին Բ կաթողիկոսի գործունեությունը

Վեհափառ Հայրապետի նախաձեռնությամբ զգալիորեն ընդլայնվել է Մայր Աթոռի տարածքը՝ նախկինում Մայր Աթոռին պատկանող տարածքների վերադարձմամբ:

Նորին Սրբության կարգադրությամբ հիմնովին նորոգվել են Մայր Աթոռի

շինությունները, կառուցվել են Ս. Հրեշտակապետաց եկեղեցին, Դիվանատունը, Ճեմարանի հանդիսությունների սրահը և մարզադահլիճը, «Վաչե և Թամար Մանուկյան» Մատենադարանը, «Գարեգին Ա» կրթական կենտրոնը, Ս. Հովհաննես Մկրտիչ-Ս. Վարդան մատուռ-մկրտարանը, Մայր Աթոռի Էօրնեկեան հանրակրթական դպրոցի շենքը:

Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի գահակալության ընթացքում Հայաստանում և Սփյուռքում կառուցվել, վերանորոգվել և վերականգնվել է շուրջ 250 վանք և եկեղեցի: Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի տարածքում քրիստոնեությունը Հայաստանում պետական կրոն հռչակելու 1700-ամյակի առթիվ կառուցվել է Ս. Էջմիածնի նոր գլխավոր մուտքը, որը կրում է Ս. Գրիգոր Լուսավորչի անունը և Ս. Տրդատ բաց խորանը, որտեղ 2001, 2008 և 2015 թթ. Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի հանդիսապետությամբ տեղի է ունեցել Մյուռոնօրհնեքի սրբազան արարողությունները:

Վեհափառ հայրապետը հովվապետական բազմաթիվ այցեր է իրականացրել Հայոց եկեղեցու թեմեր և Սփյուռքի գաղթավայրեր ազգային-եկեղեցական կյանքը զորացնելու նպատակով:

Գարեգին Բ կաթողիկոսի գործունեության կարևորագույն ուղղություններից են պաշտոնական հանդիպումները քրիստոնեական և այլ եկեղեցիների առաջնորդների ու ներկայացուցիչների, Հայաստանի ու արտերկրի պետական ու քաղաքական գործիչների հետ: Առանձնապես կարևոր էր 2000 թ. նոյեմբերին Հռոմի Հովհաննես-Պողոս Բ պապի հետ հանդիպումը, որի արդյունքում մեծ շուքով Հայաստան տեղափոխվեցին Գրիգոր Լուսավորչի մասունքները:

Վատիկան կատարած այցելության առիթով Հայոց հայրապետը Հռոմի պապի հետ ստորագրել է համատեղ հայտարարություն, որի տեքստում Թուրքիայի կողմից հայերի նկատմամբ իրականացված կոտորածները բնորոշվել են որպես 21-րդ դարի առաջին ցեղասպանություն: Նույն արտահայտությունը վկայակոչվել է նաև Ֆրանցիսկոս պապի կողմից 2015 թ.՝ Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի Վատիկան այցի ժամանակ: Նույն թվականի ապրիլի 23-ին Մայր Աթոռի Սուրբ Էջմիածնի Սուրբ Տրդատ բաց խորանում տեղի ունեցավ հայոց ցեղասպանության 1,5 միլիոն անմեղ զոհերի սրբադասման հանդիսավոր արարողությունը, որն առաջինն էր

Գարեգին Բ-ն և Ռուսիա պատրիարք Կիրիլը

Սրբադասման արարողակարգը Բաց Խորանում

Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու պատմության վերջին 400 տարվա ընթացքում:

2016թ. հունիսին «Այց առաջին քրիստոնյա երկիր» կարգախոսով Հայաստանում ուխտավորաբար հյուրընկալվեց Հռոմի Սրբազան քահանայապետ Ֆրանցիսկոս պապը:

Գարեգին Բ-ի ուշադրության կենտրոնում է հոգևոր կրթության բնագավառը: Դեռևս 1990 թ. նրա նախաձեռնությամբ Սևանի թերակղզում հիմնադրվեց հոգևոր դպրանոց, որը հետագայում կոչվեց Վազգենյան: Վեհափառը մեծ հոգածություն է ցուցաբերում նաև Հառիճի ընծայարանի և Կալկաթայի մարդասիրական ճեմարանի նկատմամբ:

Հովվապետերի ողջույնը Մայր Տաճարում

Նորին Սրբության ջանքերով ՀՀ կառավարության կողմից Գևորգյան Հոգևոր Ճեմարանը ճանաչվել է որպես բարձրագույն ուսումնական հաստատություն՝ Աստվածաբանական համալսարան՝ հետագա տարիներին ստանալով նաև ասպիրանտական կրթություն տալու իրավունքը: Նորին Սրբությունը մեծապես

կարևորում է նաև ճեմարանավարտների կրթության շարունակումն այլ երկրների բարձրագույն ուսումնական հաստատություններում: Հայրապետության առաջին տարիներից սկսյալ՝ քահանայական ձեռնադրություն են ստացել շուրջ 350 հոգևորականներ:

Վեհափառ Հայրապետի ուշադրության ներքո է Եկեղեցու կողմից սոցիալական ծրագրերի արդյունավետ իրագործումն ու աղքատախնամ գործունեության իրականացումը: Գործում են մի շարք բարեգործական ճաշարաններ, ծնողական խնամքից զուրկ երեխաների աջակցության կենտրոններ, անապահով երեխաների խնամքի ցերեկային կենտրոն: Մայր Աթոռի հովանու ներքո գործող «Սուրբ Ներսես Մեծ» հիվանդանոցը Վեհափառ Հայրապետի հոգածությամբ հիմնովին վերանորոգվել է և վերազինվել ժամանակակից բժշկական սարքավորումներով՝ վերանվանվելով «Իզմիրլյան» բժշկական կենտրոն: Երևանում և մարզերում գործում են Հայորդյաց տներ, որտեղ կազմակերպվում է արտադպրոցական մշակութային կրթություն: Կարևոր ձեռքբերումներից է նաև հայ եկեղեցականների սպասավորությունը ՀՀ Զինված ուժերում, ազատազրկման վայրերում, ծերանոցներում և հիվանդանոցներում:

Հայոց հոգևոր վերազարթոնքի նպատակով Նորին Սրբության կողմից իրականացված կարևոր իրագործումներից է օրհնության օրերի հռչակումը՝ Տեառնընդառաջը՝ որպես նորապսակների օրհնության օր, Սուրբ Սարգիս զորավարի տոնը՝ երիտասարդների օրհնության օր, Ծաղկազարդը՝ երեխաների օրհնության օր, Ավետման տոնը՝ որպես մայրության բերկրանքին սպասող կանանց օրհնության օր և այլն: Հաստատվել են նաև Գի-

Վազգենյան հոգևոր դպրանոցը Սևանի թերակղզում

տելիքի օրվան նախորդող կրթության մշակների օրհնության կարգը, Ամանորի գիշերը՝ Նռնօրհնեքի արարողությունը:

Եկեղեցի – պետություն հարաբերությունները

2000 թ. մարտին Հայաստանի Հանրապետության կառավարության և Հայաստանյայց Առաքելական Սուրբ եկեղեցու միջև ստորագրվեց «Մտադրությունների հուշագիր», որով Եկեղեցի – պետություն փոխհարաբերությունների զարգացման համար համագործակցության նոր ուղիներ էին նախանշվում: Հուշագրի շրջանակներում 2000 թ. սեպտեմբերին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի և ՀՀ պաշտպանության նախարարության միջև ստորագրվեց ՀՀ զինված ուժերում Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու հոգևոր ծառայության կանոնադրությունը:

2005 թ. Մայր Աթոռի և ՀՀ Ազգային ժողովի համատեղ աշխատանքի արդյունքում ՀՀ Սահմանադրության մեջ ամրագրվեց, որ Հայաստանի Հանրապետությունը ճանաչում է Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու՝ որպես ազգային Եկեղեցու բացառիկ առաքելությունը հայ ժողովրդի հոգևոր կյանքում, նրա ազգային մշակույթի զարգացման և ազգային ինքնության պահպանման գործում: Սահմանադրությամբ արձանագրվեց Ամենայն Հայոց Կաթողիկոսի՝ Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու գլուխ լինելու և Սուրբ Էջմիածնի՝ Առաքելական Եկեղեցու կենտրոն լինելու իրողությունը: Սահմանադրության մեջ հաստատագրվեց նաև Հայաստանի Հանրապետության և Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու հարաբերությունները կարգավորող օրենքի ընդունման հնարավորությունը: 2007 թ. ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվեց Եկեղեցի – պետություն հարաբերությունները կարգավորող օրենքը: Պետական և հասարակական կառույցների հետ հարաբերությունները կանոնակարգելու համար Դիվանատան կազմում 2008 թ. ստեղծվեց Պետական և հասարակական կառույցների հետ հարաբերությունների գրասենյակը:

Մենք ավարտում ենք Հայոց եկեղեցու պատմության եռամյա դասընթացը: Մտովի անցնելով գրեթե երկու հազար տարվա հեռավորություն ունեցող այդ ճանապարհը՝ համոզված ենք, որ այն թանկ է նաև մեզ՝ ժամանակակիցներիս համար, և մենք ենք ժառանգորդն այն անանց հոգևոր-մշակութային արժեքների, որ ստեղծվել է այդ ճանապարհին Հայոց եկեղեցու և ողջ ժողովրդի կողմից:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ե՞րբ և ո՞վ ընտրվեց հայոց 132-րդ հայրապետ:
2. Ինչպիսի՞ իրավիճակում սկսեց իր գործունեությունը Գարեգին Բ կաթողիկոսը: Ի՞նչ կոչ արեց նա ժողովրդին իր առաջին կոնդակով:
3. Վերջին տարիներին ի՞նչ եկեղեցիներ են վերաբացվել և կառուցվել Հայաստանում ու սփյուռքում: Նշե՛ք մի քանի անուններ:
4. Պաշտոնական ի՞նչ հանդիպումներ է ունեցել Գարեգին Բ-ն արտերկրների պետական ու եկեղեցական ղեկավարների հետ:
5. Գրիգոր Լուսավորչի մասունքները Իտալիայից ե՞րբ տեղափոխեցին Հայաստան:
6. Հայոց եկեղեցու հոգևոր-կրթական ի՞նչ հաստատություններ են գործում Հայաստանում:
7. Ո՞ր իրադարձությամբ ազդարարվեց Հայոց դարձի 1700-ամյա հոբելյանի սկիզբը:

Քննարկենք

1. Ի՞նչ խորհուրդ էր իր մեջ պարունակում Հայոց դարձի հոբելյանական տոնակատարությունը: Ներկայացրե՛ք ձեր խմբի եզրակացությունը:
2. Ի՞նչ նոր բան տվեց ձեզ «Հայոց եկեղեցու պատմություն» դասընթացը: Փորձե՛ք հիմնավորել դրա անհրաժեշտության մասին ձեր տեսակետը:

Firefox https://ebooks.bonee.net/fumf/zqdt/

ԳԱՐԵԳԻՆ Բ ՆԵՐՍԻՍՅԱՆ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՊԱՏԳԱՄՆԵՐԻՑ

...Ի՞նչն է լինելու մեր կյանքի նշանաբանը:

...Դժվարությունների առաջ ծնկե՞լ, թե՞ այդ դժվարությունները հերոսաբար հաղթահարել: Դժվարությունները մերն են, և դժգոհությամբ չենք կարող նրանցից զերծ մնալ ու խուսափել: Դժվարությունները կարող ենք հաղթահարել ոգի և կամք դրսևորելով:

...Տեսա, որ մեր կյանքի դժվարությունները մեծապես հետևանք են առ Աստված մեր ունեցած հարաբերության և դեպի Աստված ունեցած մեր կեցվածքի: Կյանքն օր օրի դժվարանում է և ոչ ուրիշի մեղքով. բացառաբար մեր մեղքով: Քանզի մեր ճանապարհը չի առաջնորդում մեզ դեպի Աստված: Փորձենք մեր կյանքը կազմակերպել՝ Աստծուն և աղոթքին ապավինած:

...Մեր հավատքն անցել է հրի և սրի միջով: Մեր հավատքը մշտապես հաղթություն է պարգևել մեզ, որովհետև մենք հավատացել ենք Ավետարանի խոսքի ճշմարտությանը՝ թե «Որ հաւատասցէ իսպառ, նա կեցցէ»:

...Այո՛, մենք այլևս ապրելով պիտի ապրենք, հաղթելով՝ ապրենք: Հայրենասիրությունը բանաձևելու կարիք չունի. նրանով պիտի ապրես, գործես, արարես:

ՀԱՏՎԱԾ Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱՀԱՏԱԿՆԵՐԻ ՍՐԲԱԴԱՍՄԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹՅԱՆ ՊԱՏԳԱՄԻՑ

(23 ապրիլի, 2015 թ., Սուրբ էջմիածին)

Սիրելի՛ բարեպաշտ ժողովուրդ,

Մենք ամենքս այսօր ականատեսն ենք մեր պատմության հոգևոր վերափոխման, որին մասնակից ենք թե՛ հավաքաբար և թե՛ անհատապես: Ցեղասպանության նահատակների սրբադասումը կենարար նոր շունչ,

115 von 122 16.02.2021, 11:19

շնորհ և օրինություն է բերում եկեղեցական ու ազգային մեր կյանքում: Մենք հավատում ենք, որ մեր ժողովրդի հոգևոր նոր վերածննդի պսակն ենք հյուսում՝ Հայոց ցեղասպանության նահատակներին սրբադասելով: Մեր սուրբ նահատակների հիշատակն այլևս ոչ թե զոհի ու ննջեցյալի հոգեհանգստյան աղոթք է, այլ՝ հաղթանակած ու նահատակության արյամբ սրբագործված անմարմին զինվորների հաղթական օրհներգություն: Այսօր մեր սուրբ նահատակների հավատքի և հայրենյաց սիրո ջերմեռանդ ոգին տարածվում է Դեր Զորից մինչև Սուրբ Էջմիածին և Ծիծեռնակաբերդ, նորանկախ Հայաստանից մինչև աշխարհասփյուռ հայ կյանքի վերածնված անդաստաններ՝ զորացնելով ապրելու անխախտ հավատքով, մեր կյանքի վերազարթոնքի պայծառ տեսիլքով և մեր արդար դատի պաշտպանության աներկբա կամքով:

ԱԹՈՌ ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ[1]

Ա. Ս. Թադէոս առաքեալ 43-66
Բ. Ս. Բարդուղիմէոս առաքեալ 60-68
Գ. Զաքարիա հայրապետ 68-72
Դ. Զեմենտոս հայրապետ 72-76
Ե. Ատրներսեհ հայրապետ 77-92
Զ. Մուշէ հայրապետ 93-123
Է. Շահէն հայրապետ 124-150
Ը. Շաւարշ հայրապետ 151-171
Թ. Ղեւոնդիոս հայրապետ 172-190
Ժ. Մեհրուժան հայրապետ 240-270
1. Տ. Ս. Գրիգոր Լուսաւորիչ 302-325
2. Տ. Ս. Արիստակէս Ա Պարթեւ 325-333
3. Տ. Ս. Վրթանէս Ա Պարթեւ 333-341
4. Տ. Ս. Յուսիկ Ա Պարթեւ 341-347
5. Տ. Փառէն Ա Աշտիշատցի 348-352
6. Տ. Ս. Ներսէս Ա Պարթեւ 353-373
7. Տ. Շահակ Ա Մանազկերտցի 373-377
8. Տ. Զաւէն Ա Մանազկերտցի 377-381
9. Տ. Ասպուրակէս Ա Մանազկերտցի 381-386
10. Տ. Ս. Սահակ Ա Պարթեւ 387-439
11. Տ. Ս. Յովսէփ Ա Հողոցմեցի 440-452
12. Տ. Մելիտէ Ա Մանազկերտցի 452-456
13. Տ. Մովսէս Ա Մանազկերտցի 456-461
14. Տ. Ս. Գիւտ Ա Արահեզացի 461-478
15. Տ. Ս. Յովհաննէս Ա Մանդակունի 478-490
16. Տ. Բաբգէն Ա Ոթմսեցի 490-516
17. Տ. Սամուէլ Ա Արծկեցի 516-526
18. Տ. Մուշէ Ա Այլաբերցի 526-534
19. Տ. Սահակ Բ Ուղկեցի 534-539
20. Տ. Քրիստափոր Ա Տիրառիջցի 539-545
21. Տ. Ղեւոնդ Ա Եռաստեցի 545-548
22. Տ. Ներսէս Բ Բագրեւանդցի 548-557
23. Տ. Յովհաննէս Բ Գաբեղեան 557-574
24. Տ. Մովսէս Բ Եղիվարդեցի 574-604
25. Տ. Աբրահամ Ա Աղբաթանեցի 607-615
26. Տ. Կոմիտաս Ա Աղցեցի 615-628
27. Տ. Քրիստափոր Բ Ապահունի 628-630
28. Տ. Եզր Ա Փառաժնակերտցի 630-641
29. Տ. Ներսէս Գ Տայեցի (Իշխանեցի) 641-661
30. Տ. Անաստաս Ա Ակոռեցի 661-667
31. Տ. Իսրայէլ Ա Ոթմսեցի 667-677
32. Տ. Սահակ Գ Ձորոփորեցի 677-703
33. Տ. Եղիա Ա Արճիշեցի 703-717
34. Տ. Ս. Յովհաննէս Գ Օձնեցի 717-728
35. Տ. Դաւիթ Ա Արամոնեցի 728-741
36. Տ. Տրդատ Ա Ոթմսեցի 741-764
37. Տ. Տրդատ Բ Դասնաւորեցի 764-767

1 Սույն ցուցակը վերցված է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի եկեղեցական օրացույցից

38. Տ. Սիօն Ա Բաւոնեցի 767-775
39. Տ. Եսայի Ա Եղիպատրուշեցի 775-788
40. Տ. Ստեփաննոս Ա Դունեցի 788-790
41. Տ. Յովաբ Ա Դունեցի 790-791
42. Տ. Սողոմոն Ա Գառնեցի 791-792
43. Տ. Գէորգ Ա Բիւրականցի 792-795
44. Տ. Յովսէփ Բ Փարպեցի 795-806
45. Տ. Դաւիթ Բ Կակաղեցի 806-833
46. Տ. Յովհաննէս Դ Ովայեցի 833-855
47. Տ. Զաքարիա Ա Զագեցի 855-876
48. Տ. Գէորգ Բ Գառնեցի 877-897
49. Տ. Մաշտոց Ա Եղիվարդեցի 897-898
50. Տ. Յովհաննէս Ե Դրասխանակերտցի 898-929
51. Տ. Ստեփաննոս Բ Ռշտունի 929-930
52. Տ. Թէոդորոս Ա Ռշտունի 930-941
53. Տ. Եղիշէ Ա Ռշտունի 941-946
54. Տ. Անանիա Ա Մոկացի 946-968
55. Տ. Վահան Ա Սիւնեցի 968-969
56. Տ. Ստեփաննոս Գ Սեւանցի 969-972
57. Տ. Խաչիկ Ա Արշարունեցի 973-992
58. Տ. Սարգիս Ա Սեւանցի 992-1019
59. Տ. Պետրոս Ա Գետադարձ 1019-1058
60. Տ. Խաչիկ Բ Անեցի 1058-1065
61. Տ. Գրիգոր Բ Վկայասէր[2] 1066-1105
62. Տ. Բարսեղ Ա Անեցի 1105-1113
63. Տ. Գրիգոր Գ Պահլաւունի 1113-1166
64. Տ. Ս. Ներսէս Դ Շնորհալի (Կլայեցի) 1166-1173
65. Տ. Գրիգոր Դ Տղայ 1173-1193
66. Տ. Գրիգոր Ե Քարավէժ 1193-1194
67. Տ. Գրիգոր Զ Ապիրատ 1194-1203
68. Տ. Յովհաննէս Զ Սսեցի 1203-1221
69. Տ. Կոստանդին Ա Բարձրբերդցի 1221-1267
70. Տ. Յակոբ Ա Կլայեցի 1268-1286
71. Տ. Կոստանդին Բ Կատուկեցի 1286-1289
72. Տ. Ստեփաննոս Դ Հռոմկլայեցի 1290-1293
73. Տ. Գրիգոր Է Անաւարզեցի 1293-1307
74. Տ. Կոստանդին Գ Կեսարացի 1307-1322
75. Տ. Կոստանդին Դ Լամբրոնացի 1323-1326
76. Տ. Յակոբ Բ Անաւարզեցի (Կլայեցի) 1327-1341
(դարձեալ կաթողիկոս) 1355-1359
77. Տ. Մխիթար Ա Գոներցի 1341-1355
78. Տ. Մեսրոպ Ա Արտազեցի 1359-1372
79. Տ. Կոստանդին Ե Սսեցի 1372-1374
80. Տ. Պօղոս Ա Սսեցի 1374-1382
81. Տ. Թէոդորոս Բ Կիլիկեցի 1382-1392
82. Տ. Կարապետ Ա Կեղեցի 1392-1404
83. Տ. Յակոբ Գ Սսեցի 1404-1411
84. Տ. Գրիգոր Ը Խանձողատ 1411-1418
85. Տ. Պօղոս Բ Գառնեցի 1418-1430
86. Տ. Կոստանդին Զ Վահկացի 1430-1439
87. Տ. Գրիգոր Թ Մուսաբէկեանց 1439-1441

2 1067-1074 թթ. աթոռակից է եղել Տ. Գէորգ Գ Լոռեցին

88. Տ. Կիրակոս Ա Վիրապեցի 1441-1443
89. Տ. Գրիգոր Ժ Ջալալբէկեանց 1443-1465
90. Տ. Արիստակէս Բ Աթոռակալ 1465-1469
91. Տ. Սարգիս Բ Աջատար 1469-1474
92. Տ. Յովհաննէս Է Աջակիր 1474-1484
93. Տ. Սարգիս Գ Միւսայլ 1484-1515
94. Տ. Զաքարիա Բ Վաղարշապատցի 1515-1520
95. Տ. Սարգիս Դ Վրաստանցի 1520-1536
96. Տ. Գրիգոր ԺԱ Բիւզանդացի 1536-1545
97. Տ. Ստեփաննոս Ե Սալմաստեցի 1545-1567
98. Տ. Միքայէլ Ա Սեբաստացի 1567-1576
99. Տ. Գրիգոր ԺԲ Վաղարշապատցի 1576-1590
100. Տ. Դաւիթ Դ Վաղարշապատցի 1590-1629
101. Տ. Ս. Մովսէս Գ Տաթեւացի 1629-1632
102. Տ. Փիլիպոս Ա Աղբակեցի 1632-1655
103. Տ. Յակոբ Դ Ջուղայեցի 1655-1680
104. Տ. Եղիազար Ա Այնթապցի 1681-1691
105. Տ. Նահապետ Ա Եդեսացի 1691-1705
106. Տ. Աղեքսանդր Ա Ջուղայեցի 1706-1714
107. Տ. Աստուածատուր Ա Համադանցի 1715-1725
108. Տ. Կարապետ Բ Ուլնեցի 1726-1729
109. Տ. Աբրահամ Բ Խոշաբեցի 1730-1734
110. Տ. Աբրահամ Գ Կրետացի 1734-1737
111. Տ. Ղազար Ա Ջահկեցի 1737-1751
112. Տ. Մինաս Ա Անկեցի 1751-1753
113. Տ. Աղեքսանդր Բ Բիւզանդացի 1753-1755
114. Տ. Յակոբ Ե Շամախեցի 1759-1763
115. Տ. Սիմէոն Ա Երեւանցի 1763-1780
116. Տ. Ղուկաս Ա Կարնեցի 1780-1799
117. Տ. Դաւիթ Ե Էնէգէթցի Ղորղանեան 1801-1807
118. Տ. Դանիէլ Ա Սուրմառեցի 1807-1808
119. Տ. Եփրեմ Ա Զորագեղցի 1809-1830
120. Տ. Յովհաննէս Ը Կարբեցի 1831-1842
121. Տ. Ներսէս Ե Աշտարակեցի Շահազիզեան 1843-1857
122. Տ. Մատթէոս Ա Կոստանդնուպոլսեցի Զուհաճեան 1858-1865
123. Տ. Գէորգ Դ Կոստանդնուպոլսեցի Քերեստէճեան 1866-1882
124. Տ. Մակար Ա Թեղուտցի Տէր-Պետրոսեան 1885-1891
125. Տ. Մկրտիչ Ա Վանեցի Խրիմեան 1892-1907
126. Տ. Մատթէոս Բ Կոստանդնուպոլսեցի Իզմիրլեան 1908-1910
127. Տ. Գէորգ Ե Տփղիսեցի Սուրէնեանց 1911-1930
128. Տ. Խորէն Ա Մուրադբէկեան 1932-1938
129. Տ. Գէորգ Զ Զէորեքչեան 1945-1954
130. Տ. Վազգէն Ա Պալճեան 1955-1994
131. Տ. Գարեգին Ա Սարգիսեան 1995-1999
132. Տ. Գարեգին Բ Ներսիսեան 1999

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 3

Գլուխ I.

ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԻՆ XIX ԴԱՐԻ ՍԿԶԲԻՑ ՄԻՆՉԵՎ 1860-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԸ

1. ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԻՆ XIX ԴԱՐԻ ՍԿԶԲԻՆ 5
2. ԱՐԵՎԵԼՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԻԱՑՈՒՄԸ ՌՈՒՍԱՍՏԱՆԻՆ: ՆԵՐՍԵՍ Ե ԱՇՏԱՐԱԿԵՑԻ 12
3. ՑԱՐԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑՈՒ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ 17
4. ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԿՅԱՆՔԸ 1820-1860-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ 21

Գլուխ II.

ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑՈՒ ԿՐԹԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ: ՊԱՅՔԱՐ ՌՈՒՍԱՑՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԵՄ (XIX ԴԱՐԻ ՎԵՐՋ - XX ԴԱՐԻ ՍԿԻԶԲ)

5. ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑՈՒ ԿՐԹԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՁԵՌՆԱՐԿՆԵՐԸ 27
6. ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ԵՎ ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑՈՒ ՊԱՅՔԱՐԸ ՑԱՐԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԴԵՄ: ՄԿՐՏԻՉ Ա ԽՐԻՄՅԱՆ 33

Գլուխ III.

ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԻՆ ԵՎ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԻ ՆՈՐ ՓՈՒԼԸ

7. ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԻՆ ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ 38
8. ԵԿԵՂԵՑՈՒ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ XIX ԴԱՐԻ ՎԵՐՋԻ ԵՎ XX ԴԱՐԻ ՍԿԶԲԻ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԻՆ 43
9. ԳԵՎՈՐԳ Ե ՍՈՒՐԵՆՅԱՆՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԱՑՈՒՄԸ 49
10. ՀԱՅՈՑ ՄԵԾ ԵՂԵՌՆԸ ԵՎ ԵԿԵՂԵՑԻՆ 52

Գլուխ IV.

ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ

11. 1918 ԹՎԱԿԱՆԻ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԵՐԸ ԵՎ ԵԿԵՂԵՑԻՆ 56
12. ԵԿԵՂԵՑՈՒ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ 1918-1920 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ 61

Գլուխ V.

ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԻՆ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՇՐՋԱՆՈՒՄ

13. ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵԿԵՂԵՑՈՒ ՆԿԱՏՄԱՄԲ 66
14. ՀԱԼԱԾԱՆՔՆԵՐԻ ՆՈՐ ՇՐՋԱՆ: ԽՈՐԵՆ Ա ՄՈՒՐԱԴԲԵԿՅԱՆ 71
15. ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԻՆ ԵՐԿՐՈՐԴ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ 76
16. ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ: ԳԵՎՈՐԳ Զ ՉՈՐԵՔՉՅԱՆ 80
17. ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑՈՒ ՎԵՐԵԼՔԸ: ՎԱԶԳԵՆ Ա 85

Գլուխ VI.

ՎԵՐԱԶԱՐԹՈՆՔԻ ՇՐՋԱՆ

18. ԵԿԵՂԵՑԻՆ ՀԱՅՈՑ ՆՈՐԱՆԿԱԽ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՍՏԵՂԾՄԱՆ ԵՎ ԱՄՐԱՊՆԴՄԱՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ 92
19. ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑՈՒ ՄԻԱՍՆՈՒԹՅԱՆ ԱՄՐԱՊՆԴՈՒՄԸ: ԳԱՐԵԳԻՆ Ա 98
20. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՐՈՆԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԸ 104
21. ԳԱՐԵԳԻՆ Բ ՆԵՐՍԻՍՅԱՆ: ՎԵՐԵԼՔԻ ՏԱՐԻՆԵՐ 108

ՎԱՐԴԱՆ ԵՊՍ. ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ, ՎԱՐԴԱՆ ՂԱՆԴԻԼՅԱՆ,
ԱՇՈՏ ՂՈՒԿԱՍՅԱՆ

ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑՈՒ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

9–ՐԴ ԴԱՍԱՐԱՆ

ՎԵՐԱՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Պատվավոր հեղինակներ՝

Պ. Հ. Հովհաննիսյան, *պատմական գիտությունների թեկնածու, պրոֆեսոր*

Ա. Ա. Ղուկասյան, *պատմաբան, պատմության ուսուցիչ*
Ռ. Հ. Գասպարյան, *պատմական գիտությունների թեկնածու*
Վ. Ռ. Պարսամյան, *պատմաբան, պատմության ուսուցիչ*
Ա. Վ. Գյուլբուդաղյան, *պատմաբան, պատմության ուսուցիչ*
Վ. Ս. Ղանդիլյան, *պատմաբան*

Դասագրքի ստեղծմանը և մեթոդական համակարգի մշակմանը մասնակցել են՝
Ա. Խ. Սարգսյանը, *պատմաբան, պատմության ուսուցիչ*
Ա. Ս. Նազարյանը, *պատմական գիտությունների թեկնածու*
Ա.Ա. Ղուկասյանը, *պատմաբան*
Հ. Հ. Մարգարյանը, *պատմաբան*

Լեզվական խմբագիր՝ Ա. Ոսկանյան
Սրբագրիչ՝ Ա. Պապյան
Տեխնիկական խմբագիր՝ Ն. Հայրապետյան
Համակարգչային շարվածքը՝ Հ. Հովհաննիսյանի
Ա. Միրզաթունյանի

Պատվեր՝ 1550: Տպաքանակ՝ 34494:
Թուղթը՝ օֆսեթ: Չափսը՝ 70x100/16: 6 տպ. մամուլ:
Տառատեսակը՝ GHEA Arpi Sans:

Տպագրված է **«Տիգրան Մեծ»** հրատարակչություն ՓԲԸ տպարանում